

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ կառավարության 2015թ ----
որոշման

«ՀՀ կառավարության 2013 թ նոյեմբերի
21-ի 1496-Ա որոշման »

ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ստորագրված

2015թվ. Փետրվարի __-ին

Հետևյալ կողմերի կողմից և միջև

«Որոտան Հիդրոէլեկտրակայանների Համալիր» ՓԲԸ

և

Հայաստանի Հանրապետության

և

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

և

«ՔոնթուրԳլոբալ Տերրա Հոլդինգս Էս-Ա-Էր-Էլ»

և

«Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Բանփնի» Էլ-Էլ-Սի

Amended and restated

ASSET PURCHASE AGREEMENT

dated as of February [●], 2015

between

VOROTAN COMPLEX OF HYDRO POWER PLANTS CJSC

and

THE REPUBLIC OF ARMENIA

and

CONTOURGLOBAL HYDRO CASCADE CJSC

and

CONTOURGLOBAL TERRA HOLDINGS SARL

and

CG SOLUTIONS GLOBAL HOLDING COMPANY LLC

ASSET PURCHASE AGREEMENT	ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
AGREEMENT (this “Agreement”) dated as of February [●], 2015 between:	Սույն Պայմանագիրը («Պայմանագիր») կնքվել է 2015թ. Փետրվարի __-ին հետևյալ կողմերի միջև՝
<p>1. VOROTAN COMPLEX OF HYDRO POWER PLANTS CJSC, a company incorporated in Armenia as a closed joint stock company, having its registered office at 2 G.Tatevatsi str., Goris 3201, Syunig, Armenia and registered with the Armenian State Registry under number 18 070 00033 (“Seller”),</p>	<p>1. «Որոտան Հիդրոէլեկտրակայանների Համալիր» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն, իրավաբանական հասցեն՝ Գ. Տաթևացի 2, Գորիս 3201, Սյունիքի մարզ, ՀՀ, գրանցման համարը՝ 1807000033 (այսուհետ՝ «Վաճառող»),</p>
<p>2. The REPUBLIC OF ARMENIA,</p>	<p>2. Հայաստանի Հանրապետությունը,</p>
<p>3. CONTOURGLOBAL HYDRO CASCADE CJSC, a company incorporated in Armenia as a closed joint stock company, having its registered office at 9, G. Lusavorich Str. Yerevan 0015, Armenia and registered with the Armenian State Registry under number 286 120 776089 (“Buyer”),</p>	<p>3. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Երևան 0015, Գրիգոր Լուսավորիչի 9, գրանցված ՀՀ Պետական Ռեգիստրում 286 120 776089 համարի ներքո (այսուհետ՝ «Գնորդ»), և</p>
<p>4. CONTOURGLOBAL TERRA HOLDINGS SARL, a company incorporated in the Grand Duchy of Luxembourg as a joint stock company (société à responsabilité limitée) and having its registered office at 33, rue du Puits Romain, L-8070 Bertrange, Luxembourg (“ContourGlobal”), and</p>	<p>4. «ՔոնթուրԳլոբալ Տերրա Հոլդինգս Էս-Ա-Էր-Էլ» Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության տարածքում գրանցված բաժնետիրական ընկերություն, իրավաբանական հասցեն՝ Պյուրի Ղոմեն փող., 33, L-8070 Բերտրան, Լյուքսեմբուրգ (այսուհետ՝ «ՔոնթուրԳլոբալ»)</p>
<p>5. CG SOLUTIONS GLOBAL HOLDING COMPANY LLC, a company incorporated in Delaware, United States of America as a limited liability company and having its registered office at Corporation Trust Center, 1209 Orange Street, Wilmington, Delaware 19801, United States of America (“CG Solutions”).</p>	<p>5. «Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ ֆամիլի», Դելավեր, Ամերիկայի Միացյալ Նահանգներում գրանցված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, իրավաբանական հասցեն՝ Քորփորեյշն Թրաստ Սենթրը, 1209, Օրանջ փող. Ուելմինգտոն Գեյթվեր 19801, Ամերիկայի Միացյալ Նահանգներ (այսուհետ՝ «Սի-Ջի Սոլյուշնս»):</p>

WITNESSETH :	ՔԱՆՁԻ՝
<p>WHEREAS, Seller owns and operates three power plants located on the Vorotan hydro cascade, Republic of Armenia, for a total capacity of 404.2MW, namely (i) the 76MW Spandaryan hydro power plant consisting of two units built in 1989, (ii) the 171MW Shamb hydro power plant consisting of two units built in 1979 and (iii) the 157.2MW Tatev hydro power plant consisting of three units built in 1970, including all buildings and property, plant and equipment, spare parts, tools and office equipment, auxiliary equipment and equipment installed on that side of the interconnection point on which such generating units are located (all of the foregoing are collectively referred to as the “Facilities”);</p>	<p>Վաճառողը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրը կազմող երեք էլեկտրակայանների, այն է՝ (i) 1989թ-ին կառուցված, երկու բլոկներից բաղկացած, 76ՄգՎ հզորությամբ Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանի, (ii) 1979թ-ին կառուցված, երկու բլոկներից բաղկացած, 171ՄգՎ հզորությամբ Շամբի հիդրոէլեկտրակայանի, և (iii) 1970թ-ին կառուցված երեք բլոկներից բաղկացած, 157,2ՄգՎ հզորությամբ Տաթևի հիդրոէլեկտրակայանի (որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 404,2 ՄգՎ), ինչպես նաև բոլոր այն շենքերի, գույքի, արտադրամասերի, սարքավորումների, պահեստամասերի, գործիքների, գրասենյակային սարքավորումների, օժանդակ սարքավորումների և բոլոր այն այլ սարքավորումների սեփականատերն ու շահագործողը, որոնք գտնվում են սահմանազատման կետի այն մասում, որտեղ տեղակայված են նշված էլեկտրակայանները (այսուհետ՝ «Սարքավորումներ»),</p>
<p>WHEREAS Seller, a company wholly-owned by the Republic of Armenia, conducts <i>inter alia</i> the business of operating the Facilities and selling electricity produced by the Facilities (this specific part of business of the Seller hereinafter being referred to as the “Business”);</p>	<p>Վաճառողը, որը հանդիսանում է ամբողջությամբ ՀՀ կողմից վերահսկվող ընկերություն, զբաղվում է, ի թիվս այլ գործունեության, Սարքավորումների շահագործմամբ և Սարքավորումների շահագործման արդյունքում ստացված էլեկտրաէներգիայի վաճառքով (Վաճառողի գործունեության վերոնկարագրված մասը այսուհետ՝ «Գործունեություն»),</p>
<p>WHEREAS, Buyer is an Affiliate of ContourGlobal L.P., a global power company managing and operating a diversified portfolio of operating companies;</p>	<p>Գնորդը հանդիսանում է Փոխկապակցված Անձ «Բոնթոր Գլոբալ» Էլ ՓԻ-ի հետ, որը հանդիսանում է զանազան գործող ընկերությունների կառավարում և շահագործում իրականացնող էներգետիկ ընկերություն,</p>
<p>WHEREAS, Buyer desires to purchase the</p>	<p>Գնորդը ցանկանում է Վաճառողից ձեռք բերել,</p>

<p>Purchased Assets (as defined below) from Seller, and Seller desires to sell the Purchased Assets to Buyer;</p>	<p>իսկ Վաճառողն էլ ցանկանում է Գնորդին վաճառել Վաճառվող Գույքը (սահմանումը րերված է ստորև),</p>
<p>WHEREAS, in consideration of the above the parties have previously entered into an asset purchase agreement on 29 January 2014, last amended on 30 May 2014 and further agreed to amend and restate said agreement and enter into this Agreement, which shall replace and supersede as of the date hereof the terms of such previous agreement between the parties;</p>	<p>Հաշվի առնելով վերոնշյալը, Կողմերը 2014թ. հունվարի 29-ին կնքել են Գույքի Առուվաճառքի պայմանագիր (վերջին անգամ փոփոխված՝ 2014թ. մայիսի 30), այնուհետև համաձայնել են նշված պայմանագիրը փոփոխել և վերաձևակերպել սույն Պայմանագրով, միաժամանակ համաձայնվելով, որ սույն Պայմանագիրը դրա կնքելու օրվանից պետք է փոխարինի Կողմերի միջև նախկինում կնքված պայմանագիրը և ունենա գերակայություն վերջինիս նկատմամբ:</p>
<p>WHEREAS, CG Solutions is a party hereto for the sole purpose of acknowledging and confirming that it shall cease to have any rights or obligations whatsoever under the asset purchase agreement, as amended and restated herein, such rights and obligations being fully assumed, as of the date hereof, by ContourGlobal.</p>	<p>Սի-Ջի Սոլյուշնսը սույն Պայմանագրի կողմ է հանդիսանում նպատակ ունենալով միայն ընդունել և հաստատել, որ Գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն իր ստանձնած պարտավորությունները դադարում են սույն Պայմանագիրը կնքելու օրվանից: Սույն Պայմանագիրը կնքելու օրվանից այդ իրավունքներն ու պարտականությունները ամբողջապես իրականացվում են ՔոնթուրԳլոբալի կողմից:</p>
<p>The parties hereto agree as follows:</p>	<p>Ուստի, կողմերը համաձայնության եկան հետևյալի շուրջ.</p>
<p>ARTICLE 1 DEFINITIONS</p>	<p>ՀՈՒՎԱԾ 1 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ</p>
<p>Section 1.01. <i>Definitions.</i> The following terms, as used herein, have the following meanings:</p>	<p><i>Կետք 1.01. Սահմանումներ.</i> Սույն Պայմանագրում կիրառվող ստորև նշված եզրույթներն ունեն հետևյալ նշանակությունները.</p>

<p>“Accepted Operating Practices” means the practices and methods applied by the electric utility industry in conformity with Armenian Law, including, but not limited to the Generation License and Technical Specifications, and European Union and international (World Bank) standards (including practices generally followed by reputable independent power producers in the hydroelectric industry), having regard to engineering and operational considerations (including manufacturers’ recommendations).</p>	<p>«Շահագործման Ընդունված Կանոններ» նշանակում է Էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում ինժեներական ու շահագործման գանազան գործոնների (ներառյալ արտադրողների առաջարկությունների) հաշվառմամբ ՀՀ օրենքներին (ներառյալ, բայց առանց սահմանափակման Էլեկտրական Էներգիայի (Հզորության) Արտադրության Գործունեության Լիցենզիան և Տեխնիկական պայմանները), ԵՄ և համաշխարհային (Համաշխարհային Բանկի) ստանդարտներին համապատասխան կիրառվող աշխատանքի մեթոդներ և կանոններ (ներառյալ հիդրոկայանների միջոցով Էլեկտրաէներգիա արտադրելու բնագավառում հեղինակավոր անկախ կազմակերպությունների կողմից ընդհանրապես կիրառվող կանոնները):</p>
<p>“AEN” means ELECTRIC NETWORKS OF ARMENIA, a company incorporated in Armenia as a closed joint stock company having its registered office at A.Armenakyan 127, Yerevan 0047 in Armenia.</p>	<p>«ԷԷՑ» նշանակում է «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն, իրավաբանական հասցեն՝ Ա. Արմենակյան 127, Երևան, 0047, ՀՀ:</p>
<p>“Affiliate” means, with respect to any Person, any other Person directly or indirectly controlling, controlled by, or under common control with such other Person. For purposes of this definition, “control” when used with respect to any Person means the power to direct the management and policies of such Person, directly or indirectly, whether through the ownership of voting securities, by contract or otherwise, and the terms “controlling” and “controlled” have correlative meanings.</p>	<p>«Փոխկապակցված Անձ» սահմանումն այս կամ այն Անձի առնչությամբ կիրառված լինելու դեպքում նշանակում է մեկ այլ Անձ, որն ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկում է այդ Անձին կամ վերահսկվում է այդ Անձի կողմից կամ այդ Անձի հետ միասին գտնվում է ընդհանուր վերահսկողության ներքո: Այստեղ «վերահսկողություն» բառը որևէ Անձի կապակցությամբ օգտագործված լինելու դեպքում նշանակում է տվյալ Անձի կառավարման և գործունեության ուղղությունները որոշելու վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցություն ունենալու հնարավորություն՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հնարավորությունը ծագում է քվեարկող արժեթղթերի սեփականատեր լինելու հանգամանքից, թե՛ պայմանագրից, թե՛ այլ</p>

	<p>հիմքից: «Վերահսկող» և «վերահսկվող» բառերը պետք է մեկնաբանվեն վերոհիշյալի լույսի ներքո:</p>
<p>“Applicable Law” means, with respect to any Person, any transnational, domestic or foreign federal, state or local law (statutory, common or otherwise), constitution, treaty, convention, ordinance, code, rule, regulation, order, injunction, judgment, resolution, decree, ruling or other similar requirement as from time to time enacted, adopted, promulgated or applied by a Governmental Authority that is binding upon or applicable to such Person (including any requirement to act or refrain from acting issued by a Governmental Authority).</p>	<p>«Կիրառելի Օրենսդրություն» այս կամ այն Անձի կապակցությամբ օգտագործված լինելու դեպքում նշանակում է տվյալ Անձի համար պարտադիր կամ նրա նկատմամբ կիրառվող ցանկացած վերազգային, ազգային կամ օտարերկրյա դաշնային, նահանգային կամ մունիցիպալ օրենք (գրված իրավական ակտ, նախադեպ կամ այլ), սահմանադրություն, համաձայնագիր, կոնվենցիա, հրամանագիր, օրենսգիրք, նորմ, կանոնակարգ, հրաման, դատարանի կողմից սահմանված արգելանք կամ որևէ գործողություն կատարելու որոշում, դատարանի վճիռ, դեկրետ, որոշում կամ նմանատիպ այլ պահանջ, որն ժամանակ առ ժամանակ ընդունվել, գործողության մեջ է դրվել, հրապարակվել կամ կիրառվել է Իշխանական Մարմինների կողմից (ներառելյալ այս կամ այն գործողությունը կատարելու կամ դրանից ձեռնպահ մնալու վերաբերյալ Իշխանական Մարմինների կողմից հրապարակված ցանկացած պահանջ) :</p>
<p>“Armenian Law” means the Applicable Law of the Republic of Armenia.</p>	<p>«Հայկական Օրենսդրություն» նշանակում է ՀՀ Կիրառելի Օրենսդրությունը:</p>
<p>“Armenian Authority” means any Governmental Authority of the Republic of Armenia, including the Regulator.</p>	<p>«ՀՀ Իշխանական Մարմիններ» նշանակում է Հայաստանի Հանրապետության Իշխանական Մարմինները, ներառյալ որևէ Կարգավորող Մարմին:</p>
<p>“Armenian Event” means:</p>	<p>«ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած Իրադարձություն» նշանակում է՝</p>
<p>(a) any expropriation, requisition, confiscation, impoundment, seizure, nationalization or compulsory acquisition by an Armenian Authority of the Facilities or any material assets of Buyer, or any shares or other interests in Buyer, or the cancellation, curtailment or material change of the Project or the repudiation, frustration, avoidance of, or any similar action by an Armenian Authority constituting the principal cause for non-performance by the Buyer of any</p>	<p>(ա) Սարքավորումների, Գնորդի՝ էական համարվող ակտիվների, Գնորդի բաժնետոմսերի, Գնորդ ընկերության հանդեպ ունեցած այլ իրավունքների ՀՀ Իշխանական մարմինների կողմից ազգայնացման, ռեկվիզիցիայի, բռնագրավման, առգրավման, հանրային շահ ճանաչելու և իրացնելու ցանկացած դեպք, կամ Նախագիծը դադարեցնելու, Նախագծի ծավալները</p>

<p>obligation under this Agreement, the Power Purchase Agreement or the Financing Documents; or failure by an Armenian Authority to take appropriate measures available to it under Armenian Law to prevent or remedy any of the foregoing actions on the part of any third party;</p>	<p>կրճատելու կամ Նախագծի մեջ էական փոփոխություններ կատարելու ցանկացած դեպք, կամ Նախագծային Պայմանագրերի խախտմամբ դրանցից միակողմանիորեն հրաժարվելու, դրանց առարկայի խախտմանը նպաստելու, դրանց իրավական ուժը կամ վավերականությունը վիճարկելու ցանկացած դեպք, կամ դրանց առնչությամբ կամ դրանցով նախատեսված պարտավորությունները Գնորդի կողմից սույն Պայմանագրի կամ Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագրի կամ Ֆինանսական փաստաթղթերի կատարումն անհնարին դարձնող ՀՀ Իշխանական մարմինների ցանկացած գործողություն, կամ ՀՀ Իշխանական մարմինների կողմից երրորդ անձանց կողմից նշված գործողությունների կանխարգելմանը կամ վերացմանն ուղղված ՀՀ օրենսդրությանը համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքեր:</p>
<p>(b) any Change in Armenian Law;</p>	<p>(բ) ՀՀ Օրենսդրության Փոփոխություն համարվող ցանկացած դեպք,</p>
<p>(c) any Facilities Failure of Approval;</p>	<p>(գ) Սարքավորումների Համար Պահանջվող Թույլտվությունները Չտրամադրելու ցանկացած դեպք,</p>
<p>(d) any interruption in the supply of any utility service to the Buyer by an Armenian Authority, the closing or reduction in capacity by an Armenian Authority of any canal, road, airport or other infrastructure, except due to an act of God; or failure by an Armenian Authority to take appropriate measures available to it under Armenian Law to prevent or remedy such actions on the part of any third party;</p>	<p>(դ) ՀՀ Իշխանական մարմինների կողմից՝ Գնորդին մատուցվող կոմունալ ծառայությունների մատուցումը դադարեցնելու, ՀՀ Իշխանական Մարմինների կողմից որևէ ջրանցք, ճանապարհ, օդանավակայան կամ այլ ենթակառուցվածքային օբյեկտ փակելու կամ դրանց հզորությունները կրճատելու ցանկացած դեպք, բացառությամբ որևէ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ վ պայմանավորված դեպքերի, ինչպես նաև ՀՀ Իշխանական Մարմինների կողմից երրորդ անձանց նման գործողությունների կանխարգելմանը կամ</p>

	<p>վերացմանն ուղղված ՀՀ օրենսդրությանը համապատասխան միջոցներ չձեռնարկելու ցանկացած դեպք:</p>
<p>(e) any disruption in the water flow in the Vorotan Sites other than resulting from an act of God, including without limitation any disruption caused by an artificial diversion of the upstream riverbed, the construction of an upstream dam or otherwise; provided however that a decision by an Armenian Authority to release water in excess of the maximum capacity of a reservoir shall not be deemed an Armenian Event to the extent necessary to prevent a threat to the integrity of the Facilities. The Parties hereto agree that the customary use of waters in Vorotan sites for irrigation purposes at the levels set out in Schedule 2.01(e) (which shows separately (i) the levels of water used historically for these purposes and (ii) their maximum future increases over 25 years), shall not be deemed to constitute a disruption in the water flow within the meaning of this paragraph; or</p>	<p>(ե) Որոտանում Տեղակայման Վայրեր մուտք գործող ջրի հոսքը խախտելու ցանկացած դեպք, եթե առկա են տեխնաձին գործոններ, ներառյալ գետի վերին հոսանքում գետի հունը արհեստականորեն փոխելու, ամբարտակ կառուցելու կամ ջրի հոսքն այլ կերպ խախտելու ցանկացած մեկ այլ դեպք, պայմանով, որ ՀՀ Իշխանական Մարմինների կողմից ջրամբարի առավելագույն ծավալի գերազանցմամբ ջրի քացթողման որոշումը պայմանավարված Սարքավորումների ամբողջականության խախտման վտանգը կանխելու անհրաժեշտությամբ չի համարվում ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած Իրադարձություն: Կողմերը սույնով համաձայնում են, որ ռոզգման նպատակներով Որոտանի ջրերի տրադիցիոն օգտագործումը Հավելված 2.01 (ե) ծավալներով (որն առանձին-առանձին ցույց է տալիս (i) այս նպատակներով պատմականորեն ջրի օգտագործման ծավալները և (ii) դրանց առավելագույն աճը 25 տարվա ընթացքում) չպետք է դիտարկվի որպես ջրի հոսքի խախտում սույն կետի իմաստով, կամ</p>
<p>(f) any rationing, import or export restrictions, or undue delays imposed by an Armenian Authority after the Closing Date (through no fault of the Buyer), in customs or immigration clearance procedures in respect of goods, materials, equipment or personnel being shipped or admitted into or out of Armenia by or on behalf of any party to any Project Agreement (it being understood that the Buyer acknowledges that there are restrictions under Armenian Law on the export of electricity outside of Armenia and that these restrictions shall not be deemed to constitute an Armenian Event unless they are discriminatory in regards to Buyer).</p>	<p>(գ) Գործարքի Ավարտման Օրվանից հետո ՀՀ Իշխանական Մարմինների կողմից նորմավորում սահմանելու, ներմուծման կամ արտահանման նկատմամբ սահմանափակումներ կիրառելու ցանկացած դեպք կամ Նախագծային Պայմանագրերի կողմ հանդիսացող Անձանցից որևիցե մեկի կողմից կամ նրա անունից ՀՀ տարածք ապրանքներ, նյութեր կամ սարքավորումներ ներմուծվելու կամ ՀՀ աշխատակիցներ հրավիրելու կամ ՀՀ տարածքից ապրանքներ, նյութեր կամ սարքավորումներ արտահանվելու կամ ՀՀ սահմաններից դուրս աշխատակիցներ ճանապարհելու դեպքում մաքսազերծման կամ միգրացիոն ծառայությունների կողմից</p>

	<p>անհարկի հետաձգման (որտեղ առկա չէ Գնորդի մեղքը) ցանկացած դեպք (Գնորդը համաձայնում և ընդունում է, որ էլեկտրաէներգիան ՀՀ տարածքից արտահանելու վերաբերյալ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված են սահմանափակումներ.): Այս սահմանափակումները չպետք է համարվեն ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած Իրադարձություն, քանի դեռ դրանք Գնորդի նկատմամբ խտրականություն չեն առաջացնում):</p>
<p>“Business Day” means a day, other than Saturday, Sunday or other day on which commercial banks in New York, New York, United-States of America or Yerevan, Armenia, are authorized or required by Applicable Law to close.</p>	<p>«Աշխատանքային Օր» նշանակում է ցանացած օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ինչպես նաև բոլոր այն օրերից, երբ Կիրառելի Օրենսդրության համաձայն առևտրային բանկերը կարող են կամ պարտավոր են փակվել Նյու Յորքում (Նահանգ Նյու Յորք, ԱՄՆ) կամ Երևանում (Հայաստանի Հանրապետություն):</p>
<p>“Change in Armenian Law” means the adoption, coming into effect, modification, reinterpretation, cancellation, withdrawal or suspension, after the date of this Agreement by any Armenian Authority of any Applicable Law or Project Agreement Approval affecting the Buyer, any shares or other interest in the Buyer and/or the ownership, operation or maintenance of the Facilities, that is more restrictive or more onerous than any Applicable Law or any Project Agreement Approval as of the date of this Agreement and which adversely affects the ability of the Buyer to comply with the terms of the Financing Documents; provided that a change in custom duties or Accepted Operating Practices shall not be deemed a Change in Armenian Law if such change is not discriminatory towards Buyer or its Affiliates and the additional investments incurred by the Buyer and/or ContourGlobal required as a result of such change qualify as capital expenditures compensated through an</p>	<p>«ՀՀ Օրենսդրության Փոփոխություն» նշանակում է սույն Պայմանագրի կնքման օրվանից հետո ՀՀ Իշխանական Մարմինների կողմից Կիրառելի Օրենսդրության մաս կազմող ակտեր կամ Նախագծային Պայմանագրերի Համար Պահանջվող Թույլտվություններ ընդունելու, դրանց մեջ փոփոխություններ կատարելու, դրանք նորովի մեկնաբանելու, դադարեցնելու, ետ կանչելու կամ կասեցնելու ցանկացած դեպք, որն ազդում է Գնորդի, Գնորդ ընկերության բաժնետոմսերի, Գնորդ ընկերության նկատմամբ ունեցած այլ իրավունքների և/կամ Սարքավորումների նկատմամբ սեփականության իրավունքի, դրանց շահագործման կամ տեխնիկական սպասարկման վրա, որի հետևանքով Կիրառելի Օրենսդրությամբ կամ Նախագծային Պայմանագրերի Համար Պահանջվող Թույլտվություններով նախատեսված</p>

<p>increase in the Total Payment pursuant to the Tariff Schedule.</p>	<p>պահանջները դառնում են ավելի սահմանափակող կամ ծանրացուցիչ, քան սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ գործողները, և որը բացասաբար է ազդում Գնորդի՝ Ֆինանսական Փաստաթղթերով նախատեսված պարտավորությունները կատարելու հնարավորության վրա, պայմանով, որ մաքսատուրքերի փոփոխությունը կամ Շահագործման Ընդունված Կանոնները չպետք է համարվեն ՀՀ Օրենսդրության Փոփոխություն, եթե նման փոփոխությունը Գնորդի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց նկատմամբ խտրականության դրսևորում չէ և նշված փոփոխությունների արդյունքում Գնորդի և/կամ ՔոնթուրԳլոբալի կողմից լրացուցիչ ներդրումները որակվում են որպես կապիտալ ծախսեր և փոխհատուցվում են Սակագնային պլանի համաձայն Համախառն Վճարի բարձրացման միջոցով:</p>
<p>“Closing Date” means the date of the Closing.</p>	<p>«Գործարքի Ավարտման Օր» նշանակում է այն օրը, երբ պետք է տեղի ունեն Գործարքի Ավարտը:</p>
<p>“Debt Financing” means the debt component of the financing required by the Buyer for the acquisition, operation and maintenance of the Facilities, including the Electro-Mechanical Refurbishment, as well as any refinancing of such requirement (but excluding, for the avoidance of doubt, any equity provided by way of shareholder loan).</p>	<p>«Փոխառու Միջոցներ» նշանակում է Սարքավորումները ձեռք բերելու, շահագործելու և դրանց տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև Էլեկտրամեխանիկական Վերագինումն իրականացնելու համար Գնորդից պահանջվող ֆինանսավորման այն մասը, որը ապահովվում է այլ Անձանցից փոխառու միջոցներ ներգրավելու, ներառյալ դրանք վերաֆինանսավորելու միջոցով (Գնորդ ընկերությանը բաժնետիրոջ կողմից տրված փոխառու միջոցները, որոնք ստորադասվում են ընկերության մյուս բոլոր պարտատերերի պահանջների նկատմամբ, Փոխառու Միջոցներ չեն հանդիսանում):</p>

<p>“Direct Agreement” means any and all agreements among the Lenders (or their agent) and the parties to any Project Agreement intended to create a direct contractual relationship between the Lenders and the parties to any Project Agreement and whereby inter alia the Seller or the Republic of Armenia (or both) would (i) consent to the assignment by Buyer and ContourGlobal of their interest under this Agreement and the Facilities as security for the financing and (ii) agree to procedures for the Lenders to remedy potential breaches by Buyer and ContourGlobal of their obligations under any Project Agreement.</p>	<p>«Նախագծին Մասնակցող Տարբեր Անձանց Միջև Ուղղակի Պայմանագրային Հարաբերություններ Հաստատելու Վերաբերյալ Պայմանագիր» նշանակում է ցանկացած պայմանագիր՝ կնքված Փոխատուների (կամ նրանց գործակալների) և Նախագծային Պայմանագրերով կողմ հանդիսացող Անձանց միջև, որով նախատեսվում է ուղղակի պայմանագրային հարաբերություններ հաստատել Փոխատուների և Նախագծային Պայմանագրերով կողմ հանդիսացող Անձանց միջև, և որով Վաճառողը կամ ՀՀ (կամ երկուսը միասին), ի թիվս այլոց, (i) համաձայնում են, որպեսզի Գնորդը և ՔոնթուրԳլոբալը սույն Պայմանագրից բխող, ինչպես նաև Սարքավորումների նկատմամբ ունեցած իրավունքները գրավադրեն ֆինանսավորում ստանալու նպատակով, և (ii) որ Փոխատուներն իրավունք ունենան իրենք ուղղել կամ շտկել Գնորդի և ՔոնթուրԳլոբալի կողմից թույլ տրված Նախագծային Պայմանագրերով սահմանված պարտավորությունների հնարավոր խախտումները:</p>
<p>“Dram”, “AMD” or “Armenian Dram” each means the lawful currency of the Republic of Armenia.</p>	<p>«Դրամ» կամ «ՀՀ դրամ» նշանակում է Հայաստանի Հանրապետության օրինական արժույթը:</p>
<p>“Electro-Mechanical Refurbishment” means the planned electro-mechanical refurbishment of the Facilities to be financed by Buyer for an estimated amount of EURO 51 million (in real 2012 terms, with a margin of adjustment of +/- 15%), supervised and carried out in accordance with Section 7.03.</p>	<p>«Էլեկտրամեխանիկական Վերազինում» նշանակում է Սարքավորումների նախատեսված էլեկտրամեխանիկական վերազինումը, որի հաշվարկային արժողությունը կազմում է 51 միլիոն Եվրո (հաշվարկված 2012թ.-ին գործող իրական գներով, +/- 15 տոկոս) և որը պետք է ֆինանսավորվի Գնորդի կողմից և իրականացվի 7.03 Կետով սահմանված կարգով:</p>
<p>“Employee Benefit” means any</p>	<p>«Աշխատակիցների Երաշխիքներ և</p>

<p>compensation owed to employees of the Seller, including deferred compensation, bonuses, profit-sharing, stock option or other forms of incentive, vacation benefits, insurance, health or medical benefits, employee assistance program, disability or sick leave benefits, unemployment benefits, termination pay, severance benefits and post-employment or retirement benefits (including pension, health, medical or life insurance benefits) which is maintained, administered or contributed to by Seller.</p>	<p>Հատուցումներ» նշանակում է Վաճառողի աշխատակիցներին վճարման ենթակա հատուցումները, ներառյալ տարաժամկետ հատուցումներ, պարգևավճարներ վճարելու Վաճառողի պարտավորությունները, Վաճառող գործատուի եկամուտից մաս ստանալու աշխատակիցների իրավունքները, Վաճառող գործատուի բաժնետոմսերը ձեռք բերելու աշխատակիցների օպցիոնները և Վաճառողի կողմից կիրառվող աշխատակիցների խրախուսման այլ միջոցները, արձակուրդների, ապահովագրության, առողջության, բժշկական օգնություն ստանալու, հաշմանդամության, անաշխատունա-կության ու հիվանդության, ինչպես նաև գործազրկության հետ կապված և աշխատանքային գործունեությունն ավարտելու կապակցությամբ Վաճառողի կողմից տրամադրվող երաշխիքներն ու հատուցումները, Վաճառողի՝ աշխատակիցների աջակցության ծրագրերը, աշխատանքային պայմանագրերը լուծելու համար Վաճառողի կողմից աշխատակիցներին վճարման ենթակա գումարները, վերջինիս կողմից վճարման ենթակա արձակման, կենսաթոշակային նպաստները (ներառյալ թոշակները, բժշկական կամ կյանքի, առողջության ապահովագրության հետ կապված երաշխիքներն ու հատուցումները:</p>
<p>“Environmental Laws” means any Applicable Law or any agreement with any Governmental Authority or other third party, relating to human health and safety, the environment or to Hazardous Substances.</p>	<p>«Բնապահպանական Օրենսդրություն» նշանակում է Կիրառելի Օրենսդրության մաս կազմող ցանկացած ակտ կամ ցանկացած Իշխանական Մարմնի կամ ցանկացած երրորդ անձի հետ ձեռք բերված ցանկացած համաձայնություն, կնքված ցանկացած համաձայնագիր, որը վերաբերում է մարդու առողջությանը կամ անվտանգությանը, շրջակա միջավայրին կամ Վտանգավոր Նյութերին:</p>

<p>“Environmental Permits” means all permits, licenses, approvals and other similar authorizations of Governmental Authorities relating to or required by Environmental Laws and affecting, or relating in any way to, the Business, the Purchased Assets or the Real Property.</p>	<p>«Բնապահպանական Թույլտվություններ» նշանակում է Գործունեության, Վաճառվող Գույքի կամ Անշարժ Գույքի առնչությամբ Բնապահպանական Օրենսդրությամբ պահանջվող կամ այդ օրենսդրության հետ կապված թույլտվություններ, լիցենզիաներ, հաստատումներ կամ նմանատիպ այլ համաձայնություններ, հավանությունների տրված Իշխանական Մարմինների կողմից:</p>
<p>“Escrow Agent” means HSBC Bank Armenia CJSC, a company incorporated in Armenia as a closed joint stock company, having its registered office at 66 Teryan Street, Yerevan 0009, Armenia and registered with the Central Bank of Armenia under number 67.</p>	<p>«Էսքրոու Գործակալ» նշանակում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ընկերություն հիմնադրված Հայաստանում որպես փակ բաժնետիրական ընկերություն, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 66, 0009, գրանցված ՀՀ Կենտրոնական բանկում 67 համարի ներքո:</p>
<p>“Escrow Agreement” means the agreement dated January 29, 2014 among Buyer, CG Solutions, Seller, the Republic of Armenia and Escrow Agent, as amended the date hereof.</p>	<p>«Էսքրոու Պայմանագիր» նշանակում է Գնորդի, Սի-Ջի Սոլյուշնսի, Վաճառողի, ՀՀ և Էսքրոու Գործակալի միջև կնքված 29 հունվարի 2014թ. կնքված և սույն Պայմանագրի կնքման օրը փոփոխված:</p>
<p>“Euros” or “€” means the single currency of participating member states of the European Union, provided that if the Euro is not, in the reasonable opinion of Buyer, widely circulated in currency markets in the United States and Europe and/or is no longer the lawful currency of Germany, then “Euro” shall mean the successor lawful currency for the time being of Germany and payments to be made in Euro hereunder shall be paid in such German currency at a rate of exchange equal to the Euro/German currency rate set by Bundesbank on the date that the Euro ceases to be the lawful currency in Germany.</p>	<p>«Եվրո» կամ «€» նշանակում է Եվրոպական Միության անդամ պետությունների միասնական արժույթը, պայմանով, որ եթե Եվրոն Գնորդի ողջամիտ կարծիքով լայն շրջանառություն չունենա Միացյալ Նահանգների և Եվրոպայի արժույթի շուկաներում և/կամ այլևս չհանդիսանա Գերմանիայի օրինական արժույթը, ապա «Եվրո» կնշանակի այդ պահին Գերմանիայում Եվրոյին փոխարինելու եկած օրինական արժույթը, իսկ սույն Պայմանագրով նախատեսված բոլոր այն վճարումները, որոնք պետք է կատարվեն Եվրոյով, այդուհետ կկատարվեն Գերմանիայի նոր արժույթով հաշվարկված Եվրոն Գերմանիայի օրինական արժույթ չհանդիսանալու առաջին օրվա</p>

	<p>դրությամբ Գերմանիայի Դաշնային Բանկի՝ Բունդեսբանկի, կողմից սահմանված Եվրո/Գերմանական արժույթ փոխարժեքով:</p>
<p>“Facilities Failure of Approval” means any Project Agreement Approval:</p>	<p>«Մարքավորումների Համար Պահանջվող Թույլտվություններ Չտրամադրելը» նշանակում է հետևյալը.</p>
<p>(a) ceasing to remain in full force and effect, or</p>	<p>(ա) դադարեցվել է Նախագծային Պայմանագրերի Համար Պահանջվող Թույլտվությունների գործողությունը, կամ</p>
<p>(b) not being issued or renewed within the period of time prescribed by Applicable Law, or, if no such period is so prescribed, within a reasonable period of time required for any action (having regard to the time required to research, instruct and consider any and all material issues, evidence, arguments and circumstances bearing on the relevant Armenian Authority’s decision to issue, renew or refuse to do so) – including, for the avoidance of doubt, a failure to increase the base capacity price and/or base energy price as provided in Section 6.07(b), or</p>	<p>(բ) Կիրառելի Օրենսդրությամբ սահմանված ժամկետում, իսկ նման ժամկետ սահմանված չլինելու դեպքում գործողությունների համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետում (հաշվի առնելով հետազոտություններ կատարելու, համապատասխան հրահանգներ տալու և ՀՀ Իշխանական մարմինների կողմից թույլտվությունները տալու, երկարաձգելու կամ թույլտվության տրամադրումը կամ երկարաձգումը մերժելու որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր էական հանգամանքները հաշվի առնելու համար անհրաժեշտ ժամկետը), չեն տրամադրվել կամ չեն երկարաձգվել Նախագծային Պայմանագրերի Համար Պահանջվող Թույլտվությունների գործողության ժամկետները (ներառյալ, երկինաստություններից խուսափելու նպատակով, հզորության վճարի և/կամ հիմնական էլեկտրական էներգիայի վճարի բարձրացման անհնարիներություն դեպքում, ինչպես նկարագրված է Կետ 6.07 (բ)-ում), կամ</p>
<p>(c) being made subject, subsequent to its grant, upon issue, renewal or otherwise, to any term or condition,</p>	<p>(գ) Նախագծային Պայմանագրերի Համար Պահանջվող Թույլտվությունների գործողությունը կամ վավերականությունը դրանք շնորհված լինելուց հետո կամ դրանց</p>

	<p>տրամադրման կամ երկարաձգման պահին կախման մեջ են դրվել այս կամ այն պայմանը բավարարված լինելու հանգամանքից,</p>
<p>that in any such case materially and adversely affects the ability of a party to perform its obligations or to enjoy its rights under the relevant Project Agreement.</p>	<p>ինչը ցանկացած նման պարագայում էական և բացասական ազդեցություն է ունենում համապատասխան Նախագծային Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելու կամ դրանով նախատեսված իրավունքներից օգտվելու կողմերի հնարավորության վրա:</p>
<p>“Financing Documents” means the documents executed by any Person in connection with the Debt Financing from time to time, including any loan agreement, notes, bonds and indentures, joinder agreement, security agreement, guarantee, direct agreement, letter of credit, political risk insurance agreement with respect to the Debt Financing, any Direct Agreement, interest rate hedging agreement or similar instrument.</p>	<p>«Ֆինանսական Փաստաթղթեր» նշանակում է ժամանակ առ ժամանակ Փոխառու Միջոցներ ներգրավելու նպատակով այս կամ այն Անձի կողմից ստորագրված փաստաթղթերը, ներառյալ փոխառության պայմանագրերը, կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերը, պարտատոմսեր թողարկողների և պարտատոմսերի սեփականատերերի միջև կնքված պայմանագրերը, երաշխավորությունները, նախագծերի ֆինանսավորման շրջանակներում իշխանությունների, նախագիծն իրականացնող կազմակերպությունների և փոխատուների միջև ստորագրված բազմակողմ համաձայնագրերը, ակրեդիտիվները, քաղաքական ռիսկերի ապահովագրման պայմանագրերը, նախագծին մասնակցող տարբեր անձանց միջև ուղղակի պայմանագրային հարաբերություններ հաստատելու վերաբերյալ պայմանագրերը, պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրերը, փոխառու միջոցներ տրամադրելու վերաբերյալ պայմանագրերին միանալու պայմանագրերը, տոկոսադրույքների հեջավորման պայմանագրերը և նմանատիպ այլ գործիքները:</p>

<p>“Generation License” means the license for generation of electricity to be issued to Buyer by the Regulator in accordance with Armenian Law.</p>	<p>«Էլեկտրական Էներգիայի (Հզորության) Արտադրության Գործունեության Լիցենզիա» նշանակում է ՀՀ Օրենսդրության համաձայն էլեկտրաէներգիա արտադրելու համար Կարգավորող Մարմնի կողմից Գնորդին տրամադրման ենթակա լիցենզիան:</p>
<p>“Governmental Authority” means any (i) national, state, provincial, city, municipal, public or local government, department, national bank, court, legislature, council, commission, board, bureau, agency or instrumentality (ii) any subdivision, commission, official, board or authority of any of the foregoing or (iii) any quasi-governmental or private body exercising any regulatory, expropriation, fee collecting or tax authority under or for the account of any of the foregoing, whether acting under its own authority or authority delegated to it by any of the foregoing or (iv) any Person controlled by any of the foregoing while acting in an administrative, official or agency capacity.</p>	<p>«Իշխանական Մարմիններ» նշանակում է ցանկացած (i) ազգային, նահանգային, մարզային, քաղաքային, մունիցիպալ, հանրային կամ տեղական կառավարման մարմին, վարչություն, կենտրոնական բանկ, դատարան, օրենսդիր մարմին, խորհուրդ, հանձնաժողով, կոմիտե, բյուրո, գործակալություն կամ ցանկացած այլ մարմիններ, (ii) դրանցից յուրաքանչյուրի ցանկացած ստորաբաժանում, հանձնաժողով, պաշտոնատար անձ, խորհուրդ կամ մեկ այլ մարմին, կամ (iii) ցանկացած կիսակառավարական կամ մասնավոր մարմին, որը նշված մարմինների անունից կամ հոգուտ նրանց, իր իրավասությունների կամ նրանց կողմից իրեն պատվիրակված իրավասությունների շրջանակներում իրականացնում է կարգավորման, գույքը հանրային շահ ճանաչելու և իրացնելու, վճարներ գանձելու կամ հարկային մարմնի գործառույթներ, կամ (iv) նրանցից որևիցե մեկի կողմից վերահսկվող ցանկացած Անձ, որն իրականացնում է վարչական կամ պաշտոնական գործառույթներ կամ հանդես է գալիս որպես նրանց գործակալ:</p>
<p>“Hazardous Substances” means any pollutant, contaminant, waste or chemical or any toxic, radioactive, ignitable, corrosive, reactive or otherwise hazardous substance, waste or material or any substance, waste or material having any constituent elements displaying any of the foregoing</p>	<p>«Վտանգավոր Նյութեր» նշանակում է ցանկացած աղտոտող, կեղտոտող նյութ, թափոն կամ քիմիական նյութ կամ թունավոր, ռադիոակտիվ, հրկիզվող, ժանգոտվող, ռեակտիվ կամ այլ վտանգավոր նյութ, թափոն</p>

<p>characteristics including petroleum, its derivatives, by-products and other hydrocarbons, polychlorinated biphenyls, radioactive material, lead, asbestos-containing material and any substance, waste or material regulated under any Environmental Law.</p>	<p>կամ առարկա կամ այնպիսի նյութ, թափոն կամ առարկա, որը պարունակում է վերոգրյալ հատկանիշները պարունակող բաղադրիչներ, այդ թվում նաև նավթ, նավթից պատրաստված ածանցյալ կամ կողմնակի նյութեր ու ապրանքներ, այլ ածխաջրածնային նյութեր, պոլիքլորացված բիֆենիլներ, ռադիոակտիվ նյութեր, կապար, ասբեստ պարունակող ցանկացած նյութ և ցանկացած այլ նյութեր, որոնց վերաբերյալ գոյություն ունեն Բնապահպանական Օրենսդրությամբ սահմանված պահանջներ :</p>
<p>“Holdings” mean all the Persons holding shares in Buyer.</p>	<p>«Հոլդինգային Ընկերություն» նշանակում է Անձիք, որոնց սեփականության իրավունքով պատկանում են Գնորդ ընկերության բաժնետոմսերը:</p>
<p>“Lenders” means any commercial lender, any multilateral or bilateral development bank, any export credit agency, any development finance institutions or any other entity that commits to providing or arranging or otherwise entering into any Financing Document, the parties to any such Financing Documents, and their respective successors and assigns.</p>	<p>«Փոխատուներ» նշանակում է առևտրային վարկ տրամադրող ցանկացած փոխատու, ցանկացած բազմակողմ կամ երկկողմ զարգացման բանկ, արտահանումների ֆինանսավորման համար վարկեր տրամադրող ցանկացած գործակալություն, զարգացման ֆինանսավորման համար վարկեր տրամադրող ցանկացած հաստատություն կամ ցանկացած այլ Անձ, որը պարտավորվել է տրամադրել կամ օգնել ձեռք բերել ֆինանսավորում, կամ որը պարտավորվել է կնքել ֆինանսավորման Փաստաթղթեր, այդ ֆինանսական Փաստաթղթերին կողմ հանդիսացող Անձիք, նրանց իրավահաջորդների ու իրավունքները զիջելու ճանապարհով նրանցից իրավունքներ ստացած բոլոր Անձանց հետ միասին:</p>
<p>“Lien” means, with respect to any property or asset, any mortgage, lien, pledge, charge, security interest, encumbrance, easement (servitude), or statutory lien provided under Armenian law. For the purposes of this</p>	<p>«Գույքը Ծանրաբեռնող Երրորդ Անձանց Իրավունքներ» ցանկացած գույքի կամ ակտիվների առնչությամբ օգտագործված լինելիս նշանակում է գրավի ցանկացած</p>

<p>Agreement, a Person shall be deemed to own subject to a Lien any property or asset which it has acquired or holds subject to the interest of a vendor or lessor under any conditional sale agreement, capital lease or other title retention agreement relating to such property or asset.</p>	<p>իրավունք գրավադրված գույքի հանձնմամբ կամ առանց դրա, սեփականության իրավունքի պայմանական ցանկացած փոխանցում ի ապահովում ապահովված պարտավորության կատարման, գույքը պահելու և դրա հաշվին այլ պարտատերերի նկատմամբ նախապատվության իրավունքով բավարարում ստանալու ցանկացած իրավունք, գույքի նկատմամբ պարտատիրոջ պահանջի իրավունքն ապահովող ցանկացած իրավունք, սերվիտուտի իրավունք կամ ՀՀ Օրենսդրության ուժով ծագող գույքի ցանկացած ծանրաբեռնում: Սույն Պայմանագրի իմաստով Անձը հանդիսանում է այլ Անձանց իրավունքներով ծանրաբեռնված գույքի սեփականատեր, եթե այդ գույքը ձեռք է բերվել պայմանական առուվաճառքի պայմանագրի, ֆինանսական վարձակալության պայմանագրի կամ այնպիսի մեկ այլ պայմանագրի համաձայն, որը նախատեսում է վաճառողի սեփականության իրավունքի պահպանումը մինչև դրանով նախատեսված պայմանների բավարարված լինելը:</p>
<p>“Material Adverse Effect” means a material adverse effect on (i) the condition (financial or otherwise), business, assets, results of operations or prospects of the Business, but excluding any effect resulting from (A) changes in the general economic or political conditions in the United States or in the Republic of Armenia not having a materially disproportionate effect on the Business relative to other participants in the industry in which the Business operates, or (B) changes (excluding changes of Applicable Law) or conditions generally affecting the industry in which the Business operates and not specifically relating to or having a materially disproportionate effect on the Business, or (ii) Seller’s ability or Republic</p>	<p>«Անցանկալի Էական Ազդեցություն» նշանակում է անցանկալի էական ազդեցություն (i) Գործունեության (ֆինանսական կամ այլ) դրության, աշխատանքների, ակտիվների, գործունեության արդյունքների կամ զարգացման հեռանկարների վրա: Անցանկալի Էական Ազդեցություն չեն համարվում (Ա) ԱՄՆ-ի կամ ՀՀ-ի տնտեսական կամ քաղաքական ընդհանուր իրավիճակում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք ոլորտում գործող այլ մասնակիցների համեմատությամբ Գործունեության վրա էական անհամաչափ ազդեցություն չեն թողնում, և/կամ (Բ) բոլոր այն փոփոխությունները (քացառությամբ Կիրառելի</p>

<p>of Armenia’s ability to consummate the transactions contemplated by this Agreement or (iii) the validity or enforceability of the rights of the Lenders under the Financing Documents or the ability of the Buyer to comply with its obligations thereunder.</p>	<p>Օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները) և/կամ պայմանները, որոնք ընդհանուր առմամբ ազդում են ամբողջ ոլորտի վրա և որոնք որպես թիրախ չեն հետապնդում Գործունեությանը կամ Գործունեության վրա էական անհամաչափ ազդեցություն չեն թողնում: Անցանկալի էական Ազդեցություն է համարվում նաև (ii) սույն Պայմանագրով նախատեսված գործարքները կատարելու Վաճառողի կամ Հայաստանի Հանրապետության հնարավորության և/կամ (iii) Ֆինանսական Փաստաթղթերի համաձայն Փոխատուների ունեցած իրավունքների վավերականության և/կամ դատական կարգով դրանց կատարման հնարավորության կամ Ֆինանսական Փաստաթղթերով նախատեսված Գնորդի պարտավորությունները կատարելու հնարավորության վրա անցանկալի էական ազդեցությունը:</p>
<p>“Non-Avoidable Costs” means the full amount in USD or otherwise of Buyer’s proven costs, fees, dues and expenditure reasonably incurred (other than pursuant to the Financing Documents) through the relevant interruption in the performance of any Project Agreement, as evidenced by invoices, including breakage costs thereunder, to the extent such costs, fees, dues and expenditure cannot be avoided or reduced through good faith action by Buyer, together with such additional amount as shall be necessary to ensure that the amount received by Buyer from the Seller or the Republic of Armenia in accordance with Section 3.02, as the case may be, net of any Tax payable thereon by Buyer, will be sufficient to meet such proven cost, fees, dues and expenditures.</p>	<p>«Անխուսափելի Ծախսեր» նշանակում է Գնորդի կողմից Նախագծային Պայմանագրերով նախատեսված պարտավորությունները չկատարելու հետևանքով կրած ցանկացած հաստատված և ողջամիտ ծախս՝ ԱՄՆ դոլարով կամ այլ արժույթով՝ կատարված ցանկացած հաստատված և ողջամիտ վճարում կամ մուծված ցանկացած հաստատված և ողջամիտ տուրք (բացառությամբ Ֆինանսական Փաստաթղթերով նախատեսված և դրանց համաձայն կրած ծախսերի, կատարված վճարումների, մուծված տուրքերի), որոնք Գնորդը կարող է հիմնավորել հաշիվ-ապրանքագրերով, ինչպես նաև Նախագծային Պայմանագրերով պարտավորությունները չկատարելու համար նախատեսված տույժ ու տուգանքները, այն դեպքում, եթե այդ ծախսերը,</p>

	<p>վճարները և տուրքերը հնարավոր չի եղել նվազեցնել կամ չեզոքացնել Գնորդի բարելսիդճ գործողությունների հետևանքով, գումարած այնքան լրացուցիչ գումար համաձայն Կետ 3.02-ի, որ ՀՀ կամ Վաճառողի կողմից Գնորդին գումար վճարելու դեպքում անհրաժեշտ կլինի, որպեսզի Հարկերը վճարելուց հետո վերջինս ստանա այն գումարը, որը համարժեք է նշված ծախսերի, վճարների և տուրքերի հանրագումարին:</p>
<p>“Person” means an individual, corporation or other legal entity, including a Governmental Authority.</p>	<p>«Անձ» նշանակում է ֆիզիկական անձ, կորպորացիա կամ այլ իրավաբանական անձ, ներառյալ Իշխանական Մարմինները:</p>
<p>“Power Purchase Agreement” means the power purchase agreement, in the agreed form, to be entered into on or prior to the Closing Date between Buyer and AEN, as may be amended, from time to time by the parties thereto in accordance with this Agreement, the Generation License including, if applicable, any replacement power purchase agreement with a new distributor of electricity successor to AEN, as may be approved by the Regulator.</p>	<p>«Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագիր» նշանակում է, էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրի համաձայնեցված տարբերակը, որը պետք է կնքվի Գնորդի և ՀԷՑ-ի միջև Գործարքի Ավարտման Օրը կամ մինչ այդ՝ սույն Պայմանագրի, Էլեկտրական Էներգիայի (Հզորության) Արտադրության Գործունեության Լիցենզիայի համաձայն կողմերի կողմից կատարված բոլոր փոփոխություններով հանդերձ, ներառյալ, կիրառելի լինելու պարագայում, ՀԷՑ իրավահաջորդ ընկերության հետ կնքված և Կարգավորող Մարմնի կողմից հաստատված էլեկտրաէներգիայի առուվաճառքի նոր պայմանագիրը:</p>
<p>“Pre-Closing Tax Period” means (i) any Tax period ending on or before the Closing Date and (ii) with respect to a Tax period that commences before but ends after the Closing Date, the portion of such period up to and including the Closing Date.</p>	<p>«Գործարքի Ավարտման Օրվան Նախորդող Հարկատու Ժամանակաշրջան» նշանակում է (i) ցանկացած հարկատու ժամանակաշրջան, որն ավարտվում է Գործարքի Ավարտման Օրը կամ մինչ այդ, իսկ (ii) եթե հարկատու ժամանակաշրջանը սկսվել է Գործարքի Ավարտման Օրվանից առաջ, սակայն</p>

	<p>ավարտվում է դրանից հետո, ապա այդ ժամանակաշրջանի այն հատվածը, որը նախորդում է Գործարքի Ավարտման Օրվան և ընդգրկում է այդ օրը:</p>
<p>“Project” means the project proposed to be undertaken by Buyer in relation to the Facilities and operation of the Facilities.</p>	<p>«Նախագիծ» նշանակում է Սարքավորումների և դրանց շահագործման վերաբերյալ Գնորդի կողմից առաջարկված նախագիծը:</p>
<p>“Project Agreement” means any of the documented contractual agreements to which Buyer, Seller, an Armenian Authority, AEN (or any successor), or any Affiliate of any of them, is from time to time a party, that is necessary for or in connection with the transfer of the Facilities to Buyer, the Electro-Mechanical Refurbishment, construction, the ownership, operation and maintenance of, and the generation, delivery and sale of electricity from, the Facilities together with all activities ancillary thereto, including without limitation this Agreement, the Power Purchase Agreement and the Financing Documents, provided that the terms of such contractual agreements are entered into on an arm’s length basis.</p>	<p>«Նախագծային Պայմանագրեր» նշանակում է ցանկացած գրավոր պայմանագիր, որին ժամանակ առ ժամանակ կարող են կողմ հանդիսանալ Գնորդը, Վաճառողը, ՀՀ իշխանական մարմինները, ՀԷՑ-ը (վերջինիս իրավահաջորդ ընկերությունը) կամ նրանց հետ Փոխկապակցված Անձինք և որն անհրաժեշտ է կամ կապված է Սարքավորումները Գնորդին վաճառելու, Էլեկտրամեխանիկական վերագինում, շինարարություն իրականացնելու, Սարքավորումների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, դրանք շահագործելու, դրանց տեխնիկական սպասարկումն իրականացնելու, դրանց միջոցով էլեկտրաէներգիա արտադրելու, մատակարարելու և վաճառելու, այդ կապակցությամբ ցանկացած այլ գործունեություն իրականացնելու և աշխատանքներ կատարելու հետ, ներառյալ, սակայն ոչ միայն, սույն Պայմանագիրը, Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագիրը և Ֆինանսական Փաստաթղթերը, պայմանով, որ վերոնշյալ պայմանագրերի կնքվել են են շուկայական պայմաններով:</p>
<p>“Project Agreement Approvals” means any consent, license, waiver, filing or other permission or authorization required from time to time by or entered into with any Armenian Authority in connection with the</p>	<p>«Նախագծային Պայմանագրերի Համար Պահանջվող Թ-ույլտվություններ» նշանակում է ցանկացած համաձայնություն, լիցենզիա, իրավունքներից հրաժարում, գրանցում կամ այլ</p>

<p>proper conduct and performance by any party to this Agreement, any Project Agreement, in each case of its obligations thereunder, or the execution or delivery thereof.</p>	<p>թույլտվություն կամ հավանություն, որը ժամանակ առ ժամանակ պահանջվում կամ տրամադրվում է ՀՀ Իշխանական Մարմիններից կողմից սույն Պայմանագրով, ինչպես նաև Նախագծային Պայմանագրերով ստանձնած պարտավորությունները դրանցով կողմ հանդիսացող Անձանց կողմից պատշաճ կերպով կատարելու, նրանց կողմից իրականացվող գործունեությունը պատշաճ կերպով իրականացվելու կամ սույն Պայմանագիրը և Նախագծային Պայմանագրերը նրանց կողմից ստորագրվելու և տրամադրվելու համար:</p>
<p>“Regulator” means the Public Services Regulatory Commission of Armenia (or PSRC) and any other Governmental Authority or regulatory body authorized under Armenian law to regulate the Armenian electricity sector or, as the case may be, any aspect of such sector.</p>	<p>«Կարգավորող Մարմին» նշանակում է ՀՀ Հանրային Ծառայությունների Կարգավորող Հանձնաժողովը (կամ ՀԾԿՀ) և ցանկացած այլ Իշխանական Մարմին կամ կարգավորող մարմին, որը ՀՀ օրենսդրության համաձայն լիազորված է կարգավորել ՀՀ էլեկտրաէներգիայի ոլորտը, կամ այդ ոլորտի այս կամ այն հատվածը:</p>
<p>“Regulatory Approvals” means any decree, consent, authorization, Permit (including any Environmental Permits) or any other instrument necessary or appropriate in connection with the execution, delivery and performance of this Agreement and the Project Agreements and the consummation of the transactions contemplated hereunder, including, for the avoidance of doubt, those listed in Schedule 4.03.</p>	<p>«Կարգավորող Մարմնից Պահանջվող Թույլտվություններ» նշանակում է սույն Պայմանագիրը և Նախագծային Պայմանագրերը ստորագրելու և դրանցով նախատեսված գործարքները կատարելու համար անհրաժեշտ կամ ցանկալի բոլոր որոշումները, համաձայնությունները, հավանությունները, թույլտվությունները (ներառյալ Բնապահպանական Օրենսդրությամբ Պահանջվող Թույլտվությունները) և այլ փաստաթղթերը, ներառյալ, երկիմաստություններից խուսափելու նպատակով Կետ 4.03–ում սահմանվածները:</p>

<p>“Sites” means the sites on which the Facilities is located, as more particularly described in Schedule 1.</p>	<p>«Տեղակայման Վայր» նշանակում է այն վայրերը, որտեղ տեղակայված են Սարքավորումները, և որն առավել մանրամասն նկարագրված է Հավելված [1]- ում:</p>
<p>“Tariff Schedule” means the tariff schedule relating to the Project as from the Closing Date and thereafter, referred to in Section 6.07 below, as attached as Exhibit A hereto (or with such other changes as may be agreed from time to time approved by the Regulator and the Buyer in accordance with this Agreement, the Generation License and Applicable Law).</p>	<p>«Սակագնային Պլան» նշանակում է սույն Պայմանագրի 6.07 Կետով սահմանված սակագնային պլանը, որը կիրառվելու է Նախագծի նկատմամբ Գործարքի Ավարտման Օրվանից հետո և ներկայացված է Հավելված Ա- ում (այս հասկացությունը ներառում է սույն Պայմանագրի, Էլեկտրական Էներգիայի (Հզորության) Արտադրության Գործունեության Լիցենզիայի և Կիրառելի Օրենսդրության համաձայն Կարգավորող Մարմնի և Գնորդի համաձայնությանը ժամանակ առ ժամանակ կատարված և Կարգավորող Մարմնի կողմից հաստատված Սակագնային Պլանի բոլոր փոփոխությունները):</p>
<p>“Tax” means (i) any tax, governmental fee or other like assessment or charge of any kind whatsoever (including withholding on amounts paid or received), together with any interest, penalty, or additional amount imposed by any Governmental Authority (a “Taxing Authority”) responsible for the imposition of any such tax, or (ii) liability for the payment of any amounts of the type described in (i) as a result of being party to any agreement or any express or implied obligation to indemnify any other Person.</p>	<p>«Հարկ» նշանակում է (i) ցանկացած հարկ, կառավարության կողմից գանձվող վճար կամ պարտադիր վճարման ենթակա որոշակի մեկ այլ ցանկացած գումար կամ վճար (ներառյալ վճարված կամ ստացված գումարներից կատարված պահումները), գումարած դրանց նկատմամբ հաշվարկվող տոկոսները, տույժերը և լրացուցիչ այլ գումարները, որոնք կարող են սահմանվել համապատասխան հարկատեսակը սահմանելու իրավասություն ունեցող Իշխանական Մարմինների (Հարկային Մարմինների) կողմից կամ (ii) վերոգրյալ (i) ենթակետով նախատեսված գումարները և վճարները վճարելու պարտավորություն, որը բխում է մեկ այլ Անձի փոխհատուցում վճարելու վերաբերյալ պայմանագրից կամ այդ կապակցությամբ ենթադրվող կամ գրավոր ամրագրված մեկ այլ պարտավորությունից:</p>

<p>“Technical Specifications” means those certain technical, operating and minimum performance specifications of the Buyer set forth in the Generation License.</p>	<p>«Տեխնիկական պայմաններ» նշանակում է էլեկտրական էներգիայի (Հզորության) Արտադրության Գործունեության Լիցենզիայով Գնորդի համար սահմանված տեխնիկական, շահագործման և նվազագույն կատարողականի պայմանները:</p>
<p>“Total Payment” means the aggregate consideration payable by AEN (or any successor) to the Buyer pursuant to the Power Purchase Agreement in accordance with the Tariff Schedule and Section 6.07 below, in respect of making available generating capacity and delivering electrical energy during any relevant period and which shall be equal for any given year to the sum of (i) the annual capacity payment set forth in column 7 of table 1 of the Tariff Schedule to the extent that the Contractual Capacity (as defined in the Tariff Schedule) was actually made available and (ii) the product of the energy price set forth in column 9 of table 1 of the Tariff Schedule and the energy output (measured in MWh) of the Facilities over the same period.</p>	<p>«Համախառն Վճար» նշանակում է գներացիոն հզորությունները հասանելի դարձնելու և էլեկտրաէներգիա մատակարարելու դիմաց էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագրի, Սակագնային Պլանի և Սույն Պայմանագրի 6.07 կետի համաձայն ՀԷՑ (կամ իրավահաջորդ ընկերության) կողմից համապատասխան յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար Գնորդին վճարման ենթակա հատուցման հանրագումարը, որը յուրաքանչյուր տարվա համար հավասար է ներքոնշյալ մեծությունների գումարին (i) Սակագնային պլանի 1 աղյուսակի 7 սյունակի տարեկան հզորության վճարին, այնքանով, որ Պայմանագրային հզորությունը (Սակագնային պլանով սահմանված ձևով) ապահովվել է, և (ii) Սակագնային պլանի 1 աղյուսակի 9 սյունակով սահմանված էլեկտրաէներգիայի արժեքը և նույն ժամանակաշրջանում Սարքավորումների էլեկտրաէներգիայի (հաշվարկված ՄՎտժ-ով) ծախսը:</p>
<p>“U.S. Dollar”, “Dollar”, “U.S.\$”, “\$” and “USD” each means the lawful currency of the United States of America.</p>	<p>«ԱՄՆ դոլար», «Դոլար», «ԱՄՆ \$» և «\$» նշանակում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինական արժույթը:</p>
<p>Each of the following terms is defined in the Section set forth opposite such term:</p>	<p>Ստորև թվարկված եզրույթների նշանակությունները տրված են դրանց դիմաց նշված Կետերում.</p>

Term Հասկացություն	Section Կետ
Agreement Պայմանագիր	Preamble Ներածություն
Apportioned Obligations Կողմերի Միջև Բաշխված Պարտավորություններ	9.01 (b) 9.01 (բ)
Armenian Deed Փոխանցման պայմանագիր	2.08 2.08
Business Գործունեություն	Recitals Նախաբան
Buyer Գնորդ	Preamble Ներածություն
Closing Գործարքի Ավարտ	2.04 2.04
Damages Վնասներ	12.02 12.02
Easements Սերվիտուտներ	4.09(a) 4.09(ա)
EM Refurbishment Scheduled Completion Date ԷՄ Վերազինման Աշխատանքներն Ավարտելու Համար Նախատեսված Օր	7.03 (b) 7.03 (բ)

Facilities Սարքավորումներ	Recitals Նախաբան
First Installment Առաջին մասնաբաժին	2.03(a) 2.03(ա)
Good Faith Deposit Նախավճար	2.04 2.04
Indemnified Party Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմ	12.03 12.03
Indemnifying Party Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմ	12.03 12.03
Long Stop Date Վերջնաժամկետ	13.01 (b) 13.01 (բ)
material breach կոպիտ խախտում	3.03 (d) 3.03 (դ)
Movable Property Շարժական Գույք	2.01(b) 2.01(բ)
Non-discriminatory Change in Armenian Law Հայկական օրենսդրության՝ խտրականություն չնախատեսող փոփոխություն	3.05(b) 3.05(բ)
Official Exchange Rate Պաշտոնական փոխարժեք	2.03(c) 2.03(գ)

Permits	4.11
Թույլտվություններ	4.11
Post-Closing Tax Period	9.01 (b)
Գործարքի Ավարտման Օրվան Հաջորդող Հարկատու Ժամանակաշրջան	9.01 (բ)
Purchase Price	2.03
Վաճառքի Գին	2.03
Purchased Assets	2.01
Վաճառվող Գույք	2.01
Qualified Jurisdiction	14.06
Թույլատրելի իրավագորություն	14.06
Real Property	1.01 (a)
Անշարժ Գույք	1.01 (ա)
Real Property Documents	4.09(a)
Անշարժ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման փաստաթղթեր	4.09(ա)
Relief Event	7.05
Պարտավորությունների կատարումից ազատող իրադարձություն	7.05
Repurchase Closing Date	3.06
Ետ Գնման Գործարքի Ավարտման Օր	3.06
Repurchase Notice	3.01
Ետ Գնման Ծանուցում	3.01

Repurchase Price	3.02
Ետ Գնվող Գույքի Արժեք	3.02
Repurchase Right	3.01
Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք	3.01
Second Installment	2.03 (b)
Երկրորդ Մասնաբաժին	2.03 (բ)
Third Party Claim	12.03
Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողություններ	12.03
Triggering Event	3.03
Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձություն	3.03
VAT	2.03
ԱԱՀ	2.03
Warranty Breach	12.02
Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտում	12.02

<p>Section 1.02. <i>Principles of Interpretation.</i> In this Agreement a reference, whether or not expressly mentioned in a particular section, to (a) “include” or “including” shall be construed to be followed by the phrase “without limitation”, (b) an agreement, a document or law is a reference to such agreement, document or law as amended in accordance with its terms and, where applicable, the terms of this Agreement, from time to time and (c) any reference herein to any Person shall be construed to include such Person’s permitted successors and assigns.</p>	<p>Կետ 1.02. <i>Մեկնաբանության Սկզբունքներ:</i> Սույն Պայմանագրում անկախ ուղղակիորեն ամրագրված լինելու հանգամանքից (ա) «ներառում է» կամ «ներառյալ» բառերը պետք է մեկնաբանել այնպես կարծես, եթե դրանցից հետո գրված լիներ «սակայն ոչ միայն» արտահայտությունը, (բ) սույն Պայմանագրում հղումը մեկ այլ համաձայնագրի, փաստաթղթի կամ օրենքի պետք է ընկալել որպես հղում այդ համաձայնագրին, փաստաթղթին կամ օրենքին ժամանակ առ ժամանակ դրանց համաձայն, կիրառելի լինելու դեպքում նաև՝ սույն Պայմանագրի համաձայն, կատարված բոլոր փոփոխություններով հանդերձ, և (գ) սույն Պայմանագրում հղումը որևէ Անձի համարվում է հղում նաև այդ Անձի իրավահաջորդներին և իրավունքները զիջելու ճանապարհով նրանից իրավունքներ ստացած Անձանց:</p>
<p style="text-align: center;">ARTICLE 2 PURCHASE AND SALE</p>	<p style="text-align: center;">ՀՈԴՎԱԾ 2 ԱՌՈՒՎԱՃԱՌՔ</p>
<p>Section 2.01. <i>Purchase and Sale.</i> Upon the terms and subject to the conditions of this Agreement, Buyer agrees to purchase from Seller, and Seller agrees to sell and transfer to Buyer, at the Closing, free and clear of all Liens (other than the existing easements (servitudes) on the Real Property the list of which has been provided to the Buyer pursuant to Section 6.11), all of Seller’s right, title and interest in, to and under the assets, properties, of every kind and description, wherever located, real, personal or mixed, tangible or intangible, owned, or held to be used in the Business as the same shall exist on the Closing Date (the “Purchased Assets”), and specifically including:</p>	<p>Կետ 2.01. <i>Առուվաճառք:</i> Գնորդը համաձայնում է սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով Գործարքի Ավարտին Վաճառողից ձեռք բերել, իսկ Վաճառողն էլ՝ այդ պայմաններով և այդ նույն օրը Գնորդին վաճառել Գործարքի Ավարտման Օրվա դրությամբ Գործունեության մեջ օգտագործվող սեփականության իրավունքով Վաճառողին պատկանող ամբողջ գույքը, անկախ այն հանգամանքից, թե դրանք որտեղ են գտնվում, շարժական են, թե՛ անշարժ, թե՛ օժտված են միանգամից երկու հատկանիշներով, նյութական, թե՛ ոչ նյութական, և Գնորդին փոխանցել դրանց հետ</p>

	<p>կապված բոլոր իրավունքները (այսուհետ՝ «Վաճառվող Գույք»): Վաճառվող Գույքը Գնորդին է վաճառվում Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներից (բացառությամբ Անշարժ Գույքի նկատմամբ ատկա որոշ սերվիտուտների, որոնց ցանկը տրամադրվել է Գնորդին 6.11 Կետին համապատասխան) ազատ վիճակում և մասնավորապես ներառում է</p>
<p>(a) the Facilities and all real property together with all buildings, fixtures (including the turbines and other fixed machinery), and improvements erected thereon (or, where appropriate, interest therein) as listed on Schedule 4.09(a), including the construction rights with respect to the assets set forth in Schedule 4.09(a)-A (the “Inalienable Real Property”) that the Seller and the Republic of Armenia agree shall be afforded to Buyer in accordance with the terms of Section 2.08(b) below (all such property, collectively, the “Real Property”);</p>	<p>(ա) 4.09(ա) Հավելվածում նշված Սարքավորումները և ամբողջ անշարժ գույքը՝ բոլոր շենքերի, ամրացված գույքի (այդ թվում տուրբինների և ամրացված այլ տեխնիկայի), և այլ բարելավումների հետ միասին (կամ, որոշակի դեպքերում դրանցում մասնակցությունը) (այսուհետ՝ «Անշարժ Գույք»), ներառյալ 4.09(ա) Հավելվածում (Անօտարելի Անշարժ Գույք) գույքի նկատմամբ կառուցապատման իրավունքները, որոնք Վաճառողի և ՀՀ համաձայնությամբ 2.08 (բ) կետի համաձայն պետք է տրամադրվեն Գնորդին,</p>
<p>(b) all tangible personal property and interests therein, including moveable machinery, equipment, furniture, office equipment, communications equipment, vehicles, storage tanks, spare and replacement parts, fuel and other tangible property (all such property, collectively, the “Movable Property”) listed on Schedule 4.09(b);</p>	<p>(բ) նյութական հանդիսացող ամբողջ շարժական գույքը և դրանց հետ կապված իրավունքները, ներառյալ՝ շարժական տեխնիկան, սարքավորումները, կահույքը, գրասենյակային գույքը, կապի սարքավորումները, փոխադրամիջոցները, ռեզերվուարները, պահեստամասերը և փոխարինող մասերը, վառելիքը և նյութական այլ գույքը (այսուհետ բոլորը մասին՝ «Շարժական Գույք»), նշված 4.09(բ) Հավելվածում,</p>

<p>(c) all raw materials, supplies and other inventories listed on Schedule 4.09(c);</p>	<p>(գ) ամբողջ հումքը, նյութերը և ապրանքների ու նյութերի այլ պաշարները, նշված 4.09(գ) Հավելվածում,</p>
<p>(d) all rights, claims, causes of action or rights of set-off against third parties relating to or arising from the Purchased Assets, including unliquidated rights under manufacturers' and vendors' warranties;</p>	<p>(դ) երրորդ անձանց դեմ ունեցած բոլոր այն իրավունքները, պահանջները, հայց ներկայացնելու կամ հաշվանց կատարելու իրավունքները, որոնք բխում են կամ կապված են Վաճառվող Գույքի հետ, ներառյալ արտադրողի և վաճառողի կողմից տրված երաշխիքներից բխող այն իրավունքները, որոնց դրամական գնահատականը որոշված չէ,</p>
<p>(e) all transferable licenses, permits or other governmental authorization affecting, or relating in any way to, the Business or the Purchased Assets, listed on Schedule 2.01(e); and</p>	<p>(ե) բոլոր լիցենզիաները, թույլտվությունները, կառավարության կողմից տրված համաձայնությունները, որոնք հնարավոր է փոխանցել և որոնք կապված են Գործունեության կամ Վաճառվող Գույքի հետ, նշված 2.01(ե) Հավելվածում</p>
<p>(f) all books, records, invoices, files and papers, whether in hard copy or computer format related or pertaining to the Purchased Assets, including engineering, technical, operational and statistical data and records regarding the Purchased Assets and their operations, manuals and data, and any information relating to any Tax imposed on the Purchased Assets, under possession of the Seller.</p>	<p>(ե) Վաճառվող Գույքին առնչվող և Վաճառողի մոտ գտնվող բոլոր գրքերը, գրանցամատյանները, գրառումները, հաշիվ-ապրանքագրերը, ֆայլերը և թղթերը, լինեն դրանք թղթային, թե ապանյութականացված տեսքով, ներառյալ Վաճառվող Գույքի, դրանց շահագործման վերաբերյալ ինժեներական, տեխնիկական, շահագործման և վիճակագրական գրառումներն ու տվյալները, շահագործողների համար նախատեսված ձեռնարկներն ու տվյալները, ինչպես նաև Վաճառվող Գույքի նկատմամբ հաշվարկված Հարկերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները:</p>
<p>Section 2.02. <i>Liabilities.</i> Notwithstanding any provision to the contrary, Seller hereby states and confirms that Buyer is not assuming any liability or obligation of Seller (or any predecessor of Seller or any prior owner of all or part of the Business and the Seller's assets, including the Purchased Assets) of whatever nature.</p>	<p>Կետ 2.02. <i>Պարտավորություններ:</i> Վաճառողը սույնով հաստատում է, որ եթե նույնիսկ սույն Պայմանագրով այլ բան նախատեսված լինի, միևնույն է Գնորդը չի ստանձնում Վաճառողի (կամ վերջինիս իրավանախորդներից որևիցե մեկի կամ էլ Վաճառողի գործունեությունը կամ դրա մի մասը նախկինում իրականացրած, կամ Վաճառողի ակտիվների, ներառյալ Վաճառվող Գույքի, կամ դրանց մի մասի նախկին սեփականատեր հանդիսացած որևիցե Անձի) որևէ</p>

<p>Section 2.03. <i>Purchase Price.</i> The purchase price for the Purchased Assets (the “Purchase Price”) shall be AMD 85,813,200,000, including AMD 14,302,200,000 of value-added tax (“VAT”), to be allocated among the Purchased Assets in accordance with the allocation set out in the Handover Act prepared pursuant to Section 2.06 below, and to be adjusted under Section 2.03(c) below. The Parties acknowledge that the Purchase Price includes the consideration payable by the Buyer in connection with the construction rights afforded to it with respect to the Inalienable Real Property pursuant to Section 2.08(b) below. The Purchase Price shall be paid by the Buyer as follows:</p>	<p>պարտավորություն:</p> <p>Կետ 2.03 <i>Վաճառքի Գինը:</i> Վաճառվող Գույքի վաճառքի գինը (այսուհետև՝ «Վաճառքի գին») կազմում է 85,813,200,000 ՀՀ դրամ, ներառյալ 14,302,200,000 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), որոնք հաշվարկվում են Վաճառվող գույքի նկատմամբ համաձայն սույն Պայմանագրի ներքոնշյալ 2.03 (գ) և 2.06 կետերով սահմանված կարգով կազմված Հանձնման ընդունման ակտում սահմանված գնագոյացման մեխանիզմի: Կողմերն ընդունում են, որ Վաճառքի գինը ներառում է 2.08 (բ) կետի համաձայն իրեն փոխանցված Անօտարելի Անշարժ Գույքի կառուցապատման իրավունքի դիմաց փոխհատուցումը: Վաճառքի Գինը ենթակա է վճարման Գնորդի կողմից հետևյալ կարգի համաձայն:</p>
<p>(a) 50% of the Purchase Price, i.e. AMD 42,906,600,000, including AMD 7,151,100,000 of VAT (the “First Installment”) to be paid to the Seller at the Closing Date as provided in Section 2.05(a) ; and</p>	<p>(ա) Վաճառվող Գույքի արժեքի 50%-ը, այն է՝ 42,906,600,000 ՀՀ դրամ, ներառյալ 7,151,100,000 ՀՀ դրամ ԱԱՀ-ն (այսուհետև՝ Առաջին մասնաբաժին), ենթակա է Վաճառողին վճարման Գործարքի Ավարտման Օրը 2.05 (ա) Կետով սահմանված կարգով, և</p>
<p>(b) 50% of the Purchase Price, i.e. AMD 42,906,600,000, including AMD 7,151,100,000 of VAT to be paid to the Seller on the first anniversary date of the Closing Date (or, if not a Business Day, on the first Business Day after such anniversary date) (the “Second Installment”), subject to a right of set-off in the event of a breach by the Seller or the Republic of Armenia of their representations, warranties, covenants or other obligations under this Agreement or if a Triggering Event has occurred and has not yet been remedied or settled pursuant to Section 3 below. Such payment shall be made in immediately available funds by wire transfer to an account of Seller with a bank in Yerevan, Armenia designated by Seller,</p>	<p>(բ) Վաճառվող Գույքի արժեքի 50%-ը, այն է՝ 42,906,600,000 ՀՀ դրամ, ներառյալ 7,151,100,000 ՀՀ դրամ ԱԱՀ-ն, ենթակա է վճարման Վաճառողին Գործարքի Ավարտման Օրվա առաջին տարեդարձի օրը (եթե այդ օրը Աշխատանքային Օր չէ, ապա՝ այդ օրվան հաջորդող առաջին Աշխատանքային Օրը) (այսուհետև՝ «Երկրորդ Մասնաբաժին»), որը, սակայն, Գնորդն իրավունք ունի հաշվանցել, եթե Վաճառողը կամ ՀՀ խախտած լինեն սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները կամ եթե պարզվի, որ սույն Պայմանագրի համաձայն նրանց կողմից տրված երաշխիքներն ու հավաստիքները հավաստի, ամբողջական, ստույգ և ճշմարիտ չեն կամ եթե տեղի է ունեցել Ետ Գնման Պահանջ</p>

<p>by notice to Buyer, which notice shall be delivered not later than three Business Days prior to the applicable payment date.</p>	<p>Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձություն : և ներքոնշյալ 3 Կետի համաձայն չի ուղղվել կամ վերացվել: Նշված Գումարը ենթակա է վճարման Վաճառողի կողմից տրված ծանուցման մեջ նշված (Երևանում Հայաստանի տարածքում, գտնվող) բանկում Վաճառողի հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով: Փոխանցումը պետք է կատարվի այնպես, որպեսզի Վաճառողը կարողանա անմիջապես ստանալ և տնօրինել փոխանցված դրամական միջոցները: Նշված ծանուցումը պետք է առաքված լինի համապատասխան վճարումը կատարելու օրվանից առնվազն երեք Աշխատանքային Օր առաջ:</p>
<p>(c) Each payment of a portion of the Purchase Price that is due and payable in AMD under this Section 2.03 will be increased or decreased, as applicable, by the difference, expressed as a percentage, between the Official Exchange Rate on 30 January 2015 (being USD 1 = AMD 476.74) and the Official Exchange Rate on the day falling two Business Days prior to the date of payment, provided that no adjustment shall be made to the extent such difference is 0.05% or less. For purposes of this Section 2.03, the “Official Exchange Rate” shall be the rate for converting USD to AMD as published by the Central Bank of Armenia.</p>	<p>(գ) Վաճառքի Գնի յուրաքանչյուր մասնաբաժին, որը սույն Պայմանագրի 2.03 Կետի համաձայն ենթակա է վճարման ՀՀ դրամով, պետք է անհրաժեշտության դեպքում նվազեցվի կամ ավելացվի 2015թ. Հունվարի 30-ի (1 ԱՄՆ դոլար = 476.74 ՀՀ դրամ) և վճարումը կատարելու օրվան անմիջապես նախորդող երկրորդ Աշխատանքային Օրվա դրությամբ Պաշտոնական Փոխարժեքների միջև եղած տոկոսային տարբերության չափով, պայմանով, որ եթե այդ տարբերությունը կազմում է 0.05% կամ ավելի փոքր մեծություն, ապա Վաճառքի Գնի վերահաշվարկ չի կատարվի: Սույն 2.03 Կետի իմաստով «Պաշտոնական Փոխարժեք» համարվում է ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը:</p>
<p>(d) All payments under this Section 2.03 shall be subject to Seller having issued to Buyer an invoice properly reflecting the VAT due as a part of the applicable installment of the Purchase Price.</p>	<p>(դ) Սույն 2.03 Կետով նախատեսված բոլոր վճարումները Գնորդի կողմից կատարվելու համար, որպես նախապայման, Վաճառողը պետք է կազմի և Գնորդին ներկայացնի համապատասխան հաշիվ-ապրանքագիր՝ նշելով տվյալ մասնաբաժնի հետ վճարման ենթակա ԱԱՀ գումարի չափը:</p>

<p>(e) The Seller and the Republic of Armenia shall have the right to suspend performance of their obligations under this Agreement if the payment of the Second Installment is not made when due in accordance with Section 2.03 (b).</p>	<p>(ե) Վաճառողը և Հայաստանի Հանրապետությունը իրավունք ունեն կասեցնել սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը, եթե Գնորդը ժամանակին չի կատարել սույն Պայմանագրի 2.03 (բ) Կետով նախատեսված Երկրորդ Մասնաբաժնի վճարումը:</p>
<p>Section 2.04. <i>Good Faith Deposit.</i></p> <p>(a) USD 5 million (the “Good Faith Deposit”) has been transferred by CG Solutions Global Holding Company LLC on 29 January 2014, in immediately available funds by wire transfer to the Escrow Agent.</p> <p>(b) The Good Faith Deposit shall be forthwith returned to CG Solutions and/or the Buyer (as directed by the Buyer) in the following circumstances:</p> <p>(i) if this Agreement is terminated by the Buyer as permitted by Section 6.04(b) or Section 6.11; or</p> <p>(ii) if this Agreement is terminated as permitted by Section 13.01; or</p> <p>(iii) if the transaction contemplated under this Agreement is consummated.</p>	<p>Կետ 2.04. <i>Նախավճար:</i></p> <p>(ա) 5 միլիոն ԱՄՆ դոլար (այսուհետև՝ «Նախավճար») Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի Էլ-Էլ-Սի-ի կողմից 29 հունվարի 2014թ.-ին՝ բանկային փոխանցմամբ փոխանցվել է Էսքրոու Գործակալին:</p> <p>(բ) Նախավճարն ենթակա է վերադարձման Սի-Ջի Սոլյուշնսին և/կամ Գնորդին (ինչպես կպահանջվի Գնորդի կողմից) հետևյալ հանգամանքներում</p> <p>(i) եթե սույն Պայմանագիրը լուծվել է Գնորդի կողմից, ինչպես որ թույլատրված է 6.04 (բ) Կետով կամ 6.11 Կետով, կամ</p> <p>(ii) եթե սույն Պայմանագիրը լուծվում է Կետ 13.01 սահմանված կարգով. կամ</p> <p>(iii) եթե սույն Պայմանագրով սահմանված գործարքն իրականացվել է:</p>
<p>Section 2.05. <i>Closing.</i> The closing (the “Closing”) of the purchase and sale of the Purchased Assets hereunder shall take place at the offices of Ameria, 9, G. Lusavorich Street, Yerevan, Armenia, as soon as practically possible after satisfaction or, to the extent permissible, waiver by the party or parties entitled to the benefit of the conditions set forth in Article 11 or at such</p>	<p>Կետ 2.05. Վաճառվող Գույքի վաճառելու և գնելու համար պահանջվող ավարտական աշխատանքները («Գործարքի Ավարտ») կիրականացվեն Ամերիայի ՀՀ, ք.Երևան, Գ. Լուսավորչի 9 հասցեում գտնվող գրասենյակում, Հոդված 11-ում նշված պայմանները բավարարված լինելուց հետո՝ կամ, թույլատրված լինելու դեպքում՝ շահառու</p>

<p>other time or place as Buyer and Seller may agree. At the Closing:</p>	<p>Անձանց կողմից այդ պայմաններից հրաժարվելուց հետո՝ որքան հնարավոր է սեղմ ժամկետներում . կամ Գնորդի և Վաճառողի համաձայնությանը սահմանված ցանկացած մեկ այլ վայրում և ժամանակ: Գործարքի Ավարտման ժամանակ</p>
<p>(a) Buyer shall pay Seller the First Installment, in immediately available funds by wire transfer to an account of Seller with a bank in Yerevan, Armenia designated by Seller, by notice to Buyer, which notice shall be delivered not later than three Business Days prior to the Closing Date.</p>	<p>(ա) Գնորդը Վաճառողի կողմից ծանուցմանը նշված՝ Հայաստանի տարածքում, Երևանում գտնվող բանկում սպասարկվող Վաճառողի բանկային հաշվին պետք է կատարի Առաջին մասնաբաժնի վճարումը: Փոխանցումը պետք է կատարվի այնպես, որպեսզի Վաճառողը կարողանա անմիջապես ստանալ և տնօրինել փոխանցված դրամական միջոցները: Նշված ծանուցումը պետք է առաքված լինի Գործարքի Ավարտման Օրվանից առնվազն երեք Աշխատանքային Օր առաջ:</p>
<p>(b) Buyer shall enter into the Power Purchase Agreement with AEN (unless the same is signed prior to the Closing Date).</p>	<p>(բ) Գնորդը պետք է ՀԷՑ-ի հետ կնքի Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագիր (եթե այն չի կնքվել նախքան Գործարքի Ավարտման Օրը):</p>
<p>(c) Seller shall deliver, to Buyer, ContourGlobal and Lenders, legal opinions from [●] confirming the validity and binding effect under Armenian law of this Agreement and the Power Purchase Agreement, substantially in the form set out in Schedule 2.05.</p>	<p>(գ) Վաճառողը Գնորդին, ՔոնթուրԳլոբալին և Փոխատուներին կտրամադրի [●] կողմից պատրաստված իրավաբանական եզրակացությունը, որով կհաստատվի, որ սույն Պայմանագիրը, Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագիրը ՀՀ օրենքների համաձայն վավեր են և պարտադիր կատարման համար: Եզրակացությունը պետք է տրամադրվի 2.05 Հավելվածով սահմանված ձևով:</p>
<p>(d) The Republic of Armenia shall deliver, to Buyer, ContourGlobal and Lenders, (i) legal opinions from [●] and (ii) an official statement from the Ministry of Justice of the Republic of Armenia and the Prosecutor General, each confirming the validity and binding effect under Armenian law of this Agreement and the Power Purchase Agreement, substantially in the form set out in Schedule 2.05.</p>	<p>(դ) ՀՀ-ն Գնորդին, ՔոնթուրԳլոբալին և Փոխատուներին կտրամադրի (i) [●] կողմից պատրաստված իրավաբանական եզրակացությունը և (ii) ՀՀ Արդարադատության Նախարարության և Գլխավոր Դատախազի կողմից կազմված պաշտոնական գրություն, որոնցով կհաստատվի, որ սույն Պայմանագիրը և Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագիրը ՀՀ օրենքների համաձայն վավեր են և պարտադիր կատարման համար: Նշված գրությունը և եզրակացությունը պետք է</p>

	տրամադրվեն 2.05 Հավելվածով սահմանված ձևով:
(e) A written statement from the Ministry of Nature Protection of Armenia that the Seller has not been subject to environmental restrictions or administrative proceedings with respect to environmental matters prior to Closing, and that the Electro-Mechanical Refurbishments of the facilities and other activities shall be carried out with due consideration of environmental standards.	(ե) Գրություն ՀՀ Բնապահպանության Նախարարությունից առ այն, որ Գործարքի Ավարտման Օրվանից առաջ Վաճառողի նկատմամբ չեն կիրառվել բնապահպանական սահմանափակումներ, վերջինիս դեմ բնապահպանական խնդիրների առնչությամբ չեն հարուցվել վարչական վարույթներ, և որ Սարքավորումների Էլեկտրամեխանիկական Վերազինման ու մյուս բոլոր աշխատանքները կիրականացվեն բնապահպանական օրենսդրության պահանջների հաշվառմամբ:
(f) Seller shall deliver to Buyer such deeds (including the Armenian Deed as amended pursuant to Section 2.08 below), bills of sale and other good and sufficient instruments of conveyance as the parties and their respective counsel shall deem reasonably necessary or appropriate to vest in Buyer all right, title and interest in, to and under the Purchased Assets.	(գ) Վաճառողը Գնորդին կտրամադրի վաճառքը, սեփականության իրավունքի փոխանցումը բավարար և պատշաճ կերպով հավաստող այնպիսի փաստաթղթեր, ակտեր, պարտավորագրեր (ներառյալ Փոխանցման պայմանագիրը՝ փոփոխված 2.08 Կետի համաձայն), որոնք Կողմերի կամ նրանց խորհրդատուների կարծիքով կարող են ողջամտորեն անհրաժեշտ լինել Վաճառվող Գույքի նկատմամբ իրավունքները Գնորդին փոխանցելու համար:
(g) A handover act prepared pursuant to procedure established under Section 2.06 shall be executed by the authorized representatives of the Seller and the Buyer before Closing in accordance with such section. The Buyer is entitled to unilaterally waive the requirement provided herein, and proceed to Closing without the handover act.	(ե) Հանձնման-ընդունման ակտը Վաճառողի և Գնորդի լիազոր ներկայացուցիչների կողմից կպատրաստվի և կստորագրվի սույն Պայմանագրի 2.06 Կետով նախատեսված կարգի համաձայն, նախքան Գործարքի Ավարտման Օրը: Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն ազատել Վաճառողին հանձնման-ընդունման ակտ կազմելու և ստորագրելու պարտականությունից և անցնել Գործարքի Ավարտին առանց հանձնման-ընդունման ակտ ստորագրելու:
Section 2.06. <i>Handover.</i> Prior to the Closing the Parties agree to establish a handover committee which will be established to perform the functions related to the handover of the Purchased Assets, including the verification of the physical existence of the items included in the list of Purchased Assets. The Buyer and the Seller shall each appoint up to 3 members to form	Կետ 2.06. <i>Հանձնում-ընդունում:</i> Նախքան Գործարքի Ավարտը Կողմերը կկազմեն հանձնաժողով, որը կգրադվի Վաճառվող Գույքի հանձնման-ընդունման իրականացմամբ, ինչպես նաև կստուգի Վաճառվող Գույքի ցանկում ներառված գույքի ֆիզիկական գոյությունը: Գնորդը և Վաճառողը յուրաքանչյուրը կնշանակեն այդպիսի

<p>the handover committee. A handover act shall be signed by all committee members and shall be submitted to the Parties for approval (the “Handover Act”).</p>	<p>հանձնաժողովի մինչև 3 անդամ: Հանձնման-ընդունման ակտը («Հանձնման-ընդունման ակտ») պետք է ստորագրվի հանձնաժողովի բոլոր անդամների կողմից և ներկայացվի Կողմերի հավանությանը:</p>
<p>Section 2.07. <i>Waiver of Statutory Liens.</i> The Seller hereby irrevocably waives the benefit of any statutory Liens arising under Article 504, point 6 of the Civil Code of Armenia arising in connection with the Second Installment (to the extent the same shall remain outstanding after the Closing Date).</p>	<p>Կետ 2.07. <i>Հրաժարում Օրենքի Ուժով Ծագող Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներից:</i> Վաճառողը սույնով մեկընդմիջտ, առանց վերանայման և վերացման իրավունքի հրաժարվում է Երկրորդ Մասնաբաժինը (այնքանով, որքանով այն դեռ չի վճարվել Գործարքի Ավարտման Օրվանից հետո) վճարելու կապակցությամբ ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 504 հոդվածի 6-րդ կետի ուժով իր օգտին ծագող իրավունքից:</p>
<p>Section 2.08. <i>Transfer of Real Property Rights.</i> (a) In order to comply with the mandatory rules and requirements of Armenian Law and the formalities necessary to be observed to ensure that real property transactions are valid, the Parties have executed an Armenian Law governed real property sale and purchase agreement dated 17 April 2014, verified by a notary and submitted for Armenian state registration (the “Armenian Deed”) which is hereby incorporated by reference into this Agreement. All terms of this Agreement will be applicable to the transfer of real property pursuant to the Armenian Deed, which shall contain a reference to this Agreement as the document governing the conditions of such transfer.</p>	<p>Կետ 2.08. Անշարժ գույքի փոխանցումը: (ա) ՀՀ օրենսդրության պարտադիր կանոնների և պահանջների պահպանման, ինչպես նաև անշարժ գույքի հետ կապված գործարքների վավերությունն ապահովող գործողությունների կատարումն ապահովելու նպատակով, Կողմերը 17 Ապրիլի 2014թ. կնքել են ՀՀ օրենսդրությանը համապատասխանող Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որն նոտարական կարգով վավերացվել և ՀՀ-ում պետական գրանցում է ստացել («Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր»), որը, դրա փոփոխությունների և սույն կետի (դ) պարբերությամբ ներկայացված պայմանագրի հետ միասին սույն կետի ուժով կհանդիսանա սույն Պայմանագրի բաղկացուցիչ մասը: Սույն պայմանագրի բոլոր պայմանները կիրառելի են անշարժ գույքի փոխանցման նկատմամբ՝ Փոխանցման պայմանագրին, դրա փոփոխություններին և սույն կետի (դ) պարբերությամբ ներկայացված պայմանագրին համապատասխան, որոնք պետք է հղում կատարեն սույն Պայմանագրին, որպես փոխանցման պայմանները կարգավորող փաստաթղթի:</p>
<p>(b) The Armenian Deed originally purported to transfer the full ownership of the Real Property to the Buyer. However, in</p>	<p>(բ) Փոխանցման պայմանագիրը սկզբնապես կնքվել է Անշարժ գույքերի նկատմամբ սեփականության իրավունքը Գնորդին</p>

<p>accordance with the provisions of Applicable Law, the Parties hereby agree to amend the Armenian Deed, insofar as it related to the Inalienable Real Property, in order to reinstate the inalienable right of the Republic of Armenia with respect to such assets and afford to the Buyer construction rights (instead of full ownership rights) with respect thereto, with a term of 99 years. In consideration thereof, the Buyer will pay the amount set forth in Schedule 2.03 (being the part of the Purchase price related to the Inalienable Real Property), as well as an annual fee in the amount of the real estate tax due with respect to such assets. The Seller and Republic of Armenia hereby state and confirm that Buyer has duly paid the cadastral value for the land on which the Inalienable Real Property is located.</p>	<p>փոխանցելու համար: Սակայն, հաշվի առնելով Կիրառելի օրենսդրության պահանջները, Կողմերը համաձայնել են փոփոխել Փոխանցման պայմանագիրը այնպես, որ դրանով հաստատվի Անօտարելի Անշարժ Գույքի նկատմամբ ՀՀ սեփականության անօտարելի իրավունքը և Գնորդին տրամադրվի վերոնշյալ գույքի նկատմամբ 99 տարի ժամկետով կառուցապատման իրավունք (սեփականության իրավունքի փոխարեն): Ի կատարումն վերոնշյալի Գնորդը կվճարի Հավելված 2.03-ում ներկայացված գինը (որը Վաճառքի գնում հաշվարկված Անօտարելի անշարժ գույքի գինն է) և տարեկան վճար, որը հավասար կլինի գույքի նկատմամբ հաշվարկված գույքահարկի արժեքին: Վաճառողը և ՀՀ հաստատում են, որ Գնորդը պատշաճ կերպով վճարել է այն հողամասերի կադաստրային արժեքը, որոնց վրա տեղակայված են Անշարժ գույքերը:</p>
<p>(c) The Republic of Armenia shall endeavour to carry out legislative changes with the aim of granting Buyer a full ownership right (instead of a construction right) towards the Inalienable Real Property mentioned in paragraph (b) above. If such changes are adopted, no fees shall be incurred by the Buyer for the transformation of the construction right into a full ownership right in relation to such Inalienable Real Property. However, if no such change in Applicable Law is adopted by the Republic of Armenia before the term of the construction right, the stated term shall be automatically prolonged for another term of 99 years at the lowest annual fee available under Applicable Law at the time of such extension.</p>	<p>(գ) ՀՀ պարտավորվում է ջանքեր գործադրել և փորձել կատարել օրենսդրական փոփոխություններ՝ վերոնշյալ (բ) պարբերությանը ներկայացված Անօտարելի Անշարժ գույքի սեփականության իրավունքը (կառուցապատման իրավունքի փոխարեն) Գնորդին փոխանցելու հնարավորություն ստանալու համար: Եթե նշված փոփոխությունները կատարվեն, Գնորդը չպետք է որևէ վճարումներ կատարի Անօտարելի Անշարժ գույքի նկատմամբ կառուցապատման իրավունքը սեփականության իրավունքով փոխարինելու համար: Ամեն դեպքում, եթե մինչև կառուցապատման իրավունքի ժամկետի ավարտը Կիրառելի օրենսդրության մեջ չեն կատարվում համապատասխան փոփոխությունները, կառուցապատման իրավունքի ժամկետը ավտոմատ կերպով պետք է երկարաձգվի ևս 99 տարի ժամկետով՝ այդ պահի դրությամբ Կիրառելի օրենսդրությամբ սահմանված նվազագույն հնարավոր վճարով:</p>
<p>(d) The Parties agree that the Armenian Deed, as amended pursuant to the provisions</p>	<p>(դ) Կողմերը համաձայնում են սույնի կնքումից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում, բայց</p>

<p>of this Section 2.08, shall be executed by the Parties before a notary and submitted for Armenian state registration as soon as reasonably practicable after the date hereof and no later than the Closing Date.</p>	<p>ոչ ուշ քան Գործարքի Ավարտման օրը կնքել, նոտարական կարգով վավերացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգավորվող Գույքային իրավունքների տրամադրման պայմանագիր, որով փոփոխվելու է Փոխանցման պայմանագիրը և որով Գնորդին տրամադրվելու են գույքային իրավունքներ՝ 2.08 Կետի համաձայն և ապահովել դրա պետական գրանցումը:</p>
<p style="text-align: center;">ARTICLE 3</p> <p style="text-align: center;">RIGHT TO REQUIRE SELLER TO REPURCHASE THE FACILITIES</p>	<p style="text-align: center;">ՀՈՒՎԱԾ 3</p> <p style="text-align: center;">ՎԱՃԱՌՈՂԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՏ ԳՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ</p>
<p>Section 3.01. <i>Repurchase Right.</i> Following the occurrence of a Triggering Event and upon written request from Buyer or ContourGlobal made no later than within one year of occurrence of such Triggering Event, but prior to the 25th anniversary of the Closing Date (the “Repurchase Notice”), Seller shall repurchase the Facilities (as and to the extent they exist at the date of repurchase as assets owned by Buyer (the “Repurchased Assets”) it being agreed that an event of the type described in paragraph (a) of the definition of an Armenian Event shall not prevent Buyer from exercising its Repurchase Right, which shall take into account any compensation already paid by the Republic of Armenia in connection with such event, in exchange for payment of the Repurchase Price (the “Repurchase Right”). Such payment shall be made by the Seller to the Buyer within 20 Business Days from the date of the Repurchase Notice. In the event that Seller fails to make such payment of the Repurchase Price in full when due or the Buyer is aware that the Seller is bankrupt or insolvent at any time after receipt by the Seller of the Repurchase Notice, the Republic of Armenia, in its capacity as sole shareholder of the Seller and in accordance</p>	<p>Կետ 3.01. <i>Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքը:</i> Գործարքի Ավարտման Օրվանից հետո 25 տարվա ընթացքում Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության տեղի ունենալուց և Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի կողմից գրավոր պահանջ (այսուհետ՝ Ետ Գնման Ծանուցում) ներկայացվելու դեպքում, Վաճառողը Ետ Գնվող Գույքի Արժեքը վճարելով Ետ կզնի Սարքավորումները (այնքանով, որքանով դրանք (ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած Իրադարձություն սահմանման (ա) ենթակետում նշված իրադարձությունը վրա հասնելուց հետո) Ետ գնման օրվա դրությամբ կլինեն Գնորդին պատկանող գույք) (այսուհետ՝ Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք): Ետ Գնվող Գույքի Արժեքը Վաճառողի կողմից Գնորդին կվճարվի Ետ Գնման Ծանուցման օրվանից 20 Աշխատանքային Օրվա ընթացքում: Եթե Վաճառողը սահմանված ժամկետում ամբողջությամբ չվճարի Ետ Գնվող Գույքի Արժեքն կամ եթե Ետ Գնման Ծանուցումը ստանալուց հետո Գնորդին հայտնի դառնա, որ Վաճառողը սնանկ է կամ անվճարունակ, ապա ՀՀ, որպես Վաճառողի միակ բաժնետեր, սույն Պայմանագրի 6.12 Կետի համաձայն Վաճառողի</p>

<p>with Section 6.12, agrees to comply with such obligations on the Seller’s behalf.</p>	<p>անունից կկատարի նշված բոլոր պարտավորությունները:</p>
<p>Section 3.02. <i>Repurchase Price.</i> For this purpose, the “Repurchase Price” shall be an amount in AMD equal to the sum of Non-Avoidable Costs and the Termination Payment (as defined in Schedule 3.02), plus (other than with respect to Non-Avoidable Costs) a sum equal to any VAT or other Tax otherwise payable thereon, it being specified that (i) each such items composing the Repurchase Right shall be either null or positive, (ii) each such items composing the Repurchase Right denominated in USD shall be converted into AMD pursuant to the most recent Official Exchange Rate available on the Business Day immediately prior to the date of payment of the Repurchase Price and (iii) any or all payments received or to be received by Buyer and/or Lenders in connection with the relevant Triggering Event under any insurance policy subscribed to by Buyer in connection with the Repurchased Assets shall be deducted from the Repurchase Price. The Repurchase Price shall be determined in accordance with the provisions of Schedule 3.02.</p>	<p>Կետ 3.02. <i>Ետ Գնվող Գույքի Արժեքը:</i> Սույն Կետի իմաստով «Ետ Գնվող Գույքի Արժեքը» հավասար է Անխուսափելի Ծախսերի, և Պայմանագրի դադարեցման համար նախատեսված վճարի հանրագումարին գումարած դրանց (Անխուսափելի Ծախսերից բացի) նկատմամբ հաշվարկված ԱԱՀ և այլ Հարկերի գումարն՝ արտահայտված ՀՀ դրամով: Պետք է նկատի ունենալ, որ (i) Ետ Գնվող Գույքի Արժեքի մաս հանդիսացող այդ բաղադրիչներից յուրաքանչյուրը պետք է լինի կամ զրո կամ դրական մեծություն (ii) եթե դրանցից որևիցե մեկը արտահայտված է ԱՄՆ դոլարով, ապա այն պետք է փոխարկվի ՀՀ դրամի՝ կիրառելով Ետ Գնվող Գույքի Արժեքը վճարելու Աշխատանքային Օրին նախորդող օրվա դրությամբ ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ Պաշտոնական Փոխարժեքի վերջին արժեքը, և (iii) Ետ Գնվող Գույքի Արժեքը պետք է նվազեցվի Գնորդի կողմից կնքված ապահովագրական պայմանագրերի համաձայն կապված ետ գնման պահանջ ներկայացնելու իրավունք վերապահող իրադարձությամբ պայմանավորված Գնորդին և/կամ Փոխատուներին վճարված գումարի չափով: Ետ Գնվող Գույքի Արժեքը հաշվարկվում է Հավելված 3.02-ով սահմանված կարգով:</p>
<p>Section 3.03. <i>Triggering Events.</i> A “Triggering Event” for the purpose of this Agreement shall mean any of the following events:</p>	<p>Կետ 3.03. <i>Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձություն:</i> Սույն Պայմանագրի իմաստով Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձությունը է համարվում հետևյալ իրադարձություններից որևէ մեկը.</p>
<p>(a) any Armenian Event that has the effect of:</p>	<p>(ա) ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած ցանկացած Իրադարձություն,</p>
<p>(i) adversely impacting any element of the Tariff Schedule and reducing or disallowing any increase in the Total Payment, to which</p>	<p>(i) որը բացասաբար է ազդում Սակագնային Պլանի որևէ տարրի վրա և որի հետևանքով</p>

<p>the Buyer would have been otherwise entitled to herewith, by more than USD 500,000 in any given year or more than USD 1 million in three consecutive years on a cumulative basis;</p>	<p>Համախառն Վճարի չափը նվազեցվում է կամ արգելվում է տարեկան կտրվածքով ավելի քան 500 000 ԱՄՆ դոլարի չափով, իսկ հաջորդող երեք տարիների ընթացքում համախառն կտրվածքով ավելի քան 1 000 000 ԱՄՆ դոլարի չափով ավելացնելու հնարավորությունը, որի համար Գնորդը սույնով պետք է հատուկ թույլտվություն ունենար:</p>
<p>(ii) depriving or preventing the Buyer or any Affiliate from exercising its ownership rights in, or effective control of, all or any substantial portion of the Buyer or the Project or otherwise depriving the Buyer or any Affiliate or any Lender of a substantial benefit constituting a fundamental right or essential to the overall financial viability of the investment in or financing of the Buyer or the Project, or depriving the Buyer or any Affiliate or any Lender of the use and control of any funds constituting dividends, profits, fees, interest and principal payments, or other monetary benefits or obligations derived from the investment in or financing of the Buyer or the Project; or</p>	<p>(ii) որի հետևանքով Գնորդը կամ վերջինիս հետ Փոխկապակցված որևէ Անձ գրկվում է Գնորդ ընկերության կամ Նախագծի կամ դրանց նշանակալից մասի նկատմամբ սեփականության իրավունքից բխող իրավունքները կամ վերահսկողությունն իրականացնելու հնարավորությունից կամ գրկվում է այդ իրավունքներից, կամ որի հետևանքով Գնորդը կամ վերջինիս հետ Փոխկապակցված որևէ Անձ կամ Փոխատու հանդիսացող որևէ Անձ գրկվում է այնպիսի էական առավելությունից կամ ակնկալիքներից, որոնք ըստ էության հանդիսանում են հիմնարար իրավունքներ կամ էական են Գնորդ ընկերության կամ Նախագծի մեջ կատարված ներդրումների կամ Գնորդ ընկերությանը կամ Նախագծի իրականացման համար հատկացված ֆինանսավորման կենսունակության տեսանկյունից, կամ որի հետևանքով Գնորդը կամ վերջինիս հետ Փոխկապակցված որևէ Անձ կամ Փոխատու հանդիսացող որևէ Անձ գրկվում է Նախագծի կամ Գնորդ ընկերության մեջ ներդրումներ կատարելու կամ Գնորդ ընկերությանը կամ Նախագծի իրականացման համար ֆինանսավորում տրամադրելու արդյունքում շահույթի, շահութաբաժինների, մայր գումարի և տոկոսագումարների հաշվին կատարված վճարումների և այլ վճարների տեսքով ստացված գումարները, դրամական այլ միջոցներն ու դրամական արտահայտություն ունեցող այլ պարտավորություններն օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից:</p>
<p>(iii) causing an event of default under the</p>	<p>(iii) որի հետևանքով առաջ են գալիս Ֆինանսական Փաստաթղթերով նախատեսված</p>

Financing Documents;	պարտավորությունները կատարելու թերացման դեպքեր,
(b) any Armenian Event as a result of which the Buyer, or any of its Affiliates or any Lender (or their agent or account banks) with respect to any payment made or to be made in connection with any Project Agreement or Financing Document to which it is a party, or any shareholder of Buyer, in respect of dividends or other distributions due to it from Buyer, is unable:	(p) ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած ցանկացած Իրադարձություն, որի արդյունքում Նախագծային Պայմանագրերի կամ Ֆինանսական Փաստաթղթերի համաձայն վճարման ենթակա կամ արդեն իսկ վճարված գումարների դեպքում Գնորդը կամ Գնորդի հետ Փոխկապակցված Անձը կամ Փոխատու հանդիսացող Անձը (կամ նրանց գործակալը կամ նրանց սպասարկող բանկը), իսկ Գնորդ ընկերության կողմից իր բաժնետերերին շահութաբաժին վճարելու կամ այլ վճարումներ կատարելու դեպքում, Գնորդ ընկերության բաժնետեր հանդիսացող Անձը, ի վիճակի չէ կամ չի կարող
(i) to convert Drams into Euros or Dollars, or Euros or Dollars into Drams, as the case may be, through a commercial bank or financial institution; or	(i) առևտրային բանկի կամ ֆինանսական հաստատության միջոցով ՀՀ դրամը փոխանակել Եվրոյի կամ դոլարի կամ հակառակը, կամ
(ii) to lawfully repatriate or otherwise transfer Euros or Dollars, as the case may be, from Armenia to any other jurisdiction to which the relevant party had before the relevant event causing such inability been able to repatriate or otherwise transfer Euros or Dollars; or	(ii) Օրինական կերպով Եվրո կամ Դոլար դուրս բերել կամ այլ կերպ փոխանցել Հայաստանի տարածքից դուրս դեպի այն երկրներ, որտեղ նա նախքան ստեղծված իրավիճակն առաջացնող դեպքի վրա հասնելը սովորաբար արտահանել կամ այլ կերպ փոխանցել է Եվրո կամ Դոլար, կամ
(iii) to lawfully maintain off-shore accounts in any one OECD jurisdiction, except as may be restricted by an Armenian Authority in a manner consistent with U.S or E.U foreign policy regulations;	(iii) Օրինական կերպով օֆֆշորային հաշիվներ ունենալ OECD կազմակերպության անդամ հանդիսացող պետություններում, բացառությամբ, եթե նման հնարավորությունը սահմանափակված չէ ՀՀ Իշխանական Մարմինների կողմից արտաքին քաղաքականության ոլորտում ԵՄ անդամ պետությունների կամ ԱՄՆ կողմից ընդունված ակտերի օրինակով և դրանց պահանջներին համահունչ կերպով,
(c) any decision by an arbitral tribunal or an Armenian court or any similar decision or any decree or decision by an Armenian Authority, deeming the transaction contemplated under this Agreement null and void or rescinded or otherwise purporting to restrain, prohibit or otherwise interfere with the rights of any Person as shareholder or Lender of Buyer or the ownership or operation by Buyer or any of	(q) Արբիտրաժային տրիբունալի կամ ՀՀ դատարանի ցանկացած վճիռ կամ նմանատիպ այլ որոշում կամ ՀՀ Իշխանական Մարմինների կողմից կայացված ցանկացած որոշում կամ հրաման, որոնց համաձայն անվավեր են ճանաչվում կամ լուծված են համարվում սույն Պայմանագրով նախատեսված գործարքները, կամ որոնց համաձայն սահմանափակվում կամ

<p>its Affiliates of all or any material portion of the Purchased Assets;</p>	<p>արգելվում են Գնորդի բաժնետեր կամ Փոխատու հանդիսացող Անձանց իրավունքները կամ միջամտություն է ցուցաբերվում նրանց իրավունքների իրականացման հարցում, կամ որոնց համաձայն սահմանափակվում, արգելվում են Վաճառվող Գույքի կամ դրա զգալի մասի նկատմամբ Գնորդի կամ վերջինիս հետ Փոխկապակցված ցանկացած Անձի սեփականության իրավունքները կամ Վաճառվող Գույքը կամ դրա զգալի մասը շահագործելու նրանց իրավունքները, կամ էլ որոնց համաձայն միջամտություն է ցուցաբերվում նրանց այդ իրավունքների իրականացման հարցում,</p>
<p>(d) material breach by Seller or the Republic of Armenia of their representations, warranties, covenants (other than Section 6.10) or other obligations under this Agreement, any Direct Agreement or any other agreement entered into by Seller or the Republic of Armenia with the Buyer, its Affiliates or Lenders (or their agents or account banks) in connection herewith and the transactions contemplated hereby, which has caused damage of USD 7 million or more;</p>	<p>(դ) Սույն Պայմանագրով (բացառությամբ սույն Պայմանագրի 6.10 Կետով), Նախագծին Մասնակցող Տարբեր Անձանց Միջև Ուղղակի Պայմանագրային Հարաբերություններ Հաստատելու Վերաբերյալ Պայմանագրով կամ սույն Պայմանագրի կամ սույն Պայմանագրով նախատեսված գործարքների առնչությամբ Գնորդի, Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց կամ Փոխատուների (կամ նրանց գործակալների կամ նրանց սպասարկող բանկերի) հետ ՀՀ կամ Վաճառողի կողմից կնքված ցանկացած մեկ այլ համաձայնագրով նախատեսված պարտավորությունները Վաճառողի կամ ՀՀ կողմից էապես խախտելու ցանկացած դեպք, նշված փաստաթղթերի համաձայն ՀՀ կամ Վաճառողի կողմից տրված երաշխիքներն ու հավաստիքները էական առումով հավաստի, ստույգ, արժանահավատ և անթերի չլինելու ցանկացած դեպք, որի հետևանքով պատճառված վնասը կազմում է 7 միլիոն ԱՄՆ դոլար կամ ավել,</p>
<p>(e) (1) delivery of a termination notice under the Power Purchase Agreement by the Buyer on the basis of non-payment or other material breach by AEN (or any successor), (2) or any situation preventing the Buyer from receiving the Total Payment resulting in a shortfall of more than USD 500,000 on any given year or more than USD 1 million in three consecutive years on a cumulative basis (in each case through no fault of the</p>	<p>(ե) (1) ՀԷՑ (կամ իրավահաջորդ ընկերության) կողմից նախատեսված վճարումները չկատարելու կամ ստանձնած պարտավորություններն էապես խախտելու հետևանքով Գնորդի կողմից Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագրի համաձայն պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցում տրամադրելը կամ (2) ցանկացած այլ իրավիճակ, որը հնարավորություն չի տալիս Գնորդին ստանալ Համախառն Վճարը, և որի հետևանքով Գնորդի կողմից ստացված գումարի</p>

<p>Buyer); or</p>	<p>պակասորդը կազմում է 500 000 ԱՄՆ դոլարից ավել տարեկան կտրվածքով կամ հաջորդող երեք տարիների ընթացքում 1 000 000 ԱՄՆ դոլարից ավել համախառն կտրվածքով (պայմանով, եթե բացակայում է Գնորդի մեղքը), կամ</p>
<p>(f) a violation by the Republic of Armenia of any of the covenants set forth in Section 6.10.</p>	<p>(գ) ՀՀ կողմից սույն Պայմանագրի 6.10 Կետով նախատեսված պարտավորություններից որևէ մեկը խախտելու ցանկացած դեպք:</p>
<p>Section 3.04. <i>Determination that a Triggering Event has Occurred.</i> (a) The Seller and/or, as the case may be, the Republic of Armenia shall be allowed to remedy any Triggering Event to the satisfaction of the Buyer (acting reasonably) within (i) 45 calendar days in relation to a Triggering Event defined in paragraphs (a)(ii), (a)(iii), (b) or (c) of Section 3.03 above and (ii) 75 calendar days in relation to a Triggering Event defined in paragraphs (a)(i), (d), (e) or (f) of Section 3.03 above, after notice of the same has been given by the Buyer or ContourGlobal setting out in reasonable detail the basis on which it deems that a Triggering Event has occurred.</p>	<p>Կետ 3.04. <i>Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության տեղի ունեցած լինելու հավասարում:</i> (ա) Վաճառողը և/կամ կախված հանգամանքներից, ՀՀ-ն կարող են վերացնել (ողջամտորեն գործելով) Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձությունը Գնորդի համար ողջամտորեն ընդունելի ձևով՝ (i) 45 օրվա ընթացքում վերոնշյալ 3.03 Կետի (ա)(ii), (ա)(iii), (բ) կամ (գ) ենթակետերով սահմանված իրադարձությունների դեպքում, և (ii) 75 օրվա ընթացքում՝ վերոնշյալ 3.03 Կետի (ա)(i), (դ), (ե) կամ (զ) ենթակետերով սահմանված իրադարձությունների դեպքում ընդ որում երկու դեպքերում էլ ժամկետը հաշվարկվում է Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության տեղի ունենալու հիմքերը նկարագրող ծանուցումը Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի կողմից տրամադրվելու օրից :</p>
<p>(b) Unless the Buyer and ContourGlobal receive a notice of objection from Seller and/or, as the case may be, the Republic of Armenia within the same 45 or 75 calendar day period setting out in reasonable detail the basis of its objection (in which case the dispute shall be resolved in accordance with the provisions of Section 14.07 below), the relevant Triggering Event shall be deemed to have occurred upon expiration of the said 45 or 75 calendar day period, and the Buyer or ContourGlobal shall be allowed to exercise the Repurchase Right and serve a Repurchase Notice in accordance with Section 3.01 above.</p>	<p>(բ) Եթե վերոնշյալ 45 կամ 75 օրացույցային օրվա ընթացքում Գնորդը և ՔոնթուրԳլոբալը Վաճառողից և/կամ, կախված հանգամանքներից, ՀՀ-ից չեն ստանում ծանուցում, որում մանրամասն ներկայացվում են Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության առկայության վերաբերյալ առարկություններ, (այս դեպքում առաջացող վեճերը պետք է լուծվեն 14.07 Կետի համաձայն), նշված ժամկետների ավարտից հետո Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձությունը համարվում է տեղի ունեցած և Գնորդին կամ ՔոնթուրԳլոբալին հնարավորություն է տրվում իրականացնելու Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքը և վերոնշյալ 3.01 կետի համաձայն ներկայացնել Ետ Գնման Ծանուցում:</p>

<p>Section 3.05. <i>Exceptions – Compensation in lieu of Repurchase.</i></p>	<p>Կետ 3.05. <i>Բացառություններ. Փոխհատուցում Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքը չիրականացնելու փոխարեն:</i></p>
<p>(a) Notwithstanding the provisions of Section 3.03, the parties agree that no Triggering Event shall have occurred in connection with an event listed in paragraphs (a), (c) and (d) of the definition of Armenian Event to the extent the same is the direct consequence of a legitimate and proportionate action taken by any Armenian Authority as a result of a material breach by ContourGlobal or Buyer of this Agreement, the Project Agreements or Armenian Law (where a “material breach of this Agreement” means a breach depriving the Republic of Armenia or Seller of any material benefit under this Agreement or the Project Agreements).</p>	<p>(ա) Չնայած 3.03 Կետով նախատեսված դրույթներին, Կողմերը սույնով համաձայնում են, որ Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձությունը կհամարվի տեղի չունեցած բոլոր այն դեպքերում, որոնք ներառված են ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած Իրադարձություն սահմանման ա),գ) և դ) ենթակետերում, եթե դրանք հանդիսանում են ՔոնտուրԳլոբալի կամ Գնորդի կողմից սույն Պայմանագրի, Նախագծային Պայմանագրերի կամ ՀՀ Օրենսդրության պահանջների կոպիտ խախտումներ թույլ տալու համար (որտեղ սույն Պայմանագրի կոպիտ խախտում նշանակում է այնպիսի խախտում, որի հետևանքով ՀՀ կամ Վաճառողը էապես զրկվում է նրանից, ինչ կարող էր ակնկալել սույն Պայմանագրի կամ Նախագծային Պայմանագրերի շրջանակներում) ՀՀ Իշխանական Մարմինների կողմից օրինական և համաչափ պատասխան գործողությունների ուղղակի հետևանք:</p>
<p>The Parties further agree that in the case of multiple Triggering Events, this Section 3.05(a) shall not prevent the exercise of the Repurchase Right in respect of any unrelated Triggering Events.</p>	<p>Կողմերն ընդունում և համաձայնում են նաև, որ Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող մի քանի Իրադարձություններ տեղի ունեցած լինելու դեպքում, սույն 3.05 (ա) կետի դրույթները խոչընդոտ չեն հանդիսանա Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունքը Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող մեկ ուրիշ Իրադարձության կապակցությամբ իրականացնելու համար:</p>

(b) In addition, in the event of a shortfall or loss caused by a Triggering Event defined in Section 3.03 (a)(i), Section 3.03(d) or Section 3.03(e) above, then the Seller or the Republic of Armenia, within the time allowed to remedy the situation as set out in Section 3.04(a), shall be allowed to offer full monetary compensation to the Buyer. The Parties agree that the Seller and the Republic of Armenia shall have the same right to offer full compensation in lieu of repurchase in the event that a Triggering Event contemplated in Section 3.03 (a)(i) above has occurred as a result of a Change in Armenian Law which is not discriminatory towards the Buyer or ContourGlobal (a “**Non-discriminatory Change in Armenian Law**”).

(c) Such compensation will be paid in full to the Buyer either:

(i) in a lump sum payment within (A) twelve months of the occurrence of the relevant Triggering Event if such Triggering Event occurred between 1st of January and 30 June or (B) six months of the occurrence of the relevant Triggering Event if such Triggering Event occurred between 30 June and 31 December; or

(ii) through an increase in the Total Payment under the Tariff Schedule over the three (3) years after the occurrence of the relevant Triggering Event, in which case the shortfall will be recouped equally each month after an appropriate amendment to the

(բ) Ի լրումն վերոգրյալի, եթե ցանկացած վնաս կամ կորուստ պատճառվել է վերը նշված 3.03(ա)(i), 3.03(դ) կամ 3.03(ե) ենթակետերով նախատեսված Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձությունները տեղի ունենալու հետևանքով, ապա Վաճառողը կամ ՀՀ պետք է սույն Պայմանագրի Կետ 3.04(ա) պարբերությանը նշված իրավիճակը շտկելու համար նախատեսված ժամանակահատվածում իրավունք ունենան առաջարկելու Գնորդին ամբողջական գումարային փոխհատուցում: Կողմերը համաձայնում են, որ Վաճառողը և ՀՀ պետք է ունենան փոխհատուցում տրամադրելու նույն իրավունքները, նաև այն դեպքում, երբ 3.03(ա)(i) Կետի համաձայն Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձությունը առաջացել է ՀՀ Օրենսդրության Փոփոխության արդյունքում, որը խտրականություն չի նախատեսում Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի նկատմամբ («**Հայկական օրենսդրության՝ խտրականություն չնախատեսող փոփոխություն**»):

(գ) Նման փոխհատուցումը ամբողջ ծավալով վճարվում է Գնորդին:

(i) միանվագ վճարման տեսքով՝ (Ա) Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող համապատասխան Իրադարձությունը տեղի ունենալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում, եթե այն առաջացել է Հունվարի 1-ից Հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում (Բ) Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող համապատասխան Իրադարձությունը տեղի ունենալու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, եթե այն առաջացել է Հունիսի 30-ից Դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, կամ (ii) այն պարագայում, երբ փոխհատուցումը ՀՀ կողմից առաջարկվել է Սակագնային Պլանի

<p>Tariff Schedule is effective. To this effect, the Republic of Armenia shall use its best efforts to implement such amendment to the Tariff Schedule as soon as possible and no later than six (6) months after the occurrence of the relevant Triggering Event.</p> <p>(d) For the purpose of the above paragraph (b) of this Section 3.05:</p> <p>(i) the Seller or the Republic of Armenia shall be deemed to offer “full monetary compensation” through a lump sum payment or an increase in the Total Payment under the Tariff Schedule when the net present value of the proposed compensation (using an annual rate of 12.7% as the discount rate) is equal to (x) the dollar-for-dollar recovery of the revenues, as contemplated in the Tariff Schedule, foregone as a result of such Triggering Event and (y) any and all Non-Avoidable Costs and other costs payable by the Buyer under the Finance Documents as a result of the occurrence of the Triggering Event;</p>	<p>համաձայն վճարման ենթակա Համախառն Վճարն ավելացնելու տարբերակով, պայմանով որ հատուցման ենթակա գումարը վերադարձվի Գնորդին Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող համապատասխան Իրադարձությունը տեղի ունենալու օրվանից հետո՝ երեք տարվա ընթացքում, պակասուրդը այս դեպքում կհամալրվի յուրաքանչյուր ամիս համապատասխան կերպով փոփոխված Սակագնային Պլանով նախատեսված հավասարաչափ վճարումների միջոցով: Այս դեպքում, Հայաստանի Հանրապետությունը պետք է ջանքեր գործադրի վերոնշյալ փոփոխությունները հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն ոչ ուշ քան Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող համապատասխան Իրադարձությունը տեղի ունենալու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում Սակագնային Պլանում ներառել համապատասխան փոփոխությունները:</p> <p>(դ) Սույն Կետ 3.05-ի (բ) պարբերության առնչությամբ.</p> <p>(i) Վաճառողը կամ Հայաստանի Հանրապետությունը կարող են առաջարկել ամբողջական գումարային փոխհատուցում միանվագ վճարման կամ Սակագնային Պլանի համաձայն վճարման ենթակա Համախառն Վճարն ավելացնելու տարբերակով, երբ համապատասխան օրվա դրությամբ առաջարկված փոխհատուցման գուտ արժեքը (կիրառելով տարեկան 12.7% զեղչի դրույք) հավասար է (x) Սակագնային Պլանի համաձայն ստացման ենթակա, սակայն Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող համապատասխան Իրադարձությունը տեղի ունենալու հետևանքով չստացված եկամուտների մեկ դույար ճշգրտությամբ լիարժեք վերադարձման գումարին գումարած (y)՝ բոլոր և ցանկացած Անխուսաթելի Ծախսերը և այլ ծախսերը, որոնք Ֆինանսական Փաստաթղթերի ներքո ենթակա են վճարման Գնորդի կողմից Ետ Գնելու</p>
---	--

<p>(ii) while a Triggering Event is in the course of being remedied pursuant to the provisions of paragraph (b) of this Section 3.05, the Seller or the Republic of Armenia shall not be entitled to implement the provisions thereof with respect to any subsequent Triggering Event (except one or more Triggering Events based on a Non-discriminatory Change in Armenian Law) until the Buyer has been paid in full the compensation relating to such pending remedy;</p> <p>(iii) Buyer cannot withhold its consent if full monetary compensation is offered pursuant to the provisions of this Section 3.05(b) and (c);</p> <p>(iv) a Triggering Event shall be deemed to have occurred (which shall not be capable of being remedied pursuant to the provisions of this paragraph) if the agreed upon compensation is not paid in full during the abovementioned six-month, twelve-month or three-year period, as applicable or if the revised Tariff Schedule (in the case mentioned in paragraph (c)(ii) above of this Section 3.05) is not effective within the six (6) month period mentioned herein; and</p> <p>(v) for the avoidance of doubt, if any of the Triggering Events listed therein causes an event of default under the Financing Documents or a breach preventing any further drawdown of the facilities provided under the Financing Documents, the Seller and the Republic of Armenia shall not be entitled to implement the provisions of such</p>	<p>Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող համապատասխան Իրադարձությունը տեղի ունենալու արդյունքում:</p> <p>(ii) քանի դեռ վերոնշյալ 3.05(բ) Կետի համաձայն Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձությունը չի վերացվել և Գնորդը ամբողջական փոխհատուցում չի ստացել, Վաճառողը և ՀՀ իրավունք չունեն կիրառել այդ կետի դրույթները՝ ցանկացած հաջորդող Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության նկատմամբ (բացառությամբ Հայկական օրենսդրության՝ խտրականություն չնախատեսող փոփոխություն արդյունքում առաջացող մեկ կամ մի քանի Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության):</p> <p>(iii) Գնորդը չի կարող չստալ իր համաձայնությունը, եթե առաջարկվել է ամբողջական գումարային փոխհատուցում 3.05 (բ) և (գ) Կետերի դրույթներին համապատասխան;</p> <p>(iv) Երկինաստություններից խուսափելու համար Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող համապատասխան Իրադարձությունը սույն կետի իմաստով կհամարվի տեղի ունեցած (և սույն կետի դրույթներին համապատասխան չփոխհատուցված), եթե համաձայնեցված փոխհատուցումը չի վճարվում Գնորդին համապատասխանաբար վեցամսյա, տասներկուամսյա և եռամսյա ժամկետների ընթացքում, կամ եթե վերանայված Սակագնային պլանը (3.05(բ)(ii) կետով նախատեսված դեպքերում) արդյունավետ չէ, կիրառվում է վերոնշյալ վեցամսյա ժամկետը; և</p> <p>(v) Երկինաստություններից խուսափելու համար, եթե վերոնշյալ Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության արդյունքում առաջանում է Ֆինանսական փաստաթղթերով նախատեսված</p>
--	---

<p>paragraph (b) of this Section 3.05 provided the default and/or breach under the Financing Documents stated herein are caused solely and exclusively by the Triggering Events stated herein.</p>	<p>պարտականությունների չկատարում կամ Ֆինանսական փաստաթղթերով նախատեսված խախտում՝ որը հանգեցնում է սարքավորումների հետագա շահագործման անհնարինության, Վաճառողը և ՀՀ չեն կարող վկայակոչել 3.05(բ) կետը, պայմանով, որ այդպիսի չկատարումը և/կամ խախտումն առաջացել են բացառապես Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության տեղի ունենալու պատճառով:</p>
<p>Section 3.06. <i>Completion of Repurchase.</i> The completion of the repurchase of the Repurchased Assets pursuant to the Repurchase Right (the “Repurchase Closing Date”) shall take place in a place and on a date mutually agreed upon between the parties, as soon as possible after the date on which the Repurchase Notice is served by Buyer or ContourGlobal and in any event no later than 20 Business Days from the date of the Repurchase Notice. Without effect on the Seller’s and the Republic of Armenia’s obligation to pay the Repurchase Price, the parties will use their best efforts to take, or cause to be taken, all actions and to do, or cause to be done, all things necessary or desirable under Applicable Laws to consummate the transactions contemplated by this Repurchase Right. On the Repurchase Closing Date, the Buyer will sell the Repurchased Assets, with no representations and warranties, except that the Repurchased Assets are free of any Lien.</p>	<p>Կետ 3.06. Ետ Գնման Գործարքի Ավարտը: Վաճառվող Գույքի ետ գնման գործարքի ավարտական աշխատանքները («Ետ Գնման Գործարքի Ավարտման Օր») պետք է կատարվեն Կողմերի փոխադարձ համաձայնությանը նախատեսված ժամանակ և վայրում Ետ Գնման Ծանուցումը Գնորդի կամ ԿոնթուրԳլոբալի կողմից տրամադրվելուց հետո որքան հնարավոր է սեղմ ժամկետներում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան նշված ծանուցման օրվանից հետո 20 Աշխատանքային Օրվա ընթացքում: Կողմերը կգործադրեն իրենց բոլոր ջանքերը, որպեսզի կատարեն բոլոր այն գործողությունները կամ ապահովեն, որպեսզի կատարվեն բոլոր այն գործողությունները, որոնք Կիրառելի Օրենսդրության համապատասխան կարող են անհրաժեշտ կամ ցանկալի լինել Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքի իրականացմանը պայմանավորված գործարքներն իրականացնելու համար, ինչը սակայն չի վերաբերում Ետ Գնման Գինը վճարելու Վաճառողի և ՀՀ պարտավորությանը, որը նրանք պարտավոր են կատարել: Ետ Գնման Գործարքի Ավարտման Օրը Գնորդը ետ կվճարի Ետ Վաճառվող Գույքն առանց երաշխիքների և հավաստիքների՝ զերծ Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներից:</p>
<p>(a) Seller (or the Republic of Armenia) shall pay the Repurchase Price in AMD in immediately available funds by wire transfer to the bank account designated by Buyer on</p>	<p>(ա) Վաճառողը (կամ ՀՀ) Ետ Վաճառվող Գույքի Արժեքը կվճարի ՀՀ Դրամով այն փոխանցելով Գնորդի կողմից տրված ծանուցմանը նշված բանկային հաշվեհամարին:</p>

<p>the Repurchase Closing Date (and the Parties acknowledge that where a Lender or other third party has a Lien on the Repurchased Assets, the Seller (or the Republic of Armenia) shall be entitled to make the payment directly to such Lender or other third party, on behalf of the Buyer); and</p>	<p>Փոխանցումը պետք է կատարվի այնպես, որպեսզի ստացողը կարողանա անմիջապես ստանալ գումարը և ազատ տնօրինել այն: Նշված ծանուցումը պետք է տրամադրվի Ետ Գնման Գործարքի Ավարտման Օրը (Կողմերը համաձայնում և ընդունում են, որ եթե Ետ Վաճառվող Գույքը ծանրաբեռնված լինի Փոխատուների կամ մեկ այլ երրորդ անձի օգտին սահմանված Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներով, ապա Վաճառողն (կամ ՀՀ) իրավունք կունենա Գնորդի անունից վճարումը կատարել անմիջապես համապատասխան Փոխատուին կամ երրորդ անձին), և</p>
<p>(b) Buyer shall deliver to Seller on the Repurchase Closing Date such deeds, bills of sale and other good and sufficient instruments of conveyance as the parties and their respective counsel shall deem reasonably necessary or appropriate to vest in Seller all right, title and interest in, to and under the Repurchased Assets as they exist at such date.</p>	<p>(բ) Ետ Գնման Գործարքի Ավարտման Օրը Գնորդը Վաճառողին կտրամադրի վաճառքը, սեփականության իրավունքի փոխանցումը բավարար և պատշաճ կերպով հավաստող այնպիսի փաստաթղթեր, ակտեր, պարտավորագրեր, որոնք Կողմերի կամ նրանց խորհրդատուների կարծիքով կարող են ողջամտորեն անհրաժեշտ լինել Ետ Վաճառվող Գույքի նկատմամբ իրավունքները Վաճառողին փոխանցելու համար: Ետ Վաճառվող Գույքը Վաճառողին է փոխանցվում այն վիճակում, որում առկա է:</p>
<p>Section 3.07. <i>Alternative Structure for Repurchase Right – Equity transaction.</i> In relation to the implementation of the Repurchase Right, the Parties shall consider and negotiate in good faith, any alternative structure achieving substantially the same economic result on a post-tax basis for all concerned parties (including the Lenders), including an alternative structure consisting of the purchase of 100% of the equity and other interests of Holdings, including the interests of any of its Affiliates, in the Buyer. In such a case, the provisions of Section 3.01 to Section 3.05 shall apply, <i>mutatis mutandis</i>, to such alternative structure. If the Parties fail to agree to such alternative structure within a period of one month from the end of the relevant 45 calendar day or 75 calendar</p>	<p>Կետ 3.07 Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքի Իրականացման Այլընտրանքային Տարբերակներ. Գնորդ Ընկերության Բաժնետոմսերի Վաճառքը: Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքի իրականացման կապակցությամբ Կողմերը համաձայնում են բարեխղճորեն քննարկել այդ իրավունքի իրականացման այլընտրանքային այնպիսի տարբերակներ, որոնց դեպքում շահագրգիռ Կողմերը (ներառյալ Փոխատուները) հարկերը վճարելուց հետո կունենան միևնույն տնտեսական արդյունքը: Նման այլընտրանքային տարբերակներից է նաև Գնորդ ընկերության Հոլդինգային Ընկերություններին պատկանող 100 տոկոս բաժնետոմսերի, Գնորդ ընկերության նկատմամբ Հոլդինգային Ընկերությունների,</p>

<p>day period noted above in Section 3.04, then the Buyer may exercise the Repurchase Right in the manner outlined in Section 3.01 to Section 3.06 above.</p>	<p>ինչպես նաև վերջիններիս հետ Փոխկապակցված Անձանց այլ իրավունքների վաճառքը (Վաճառողին կամ ՀՀ): Այդ այլընտրանքային տարբերակի իրականացման դեպքում համապատասխան փոփոխություններով հանդերձ կիրառելի կլինեն սույն Պայմանագրի 3.01-3.05 կետերով նախատեսված դրույթները: Եթե Կողմերը, վերոնշյալ 3.04 կետով նախատեսված 45 օրյա և 75 օրյա ժամկետի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում այլընտրանքային տարբերակի շուրջ համաձայնության չեն գալիս, Գնորդը կարող է իրականացնել Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքը՝ սույն Պայմանագրի 3.01-3.06 կետերով նախատեսված կարգով:</p>
<p style="text-align: center;">ARTICLE 4</p> <p style="text-align: center;">REPRESENTATIONS AND WARRANTIES OF SELLER AND REPUBLIC OF ARMENIA</p>	<p style="text-align: center;">ՀՈՒՎԱԾ 4</p> <p style="text-align: center;">ՎԱՃԱՌՈՂԻ ԵՎ ՀՀ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՎԱՍՏԻՔՆԵՐԸ</p>
<p>Seller and the Republic of Armenia jointly and severally represent and warrant to each of Buyer and ContourGlobal that the statements contained in this Article 4 are true and correct as of the date hereof and as of the Closing Date. A disclosure in any Schedule shall be deemed to qualify other provisions in this Agreement to the extent that it is reasonably apparent that the matter so disclosed is relevant to the subject matter of such other provisions and the scope and implication of such disclosure are reasonably explicit.</p>	<p>Վաճառողը և ՀՀ միասին և առանձին-առանձին Գնորդին և ՔոնթուրԳլոբալին հայտնում և երաշխավորում են, որ սույն Պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ և Գործարքի Ավարտման Օրվա դրությամբ սույն Հոդված 4-ում ներկայացված հավաստումները հավաստի և ճիշտ են: Ցանկացած նման Հավելվածում բացահայտված տեղեկությունները կարող են դիտարկվել սույն Պայմանագրի մյուս դրույթների առնչությամբ, այնքանով, որ բացահայտված տեղեկությունները կապ ունեն են մյուս դրույթների առարկայի հետ և բացահայտված տեղեկությունների ընգրկումը և իմաստը ողջամտորեն պարզ է:</p>
<p>Section 4.01. <i>Corporate Existence; Power and no Insolvency.</i> (a) Seller is a company duly incorporated, validly existing and in good standing under the laws of the Republic of Armenia and has all corporate powers and all governmental licenses, authorizations, permits, consents and approvals required to carry on its business as now conducted.</p>	<p>Կետ 4.01. <i>Վաճառողը որպես գոյություն ունեցող ընկերություն, վճարունակությունը:</i> (ա) Վաճառողը ՀՀ օրենքների համաձայն պատշաճ կերպով հիմնված և գործող ընկերություն է, նրա հիմնադրման և գործունեության իրականացման կապակցությամբ չեն խախտվել կորպորատիվ օրենքների պահանջները, այն ունի իր կողմից իրականացվող գործունեությունը ներկայումս</p>

<p>Seller has delivered to Buyer true and complete copies of the certificate of incorporation and bylaws of Seller as currently in effect.</p>	<p>իրականացված տեսքով իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր կորպորատիվ լիազորությունները, կառավարական լիցենզիաները, թույլտվությունները, համաձայնությունները, հաստատումներն ու հավանությունները: Վաճառողը Գնորդին է հանձնել իր գրանցման վկայականի, կանոնադրության և ընկերության կառավարման իրականացման վերաբերյալ դրույթներ պարունակող այլ փաստաթղթերի ներկայումս գործող տարբերակների ճիշտ և ամբողջական պատճենները:</p>
<p>(b) Seller is not insolvent, is not currently the subject matter of any action, claim proceedings or judgment relating to insolvency or pre-insolvency matters and there are no reasons for such actions, claims, proceedings to be initiated or judgment to be rendered with respect to Seller.</p>	<p>(բ) Վաճառողն անվճարունակ չէ, ներկայումս չկան այնպիսի վարույթներ, հարուցված չեն այնպիսի հայցեր, ներկայացված չեն այպիսի պահանջներ, չեն կայացվել այնպիսի դատական որոշումներ, որոնք վերաբերում են անվճարունակության և անվճարունակությանը նախորդող գործընթացների վերաբերյալ հարցերին և չկան հիմքեր կարծելու, որ կլինեն նման վարույթներ, կհարուցվեն նման հայցեր, կներկայացվեն նման պահանջներ կամ կկայացվեն նման որոշումներ:</p>
<p>Section 4.02. <i>Validity; Corporate Authorization.</i> (a) The execution, delivery and performance by Seller of this Agreement and the consummation of the transactions contemplated hereby are within Seller’s corporate powers and have been duly authorized by all necessary corporate action on the part of Seller. Subject to the Regulatory Approvals listed in Schedule 4.03 and the execution, delivery and performance of this Agreement by the Republic of Armenia and the consummation of the transactions contemplated hereby are within the Republic of Armenia powers and have been duly authorized by all necessary action on the part of the Republic of Armenia.</p>	<p>Կետ 4.02. <i>Վավերականություն, կորպորատիվ հավանություններ:</i> (ա) Վաճառողն ունի սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար պահանջվող բոլոր լիազորությունները: Սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար Վաճառողը ստացել է կառավարող մարմինների հավանությունը: Հավելված 4.03-ում ներկայացված Կարգավորող մարմնի կողմից պահանջվող հաստատումների ցանկի հաշվառմամբ՝ ՀՀ ունի սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար պահանջվող բոլոր լիազորությունները: Սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար ստացվել են բոլոր անհրաժեշտ համաձայնությունները:</p>
<p>(b) Subject to the Regulatory Approvals</p>	<p>(բ) Հավելված 4.03-ում ներկայացված</p>

<p>listed in Schedule 4.03 this Agreement has been duly and validly executed by Seller and the Republic of Armenia and constitutes a valid and binding agreement of Seller and the Republic of Armenia enforceable against them in accordance with its terms.</p>	<p>Կարգավորող մարմնի կողմից պահանջվող հաստատումների հաշվի առնելով՝ սույն Պայմանագիրը պատշաճ կերպով ստորագրվել է Վաճառողի և ՀՀ կողմից, վավեր և պարտադիր է կատարման Վաճառողի և ՀՀ համար և կարող է հարկադրաբար ի կատար ածվել վերջիններիս դեմ, եթե նրանք թերանան այն կատարել կամավոր:</p>
<p>Section 4.03. <i>Governmental Authorization.</i> (a) The execution, delivery and performance of this Agreement by Seller and the Republic of Armenia and the consummation of the transactions contemplated hereby require no action by or in respect of, or filing with, any Governmental Authority other than those listed on Schedule 4.03.</p>	<p>Կետ 4.03. <i>Կատավարության կողմից պահանջվող թույլտվություններ:</i> (ա) 4.03 Հավելվածով սահմանված Իշխանական Մարմիններում կատարման ենթակա գրանցումներից, այդ մարմիններում կամ այդ մարմինների կողմից կատարման ենթակա գործողություններից բացի, այլ գործողություններ ու գրանցումներ չեն պահանջվում Վաճառողի և ՀՀ կողմից սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար:</p>
<p>(b) Schedule 4.03 sets forth each Regulatory Approval to be granted or issued by any Governmental Authority in Armenia.</p>	<p>(բ) 4.03 Հավելվածով սահմանված են Կարգավորող Մարմինների Կողմից Պահանջվող Թույլտվությունները, որոնք ենթակա են տրամադրման ՀՀ Իշխանական Մարմինների կողմից:</p>
<p>(c) The Republic of Armenia hereby confirms that no registration of this Agreement and all ancillary agreements and acts entered into pursuant to the transaction contemplated thereunder is required pursuant to Article 15(12) of the Law On Budgetary System of the Republic of Armenia and none of the obligations of the Republic of Armenia thereunder falls under the requirements of Article 11(3) of such law.</p>	<p>(գ) ՀՀ սույնով հաստատում է, որ 'Բյուջետային համակարգի' մասին ՀՀ օրենքի 15(12) հոդվածով սահմանված գրանցումների պահանջը կիրառելի չէ սույն Պայմանագրի և դրա շրջանակներում նախատեսված գործարքի կատարման համար կնքված օժանդակ պայմանագրերի և այլ փաստաթղթերի նկատմամբ, իսկ դրանց հիման վրա ՀՀ ստանձնած պարտավորությունների նկատմամբ չեն տարածվում նույն օրենքի 11(3) հոդվածի դրույթները:</p>
<p>Section 4.04. <i>Non-contravention.</i> (a) Except as may result from any facts or circumstances relating to Buyer or its Affiliates, the execution, delivery and performance of this Agreement by Seller and the Republic of Armenia and the consummation by Seller and/or the Republic of Armenia of the transactions contemplated</p>	<p>Կետ 4.04. <i>Համապարասխանություն:</i> (ա) Բացառությամբ, եթե դա չի բխում Գնորդին կամ վերջինիս հետ Փոխկապակցված Անձանց վերաբերող փաստերից կամ հանգամանքներից, ապա Վաճառողի և ՀՀ կողմից սույն Պայմանագիրը կնքելը և դրանով նախատեսված գործարքները Վաճառողի</p>

<p>hereby do not and will not (i) violate or conflict with the certificate of incorporation or bylaws of Seller, (ii) assuming compliance with the matters referred to in Section 4.03, conflict with or violate in any material respect any Applicable Law or Governmental Order applicable to Seller, the Republic of Armenia or the Purchased Assets or (iii) result in any material breach of, or constitute a default (or event which, with the giving of notice or lapse of time, or both, would become a default) under, or give to any Person any rights of termination, amendment, acceleration or cancellation of, result in the creation of any Lien on any of the Purchased Assets pursuant to, any material note, bond, mortgage, indenture, contract, permit, license, franchise or other instrument to which Seller or the Republic of Armenia (with respect to the Purchased Assets) is a party or by which any Purchased Asset is bound or affected.</p>	<p>և/կամ ՀՀ կողմից կատարելը (i) չի հակասի և չի խախտի Վաճառողի գրանցման վկայականով նախատեսված պայմանները կամ Վաճառողի կանոնադրությամբ կամ ընկերության կառավարումն իրականացնելու վերաբերյալ այլ փաստաթղթերով սահմանված դրույթները, (ii) 4.03 Կետով նախատեսված պահանջները բավարարված լինելու դեպքում, էապես չի հակասի և չի խախտի Վաճառողի, ՀՀ կամ Վաճառվող Գույքի վերաբերյալ գոյություն ունեցող Իշխանական Մարմինների Որոշումների կամ Կիրառելի Օրենսդրության պահանջները կամ (iii) չի հանգեցնի կարճաժամկետ կամ երկարաժամկետ պարտատոմսերի, գրավի պայմանագրերի, պարտատոմսեր թողարկողների և պարտատոմսերի սեփականատերերի միջև կնքված պայմանագրերի, ցանկացած որևէ այլ պայմանագրի, թույլտվության, լիցենզիայի, կոնցեսիայի կամ այլ փաստաթղթերի ու գործիքների դրույթների էական խախտմանը, որոնցով կողմ է հանդիսանում Վաճառողը կամ ՀՀ կամ որոնք վերաբերում են Վաճառվող Գույքին, ինչպես նաև չի հանդիսանա դրանցով սահմանված պարտավորությունների խախտման, պարտավորությունների կատարման թերացման դեպք (կամ չի հանդիսանա այնպիսի դեպք, որը ծանուցում տրամադրելու կամ որոշակի ժամանակ անցնելու կամ երկուսը միասին տեղի ունենալու դեպքում կհամարվի պարտավորությունների խախտման, պարտավորությունների կատարման թերացման դեպք), որևիցե Անձի իրավունք չի վերապահի լուծել, փոփոխել, դադարեցնել նշված փաստաթղթերը, պահանջել դրանցով նախատեսված պարտավորությունների վաղաժամկետ կատարում, հինք չի հանդիսանա Վաճառվող Գույքի նկատմամբ Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներ ստեղծելու համար:</p>
<p>(b) The Republic of Armenia hereby represents that given the long-term and international nature of the transactions</p>	<p>(p) ՀՀ սույնով հայտնում է, որ հաշվի առնելով սույն Պայմանագրով նախատեսված գործարքի երկարաժամկետությունն ու միջազգային</p>

<p>contemplated by this Agreement, the indexation mechanism contained in this Agreement, and specifically Sections 1.01, 2.03, 3.02, 3.03, 12.02, 14.03 and Exhibit A are in compliance with the requirements of the Armenian Law, including in particular the Law On Currency Regulation and Currency Control.</p>	<p>րնույթը, սույն Պայմանագրով նախատեսված ինդեքսավորման մեխանիզմը և, մասնավորապես, Պայմանագրի 1.01, 2.03, 3.02, 3.03, 12.02, 14.03 Կետերը և Հավելված Ա համապատասխանում են ՀՀ օրենսդրության, ներառյալ, մասնավորապես, Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին ՀՀ օրենքի պահանջներին:</p>
<p>Section 4.05. <i>No Undisclosed Liabilities.</i> There are no liabilities of any kind whatsoever transferred in connection with the Purchased Assets, whether accrued, contingent or otherwise, and there is no existing condition or set of circumstances which could reasonably be expected to result in such a liability.</p>	<p>Կետ 4.05. <i>Չբացահայտված պարտավորությունների բացակայություն:</i> Գնորդին Վաճառվող Գույքին առնչվող որևիցե պարտավորություն (լինի դա արդեն իսկ ծագած, թե՛ պայմանական, թե՛ մեկ այլ տեսակի) չի փոխանցվում, և գոյություն չունի ոչ մի պայման կամ հանգամանք, որը կարող է հանգեցնել նման պարտավորության առաջացմանը:</p>
<p>Section 4.06. <i>Contracts.</i> Seller is not a party to or bound by any contract with respect to the Purchased Assets, which would affect the rights of Buyer on the Purchased Assets, including any lease, partnership or joint venture agreement, option or any agreement that limits the freedom of Seller to sell, transfer or otherwise dispose of any Purchased Asset.</p>	<p>Կետ 4.06. <i>Պայմանագրեր:</i> Վաճառողը Վաճառվող Գույքի կապակցությամբ չի կնքել այնպիսի պայմանագրեր և կողմ չի հանդիսանում այնպիսի պայմանագրերի, որոնք կարող են ազդեցություն ունենալ Վաճառվող Գույքի նկատմամբ Գնորդի իրավունքների վրա, ներառյալ՝ այնպիսի պայմանագրեր, ինչպիսիք են վարձակալության, ընկերակցություններ հիմնելու, համատեղ գործունեություն իրականացնելու, օպցիոններ տրամադրելու վերաբերյալ և ցանկացած այլ պայմանագրեր, որոնք սահմանափակում են Վաճառողի՝ Վաճառվող Գույքը վաճառելու, փոխանցելու կամ այլ կերպ տնօրինելու իրավունքները:</p>
<p>Section 4.07. <i>Litigation.</i> There is no action, investigation or proceeding (or any basis therefor) pending against, or to the knowledge of Seller or the Republic of Armenia, threatened against or affecting, any Purchased Asset before (or, in the case of threatened actions, suits, investigations or proceedings, would be before) any Governmental Authority or arbitrator which, individually or in the aggregate, in any manner challenges or seeks to prevent, enjoin, alter or materially delay the</p>	<p>Կետ 4.07. <i>Վեճեր:</i> Վաճառվող Գույքի առնչությամբ գոյություն չունեն Իշխանական Մարմինների կամ այս կամ այն արբիտրի ամջև սկսված կամ հարուցված և դեռ ընթացքում գտնվող որևիցե իրավական վեճ, հետաքննություն կամ վարույթ (կամ այդպիսիք հարուցելու, սկսելու որևիցե հիմք կամ սպառնալիք), որոնք ինքնուրույն կամ բոլորը միասին, նպատակ են հետապնդում այս կամ այն կերպ վիճարկել, արգելել, խոչընդոտել, փոփոխել կամ էականորեն դանդաղեցնել սույն</p>

<p>transactions contemplated by this Agreement.</p>	<p>Պայմանագրով նախատեսված գործարքների իրականացումը:</p>
<p>Section 4.08. <i>Compliance with Laws and Court Orders.</i> In all material aspects Seller complies and has been in compliance since January 1, 2008 with all Applicable Laws relating to the ownership (except with respect to certain Real Property assets that cannot be owned by any person other than the Republic of Armenia, the Buyer’s title to which shall be cured in accordance with Section 2.08(b) of this Agreement) and operations of the Purchased Assets and no action has been filed or commenced or threatened against Seller alleging any failure to so comply. There is no judgment, decree, injunction, rule or order of any arbitrator or Governmental Authority outstanding against Seller that has had or would reasonably be expected to have, individually or in the aggregate, a Material Adverse Effect on the Purchased Assets or that in any manner seeks to prevent, enjoin, alter or materially delay the consummation of the transactions contemplated by this Agreement.</p>	<p>Կետ 4.08. <i>Օրենքների և դատարանների որոշումների պահանջները կատարելը:</i> Վաճառողը բոլոր էական առումներով կատարում է և սկսած 2008թ.-ի հունվարի 1-ից միշտ կատարել է Վաճառվող Գույքի սեփականության իրավունքից (բացառությամբ որոշ Անշարժ գույքի, որոնք ՀՀ-ից բացի որևէ այլ անձի չեն կարող պատկանել, որոնց նկատմամբ Գնորդի սեփականության իրավունքը պետք է փոխանցվի Պայմանագրի 2.08(բ) կետի համաձայն) բխող և դրանք շահագործելու հետ կապված Կիրառելի Օրենսդրության բոլոր պահանջները, և այդ պահանջները չկատարելու առնչությամբ Վաճառողի դեմ չի սկսվել որևիցե վարույթ և չկա նման սպառնալիք: Գոյություն չունեն Իշխանական Մարմինների կամ արբիտրների կողմից կայացված որոշումներ, վճիռներ, արգելանքներ, կարգադրություններ, հրամաններ, հրամանագրեր, որոնք առանձին-առանձին կամ բոլոր միասին վերցրած, Անցանկալի էական Ազդեցություն են ունեցել կամ ողջամտորեն ակնկալվում է, որ կունենան Վաճառվող Գույքի վրա, կամ որոնք նպատակ են հետապնդում այս կամ այն կերպ վիճարկել, արգելել, խոչընդոտել, փոփոխել կամ էականորեն դանդաղեցնել սույն Պայմանագրով նախատեսված գործարքների իրականացումը:</p>
<p>Section 4.09. <i>Properties.</i> (a) Schedule 4.09(a) correctly describes the Facilities and all Real Property, used or held for use in the Business, included in the Purchased Assets, which Seller owns and any title insurance policies and surveys with respect thereto, and any Liens thereon (other than the existing easements (servitudes) whether registered or unregistered (“Easements”) on the Real Property the list of which has been provided to the Buyer pursuant to Section 6.11). The Parties have agreed that on the Closing Date none of such Easements constitute servitudes</p>	<p>Կետ 4.09. <i>Գույքը:</i> (ա) Հավելված 4.09 (ա)-ում ճշգրտությամբ ներկայացված են Գործունեության մեջ կիրառվող և օգտագործվող ու սեփականության իրավունքով Վաճառողին պատկանող Սարքավորումները և ամբողջ Անշարժ Գույքը, որոնք ներառված են Վաճառվող Գույքի կազմում, դրանց վերաբերող բոլոր ապահովագրական վկայականները, դրանց առնչությամբ իրականացված ստուգումների հաշվետվությունները, և դրանց նկատմամբ սահմանված Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքները (բացառությամբ</p>

under Articles 210 to 216 of the Armenian Civil Code. Further, it is understood by the Buyer and ContourGlobal that all the measurements written in the official registration documents evidencing the rights towards the Real Property (the “**Real Property Documents**”) are based on the maps that may be outdated and inaccurate in regards to the borders and sizes of the Real Properties and that the Republic of Armenia and the Seller make no representation and warranty as to the accuracy of such borders and the sizes written into the Real Property Documents. However, if measurements conducted by a licensed professional measuring organization after the Closing evidence that the borders and sizes written into the Real Property Documents are not accurate, the Republic of Armenia undertakes, at the request of the Buyer, to have such sizes and measurements corrected in all relevant Real Property Documents pursuant to the procedures envisaged under Armenian law. The Seller and the Republic of Armenia shall indemnify the Buyer, pursuant to Section 12, for all obligations (tax or otherwise) that may arise from the discrepancies evidenced by such measurements.

Անշարժ Գույքի նկատմամբ սակա գրանցված կամ չգրանցված որոշ սերվիտուտներից («Սերվիտուտներ»), որոնց ցանկը տրամադրվել է Գնորդին 6.11 Կետին համապատասխան): Կողմերը համաձայնել են, որ Գործարքի Ավարտման Օրվա դրությամբ վերոնշյալ սերվիտուտներից որևէ մեկը չի համարվում սերվիտուտ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 210 և 216 հոդվածների իմաստով: Բացի դրանից, Գնորդը և ՔոնթուրԳլոբալը ընդունում են, որ Անշարժ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման փաստաթղթերում («Անշարժ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման փաստաթղթեր») ներկայացված բոլոր չափումները հիմնված են քարտեզների վրա, որոնք հնարավոր է պարունակեն Անշարժ Գույքի սահմանների և չափերի մասին հին տեղեկություններ և ճշգրիտ չլինեն և, որ ՀՀ և Վաճառողը չեն տալիս որևէ երաշխիքներ և հավաստիքներ Անշարժ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման փաստաթղթերում ներկայացված սահմանների և չափերի ճշտության վերաբերյալ: Այնուամենայնիվ, եթե Գործարքի Ավարտից հետո մասնագիտացված և լիցենզավորված չափագրող ընկերության կողմից իրականացված չափագրման արդյունքում պարզվի, որ Անշարժ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման փաստաթղթերում Անշարժ գույքի սահմանները և չափերը ճիշտ չեն ներկայացված, ՀՀ-ը պարտավորվում է Գնորդի պահանջով կատարել սահմանների և չափերի համապատասխան ճշգրտումներ Անշարժ Գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման փաստաթղթերում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Վաճառողը և ՀՀ պարտավորվում են Կետ 12-ի համաձայն փոխհատուցել Գնորդին՝ չափագրման արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների արդյունքում

	առաջացած պարտավորությունների (հարկային կամ այլ) համար:
(b) Schedule 4.09(b) correctly describes all Movable Property used and held for use in the Business included in the Purchased Assets, which Seller owns and any title insurance policies and surveys with respect thereto, and any Liens thereon.	(բ) Հավելված 4.09 (բ)-ում ճշգրտությանը ներկայացված են Գործունեության մեջ կիրառվող և օգտագործվող ու սեփականության իրավունքով Վաճառողին պատկանող ամբողջ Շարժական Գույքը, որը ներառված է Վաճառվող Գույքի կազմում, ինչպես նաև դրանց վերաբերյալ բոլոր ապահովագրական վկայականները, դրանց առնչությանը իրականացված ստուգումների հաշվետվությունները, և դրանց նկատմամբ սահմանված Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքները:
(c) Seller has good title to all Purchased Assets. No Purchased Asset is subject to any Lien, except for the existing easements (<i>servitudes</i>) on the Real Property the list of which has been provided to the Buyer pursuant to Section 6.11.	(գ) Վաճառողը իրեն պատկանող Վաճառվող Գույքի նկատմամբ ունի օրենքով ճանաչված, սեփականության իրավունք: Վաճառվող Գույքը ծանրաբեռնված չէ Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներով, բացառությամբ Անշարժ Գույքի նկատմամբ առկա որոշ սերվիտուտների, որոնց ցանկը տրամադրվել է Գործողին 6.11 կետին համապատասխան:
(d) To the knowledge of Seller or the Republic of Armenia there are no developments affecting or threatening any of the Purchased Assets, which might materially detract from the value, materially interfere with any present or intended use or materially adversely affect the use of such Purchased Assets.	(դ) Գոյություն չունեն դեպքերի այնպիսի զարգացումներ կամ Վաճառողի կամ ՀՀ ունեցած տեղեկությունների համաձայն դեպքերի այնպիսի սպառնալի զարգացումներ, որոնք կարող են էապես նվազեցնել Վաճառվող Գույքի արժեքը, էապես ազդել ներկայումս կամ ապագայում դրանցից օգտվելու հնարավորության վրա կամ էական բացասական ազդեցություն ունենալ դրանք օգտագործելու հնարավորության վրա:
(e) The Real Property includes all real property, and only such real property, as is used or held for use in connection with the operations of the Business as heretofore conducted.	(ե) Անշարժ Գույքը ներառում ամբողջ և բացառապես այն անշարժ գույքը, որն օգտագործվում է Գործունեության մեջ (այնպես, ինչպես այն իրականացվել է մինչ այս պահը):
(f) To the knowledge of the Seller and the Republic of Armenia, the key elements of the Purchased Assets namely the Dams, Spillways, Tunnels, Penstocks, Hydro Turbines, Generators, Transformers and associated HV switch gear have no material	(զ) Վաճառողի կամ ՀՀ ունեցած տեղեկությունների համաձայն Վաճառվող Գույքի կազմում ներառված գույքի հիմնական միավորները, մասնավորապես, ամրաբարակները, ջրթող ուղիները, թունելները,

<p>defects, are in operating condition and are adequate and suitable for their use on the Closing Date.</p>	<p>ջրարգելակները, հիդրոտուրբինները, գեներատորները, հոսանքափոխարկիչները և դրանց հարակից բարձրավոլտ միացման սարքը գերծ են էական թերություններից, գտնվում են շահագործման համար պիտանի վիճակում և Գործարքի Ավարտման օրվա դրությամբ պիտանի են այն նպատակով օգտագործման համար, որի համար նախատեսված են:</p>
<p>(g) The Facilities, buildings and structures included in the Purchased Assets currently have access to (1) public roads or valid easements over private streets or private property for such ingress to and egress from all such plants, buildings and structures and (2) water supply, storm and sanitary sewer facilities, telephone, internet, gas and electrical connections, fire protection, drainage and other public utilities, in each case as is necessary for the conduct of the Business as it has heretofore been conducted. None of the Facilities, buildings, or structures on the Real Property encroaches upon real property of another Person, and no plant, building, or structure of any other Person substantially encroaches upon any Real Property, except as disclosed in Schedule 6.11.</p>	<p>(է) Վաճառվող Գույքի կազմում ներառված Սարքավորումները, շենքերը և շինությունները (1) միացած են հանրային ճանապարհներին կամ այնտեղ մուտք գործելու և այնտեղից դուրս գալու համար սահմանվել են վավեր սերվիտուտներ մասնավոր փողոցների կամ գույքի նկատմամբ, և (2) ունեն ջրամատակարարում, հակահողմային և հակահրդեհային համակարգեր, կոյուղի, կոյուղագծեր, հեռախոսային և ինտերնետ կապի, գազամատակարարման և էլեկտրամատակարարման միացումներ ու այլ կոմունալ հարմարություններ, որոնք անհրաժեշտ են Գործունեությունը մինչ այս պահն իրականացված տեսքով իրականացնելու համար: Սարքավորումները և շինությունները չեն խախտում այլ Անձանց՝ անշարժ գույքի նկատմամբ ունեցած իրավունքները և այլ Անձանց արտադրամասերը, շենքերն ու շինությունները չեն խախտում Վաճառողի՝ Անշարժ Գույքի նկատմամբ ունեցած իրավունքները՝ բացառությամբ Հավելված 6.11-ում ներկայացվածի:</p>
<p>(h) The Real Property, and its continued use, occupancy and operation as currently used, occupied and operated, does not constitute a nonconforming use under any Applicable Law relating to building, zoning, subdivision and other land use.</p>	<p>(ը) Անշարժ գույքի ներկայիս օգտագործումը, զբաղեցնելը և շահագործումը Կիրառելի Օրենսդրության քաղաքաշինական, շինարարական, հողերի դասակարգման և նպատակային օգտագործման պահանջների առումով չեն հանգեցնում և չեն հանդիսանում արգելված օգտագործում:</p>
<p>(i) None of the Purchased Assets is an equity interest in an entity.</p>	<p>(թ) Վաճառվող Գույքը չի ներառում այս կամ այն ընկերության կապիտալում մասնակցության իրավունք:</p>
<p>Section 4.10. <i>Sufficiency of and Title to the</i></p>	<p>Կետ 4.10. <i>Վաճառվող Գույքի բավարար լինելը,</i></p>

<p><i>Purchased Assets.</i> (a) The Purchased Assets constitute all of the property and assets used and held for use in the Business and are in operating conditions as to the Closing date.</p>	<p><i>դրանց նկատմամբ սեփականության իրավունքը:</i> (ա) Վաճառվող Գույքը հանդիսանում է Գործունեության մեջ օգտագործվող ամբողջ գույքը և Գործարքի Ավարտման օրվա դրությամբ գտնվում են շահագործման համար պիտանի վիճակում:</p>
<p>(b) Upon consummation of the transactions contemplated hereby, Buyer will have acquired good title in and to each of the Purchased Assets, free and clear of all Liens except the Liens arising in accordance with Section 7.01 (b).</p>	<p>(բ) Սույն Պայմանագրով նախատեսված գործարքներն իրականացնելուց հետո Գնորդը Վաճառվող Գույքի նկատմամբ ձեռք կրերի օրենքով ճանաչված սեփականության իրավունք՝ գերծ Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներից, բացառությամբ Կետ 7.01(բ)-ի համաձայն ծագող Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքների:</p>
<p>Section 4.11. <i>Licenses and Permits.</i> Schedule 2.01(e) correctly describes each license, franchise, permit, certificate, approval or other similar authorization affecting, or relating in any way to, the Purchased Assets or the Business (the “Permits”) together with the name of the Governmental Authority issuing such Permit.</p>	<p>Կետ 4.11. <i>Լիցենզիաներ և թույլտվություններ:</i> 2.01(ե) Հավելվածում ճշգրիտ կերպով թվարկված են Վաճառվող Գույքի կամ Գործունեության հետ կապված կամ դրանց առնչվող բոլոր լիցենզիաները, կոնցեսիոն շնորհները, թույլտվությունները, վկայականները, հաստատումներն ու այլ հավանությունները («Թույլտվություններ») և դրանք տրամադրող Իշխանական Մարմինների անվանումները:</p>
<p>Section 4.12. <i>Finders’ Fees.</i> No investment banker, broker, finder or other intermediary retained by or on behalf of Seller or the Republic of Armenia might be entitled to any fee or commission in connection with the transactions contemplated by this Agreement.</p>	<p>Կետ 4.12. <i>Միջնորդավճարներ:</i> Վաճառողի կամ ՀՀ կողմից կամ նրանց անունից ներգրավված որևէ ներդրումային բանկ, միջնորդային ծառայություններ մատուցող, գնորդներ որոնող որևէ գործակալ կամ միջնորդ հանդիսացող որևէ այլ Անձ իրավունք չունի կոմիսիոն վճարներ ստանալ սույն Պայմանագրով նախատեսված գործարքների իրականացման կապակցությամբ:</p>
<p>Section 4.13. <i>Environmental and Safety Compliance.</i> Pursuant to Article 59 (3) of the Republic of Armenia Energy Law the implementation of the requirements of the safety and environmental norms set forth in the Applicable Laws, shall be implemented by licensed entities according to the staged remedial program and schedule approved by the Regulator. During the implementation of the said remedial program, any deviation from the technical regulations shall not be</p>	<p>Կետ 4.13. <i>Բնապահպանական և Անվտանգության ապահովման Օրենսդրության պահանջների կատարումը:</i> Էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 59 (3) հոդվածի համաձայն Կիրառելի օրենսդրությամբ սահմանված անվտանգության և բնապահպանության նորմերի պահանջների կատարմանն ուղղված միջոցառումները լիցենզավորված անձինք իրականացնում են Կարգավորող Մարմնի հաստատած փուլային ծրագրով և</p>

<p>considered a violation of the said norms pursuant to the requirements of the Applicable Law referred herein. The Seller hereby states and confirms that the Seller is in full compliance with the requirements of the Environmental Laws as well as the Purchased Assets are in compliance with all laws (including rules, ordinances, requirements and regulations thereunder) of the Republic of Armenia (and all agencies thereof) applicable thereto, except to the extent that any such noncompliance would not, either individually or in the aggregate, result in total liability and/or costs to the Buyer in excess of USD 20,000.</p>	<p>ժամանակացույցով: Հաստատված ծրագրի իրականացման ընթացքում դրանցում ներառված տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերի պահանջներից շեղումները չեն համարվում այդ նորմերի խախտումներ՝ Կիրառելի օրենսդրության համաձայն: Վաճառողը սույնով հաստատում է, որ իր կողմից կատարվել են Բնապահպանական Օրենսդրության բոլոր պահանջները և, որ Վաճառվող Գույքը համապատասխանում է վերջինիս նկատմամբ կիրառելի ՀՀ (ինչպես նաև բոլոր համապատասխան գործակալությունների) օրենքներին (ներառյալ օրենսդրության պարտադիր կանոններին ու պահանջներին, կանոնակարգերին), բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի անհամապատասխանությունները առանձին-առանձին կամ միասին չեն հանգեցնի 20,000 ԱՄՆ դոլարը գերազանցող պատասխանատվություն/ծախս Գնորդի համար:</p>
<p>Section 4.14. <i>Anti-corruption and Sanctions Matters.</i> None of the Republic of Armenia in its capacity as shareholder in the Seller, the Seller, any of its officers, directors, employees or agents, or the Seller’s Business, is in violation of any (i) Applicable Law relating to bribery, kick-backs, or similar business practices or (ii) applicable requirements of (A) any Applicable Law relating to anti-money laundering or (B) any export control, anti-boycott and economic sanctions laws of the Republic of Armenia and other applicable jurisdictions relating to the Seller’s Business, the Project or the Facilities.</p>	<p>Կետ 4.14. <i>Կոռուպցիայի բացառում և պատժամիջոցներ:</i> ՀՀ, որպես Վաճառողի միակ բաժնետեր, Վաճառողը, Վաճառողի ղեկավար անձիք, տնօրենները, աշխատակիցները և գործակալները չեն խախտել (i) Կիրառելի Օրենսդրության այն պահանջները, որոնք արգելում են կաշառք ու ապօրինի միջնորդավճարներ տալը և ստանալը, ինչպես նաև գործարար հարաբերություններում նմանատիպ բոլոր այլ արարքները, կամ (ii) Կիրառելի Օրենսդրության բոլոր այն պահանջները, որոնք վերաբերում են (Ա) փողերի լվացմանը կամ (Բ) արտահանումների նկատմամբ վերահսկողություն սահմանելու և իրականացնելու, տնտեսական բոյկոտներին հակազդելու և պատժամիջոցներ սահմանելու ու կիրառելու վերաբերյալ ՀՀ և պատեհ այլ երկրների օրենսդրության պահանջները, որոնք վերաբերում են Վաճառողի կողմից</p>

	<p>իրականացվող Գործունեությանը, Նախագծին կամ Սարքավորումներին: Վաճառողի կողմից իրականացվող Գործունեության արդյունքում չեն խախտվում նշված օրենսդրական պահանջները:</p>
<p>Section 4.15. <i>Valuation.</i> Each of the Seller and the Republic of Armenia hereby confirm that they have conducted a thorough analysis of the Business and the Purchased Assets, having regard in particular to the market conditions, the regulatory, economic and business environment and prospects in Armenia, and have concluded that the Purchase Price reflects the fair value of the Purchased Assets and that the other terms of Project Agreement as contemplated herein are fair and genuine.</p>	<p>Կետ 4.15. <i>Գնահատում:</i> Վաճառողը և ՀՀ առանձին-առանձին հաստատում են, որ Հայաստանի շուկայի պայմանների, օրենսդրական կարգավորման, տնտեսական և բիզնես կլիմայի ու հեռանկարների հաշվառմամբ իրականացրել են Գործունեության և Վաճառվող Գույքի բազմակողմանի վերլուծություն և եկել են այն եզրակացության, որ Վաճառքի Գինն արտահայտում է Վաճառվող Գույքի իրական արժեքը, և որ Նախագծի սույն Պայմանագրով սահմանված մնացած բոլոր պայմանները արդար են և իրատեսական:</p>
<p>Section 4.16. <i>Limited Nature of Representations and Warranties.</i> The representations in this Article 4 constitute the only representations by the Seller and the Republic of Armenia in connection with this Agreement. ContourGlobal and the Buyer acknowledge that ContourGlobal and the Buyer have inspected the Facilities of the Seller. The Buyer and ContourGlobal acknowledge that no remedial action agreed between the parties in connection with the actions and surveys carried out pursuant to Sections 7.02, 7.03 and 7.04(d) shall give rise to any claim against the Seller or the Republic of Armenia for breach of warranty. None of the above shall limit the rights of the Buyer and ContourGlobal to seek equitable remedies and make claims based on willful breach, intentional misrepresentation or fraud.</p>	<p>Կետ 4.16. <i>Երաշխիքների և հավաստիքների սահմանափակ բնույթը.</i> Սույն Պայմանագրի Հոդված 4-ում բերված երաշխիքներն ու հավաստիքները սույն Պայմանագրի կապակցությամբ Վաճառողի և ՀՀ կողմից տրվող միակ երաշխիքներն ու հավաստիքներն են: ՔոնթուրԳլոբալը և Գնորդը հավաստում են, որ ստուգել են Վաճառողի Սարքավորումները: ՔոնթուրԳլոբալը և Գնորդը հավաստում են, որ Պայմանագրի 7.02, 7.03, և 7.04(դ) կետերին համապատասխան իրականացված գործողությունների և ուսումնասիրությունների արդյունքում Կողմերի միջև համաձայնեցված թերությունները շտկելու գործողությունների ծրագիրը չի կարող Վաճառողի կամ ՀՀ կողմից երաշխիքները խախտելու համար՝ վերջիններիս պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ: Վերոնշյալը չի սահմանափակում Գնորդի և ՔոնթուրԳլոբալի՝ դիտավորյալ խախտման, կանխամտածված սխալի կամ խաբեության արդյունքում՝ իրավունքների պաշտպանության միջոցների դիմելու և պահանջներ ներկայացնել իրավունքը:</p>

<p style="text-align: center;">ARTICLE 5</p> <p style="text-align: center;">REPRESENTATIONS AND WARRANTIES OF BUYER AND CONTOURGLOBAL</p>	<p style="text-align: center;">ՀՈՒՎԱԾ 5</p> <p style="text-align: center;">ԳՆՈՐԴԻ ԵՎ ՔՈՆՏՈՒՐԳԼՈՅԱԼԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՎԱՍՏԻՔՆԵՐԸ</p>
<p>Buyer and ContourGlobal jointly and severally represent and warrant to each of Seller and the Republic of Armenia as of the date hereof and as of the Closing Date that:</p>	<p>Գնորդը և ՔոնտուրԳլոբալը միասին և առանձին-առանձին Վաճառողին և Հայաստանի Հանրապետությանը հայտնում և երաշխավորում են, որ սույն Պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ և Գործարքի Ավարտման Օրվա դրությամբ</p>
<p>Section 5.01. <i>Corporate Existence; Power and no Insolvency.</i> (a) Buyer is a company duly incorporated, validly existing and in good standing under the laws of the Republic of Armenia and has all corporate powers and all material governmental licenses, authorizations, permits, consents and approvals required to carry on its business as now conducted and immediately following Closing. Buyer has delivered to Seller true and complete copies of the certificate of incorporation and bylaws of Buyer as currently in effect. ContourGlobal is a company duly incorporated, validly existing and in good standing under the laws of the Grand Duchy of Luxembourg and has all corporate powers and all material governmental licenses, authorizations, permits, consents and approvals required to carry on its business as now conducted and immediately following Closing. ContourGlobal has delivered to Seller true and complete copies of the certificate of incorporation and bylaws of ContourGlobal as currently in effect.</p>	<p>Կետ 5.01. <i>Գնորդը և ՔոնտուրԳլոբալը որպես գոյություն ունեցող ընկերություններ, վերջիններիս իրավասությունները և վճարունակությունը:</i> (ա) Գնորդը ՀՀ օրենքների համաձայն պատշաճ կերպով հիմնված և գործող ընկերություն է, նրա հիմնադրման և գործունեության իրականացման կապակցությամբ չեն խախտվել կորպորատիվ օրենքների պահանջները, այն ունի իր կողմից իրականացվող գործունեությունը ներկայումս իրականացված տեսքով Գործարքի ավարտից հետո անմիջապես իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր կորպորատիվ լիազորությունները և էական համարվող կառավարական լիցենզիաները, թույլտվությունները, համաձայնությունները, հաստատումներն ու հավանությունները: Գնորդը Վաճառողին է հանձնել իր գրանցման վկայականի, կանոնադրության և ընկերության կառավարումն իրականացնելու վերաբերյալ դրույթներ պարունակող այլ փաստաթղթերի ներկայումս գործող տարբերակների ճիշտ և ամբողջական օրինակները: ՔոնտուրԳլոբալը Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության օրենքների համաձայն պատշաճ կերպով հիմնված և գործող ընկերություն է, նրա հիմնադրման և գործունեության իրականացման կապակցությամբ չեն խախտվել կորպորատիվ օրենքների պահանջները, այն ունի իր կողմից իրականացվող գործունեությունը ներկայումս իրականացված տեսքով Գործարքի ավարտից</p>

	<p>հետո անմիջապես իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր կորպորատիվ լիազորությունները և էական համարվող կառավարական լիցենզիաները, թույլտվությունները, համաձայնությունները, հաստատումներն ու հավանությունները: ՔոնթուրԳլոբալը Վաճառողին է հանձնել իր գրանցման վկայականի, կանոնադրության և ընկերության կառավարումն իրականացնելու վերաբերյալ դրույթներ պարունակող այլ փաստաթղթերի ներկայումս գործող տարբերակների ճիշտ և ամբողջական օրինակները:</p>
<p>(b) Buyer and ContourGlobal are not insolvent, are not currently the subject matter of any action, claim proceedings or judgment with a view to prevent or settle business difficulties and there are no reasons for such actions, claims, proceedings to be initiated or judgment to be rendered with respect to Buyer or ContourGlobal.</p>	<p>(բ) Գնորդը և ՔոնթուրԳլոբալը անվճարունակ չեն, ներկայումս չկան այնպիսի վարույթներ, հարուցված չեն այնպիսի հայցեր, ներկայացված չեն այնպիսի պահանջներ, չեն կայացվել այնպիսի դատական որոշումներ, որոնք նպատակ են հետապնդում կանխել կամ լուծել Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի տնտեսական դժվարությունները, և չկան հիմքեր կարծելու, որ կլինեն նման վարույթներ, կհարուցվեն նման հայցեր, կներկայացվեն նման պահանջներ կամ կկայացվեն նման որոշումներ:</p>
<p>Section 5.02. <i>Corporate Authorization.</i> The execution, delivery and performance by Buyer and ContourGlobal of this Agreement and the consummation of the transactions contemplated hereby are within the corporate powers of Buyer and ContourGlobal respectively and have been duly authorized by all necessary corporate action on the part of each of Buyer and ContourGlobal. This Agreement constitutes a valid and binding agreement of Buyer and ContourGlobal.</p>	<p>Կետ 5.02. <i>Կորպորատիվ հավանություններ:</i> Գնորդը և ՔոնթուրԳլոբալն ունեն սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար պահանջվող բոլոր լիազորությունները: Սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար Գնորդը և ՔոնթուրԳլոբալը ստացել են իրենց համապատասխան կառավարող մարմինների հավանությունները: Սույն Պայմանագիրը վավեր և պարտադիր է կատարման Գնորդի և ՔոնթուրԳլոբալի համար և կարող է հարկադրաբար ի կատար ածվել նրանց դեմ, եթե վերջիններս թերանան այն կամավոր կատարել:</p>
<p>Section 5.03. <i>Governmental Authorization.</i> The execution, delivery and performance by Buyer and ContourGlobal of this Agreement and the consummation of the transactions</p>	<p>Կետ 5.03. <i>Կառավարության կողմից պահանջվող թույլտվություններ:</i> 4.03 Հավելվածով սահմանված Իշխանական Մարմիններում կատարման ենթական</p>

<p>contemplated hereby require no material action by or in respect of, or material filing with, any Governmental Authority other than those listed on Schedule 4.03.</p>	<p>գրանցումներից և այդ մարմիններում կամ այդ մարմինների կողմից կատարման ենթակա գործողություններից բացի, այլ էական գործողություններ ու գրանցումներ չեն պահանջվում Գնորդի և ՔոնթուրԳլոբալի կողմից սույն Պայմանագիրը կնքելու և դրանով նախատեսված գործարքները կատարելու համար:</p>
<p>Section 5.04. <i>Non-contravention.</i> The execution, delivery and performance by Buyer and ContourGlobal of this Agreement and the consummation by Buyer and/or ContourGlobal of the transactions contemplated hereby do not and will not (a) violate the certificates of incorporation or bylaws of Buyer or ContourGlobal, or (b) assuming compliance with the matters referred to in Section 4.03, violate any material Applicable Law, or (c) result in any material breach of, or constitute a default (or event which, with the giving of notice or lapse of time, or both, would become a default) under, or give to any Person any rights of termination, amendment, acceleration or cancellation of, any material note, bond, mortgage, indenture, contract, permit, license, franchise or other instrument to which Buyer or ContourGlobal is a party and which affects or can reasonably affect the ability of the latter to implement the Project or properly perform their obligations under the Project Agreements.</p>	<p>Կետ 5.04. <i>Համապատասխանություն:</i> Գնորդի և ՔոնթուրԳլոբալի կողմից սույն Պայմանագիրը կնքելը և դրանով նախատեսված գործարքները Գնորդի և/կամ ՔոնթուրԳլոբալի կողմից կատարելը (ա) չի խախտի Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի գրանցման վկայականներով նախատեսված պայմանները կամ Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի կանոնադրություններով կամ ընկերությունների կառավարումն իրականացնելու վերաբերյալ այլ փաստաթղթերով սահմանված դրույթները, կամ (բ) 4.03 Կետով նախատեսված պահանջները բավարարված լինելու դեպքում, չի խախտի Կիրառելի Օրենսդրության այս կամ այն էական համարվող պահանջները, կամ (գ) չի հանգեցնի կարճաժամկետ կամ երկարաժամկետ պարտատոմսերի, գրավի պայմանագրերի, պարտատոմսեր թողարկողների և պարտատոմսերի սեփականատերերի միջև կնքված պայմանագրերի, ցանկացած որևէ այլ պայմանագրի, թույլտվության, լիցենզիայի, կոնցեսիայի կամ այլ փաստաթղթերի ու գործիքների դրույթների էական խախտմանը, որոնց կողմ է հանդիսանում Գնորդը կամ ՔոնթուրԳլոբալը և որը ազդում է կամ ողջամտորեն կարող է ազդել վերջիններիս կողմից Նախագծի իրականացման կամ Նախագծային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման վրա, ինչպես նաև չի հանդիսանա դրանցով սահմանված պարտավորությունների խախտման, պարտավորությունների կատարման թերացման դեպք (կամ չի հանդիսանա այնպիսի դեպք, որը ծանուցում տրամադրելու կամ որոշակի ժամանակ</p>

	անցնելու կամ երկուսը միասին տեղի ունենալու դեպքում կհամարվի պարտավորությունների խախտման, պարտավորությունների կատարման թերացման դեպք), և որևիցե Անձի իրավունք չի վերապահի լուծել, փոփոխել, դադարեցնել նշված փաստաթղթերը:
Section 5.05. <i>Litigation.</i> There is no action, suit, investigation or proceeding pending against, or to the knowledge of Buyer or ContourGlobal threatened against or affecting, Buyer or ContourGlobal which would have an adverse effect on the ability of Buyer or ContourGlobal to implement the Project or perform its obligations under the Project Agreements or this Agreement.	Կետ 5.05. <i>Վեճեր:</i> Գոյություն չունի Գնորդին կամ ՔոնթուրԳլոբալին վերաբերող ընթացքի մեջ գտնվող կամ Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի ունեցած տեղեկությունների համաձայն սպառնացող որևիցե վեճ, հետաքննություն կամ վարույթ, որը կարող է անցանկալի ազդեցություն ունենալ և ազդել վերջիններիս կողմից Նախագծի իրականացման կամ Նախագծային պայմանագրերով կամ սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վրա:
Section 5.06. <i>Due Diligence, Valuation, No Adjustments.</i> Each of the Buyer and ContourGlobal hereby confirm that they have conducted a thorough analysis of the Business and the Purchased Assets, having regard in particular to the market conditions, the regulatory, economic and business environment and prospects in Armenia, and have concluded that the Purchase Price reflects the fair value of the Purchased Assets and that the other terms of Project Agreement as contemplated herein are fair and genuine. In executing this Agreement, the Buyer and ContourGlobal do not rely and have not relied upon any representation or statement made by any other party, or by any of the agents, representatives or attorneys of any other party, with regard to the subject matter, basis or effect of this Agreement or otherwise, other than as may be specifically stated in this Agreement.	Կետ 5.06. <i>Ստուգում, Գնահատում, Վերանայման արգելք:</i> Գնորդը և ՔոնթուրԳլոբալը առանձին-առանձին հաստատում են, որ Հայաստանի շուկայի պայմանների, օրենսդրական կարգավորման, տնտեսական և քիզնես կլիմայի ու հեռանկարների հաշվառմամբ իրականացրել են Գործունեության և Վաճառվող Գույքի բազմակողմանի վերլուծություն և եկել են այն եզրակացության, որ Վաճառքի Գինն արտահայտում է Վաճառվող Գույքի իրական արժեքը, և որ Նախագծի սույն Պայմանագրով սահմանված մնացած բոլոր պայմանները արդար են և իրատեսական: Սույն Պայմանագիրը կնքելիս Գնորդը և ՔոնթուրԳլոբալը չեն հիմնվել մյուս կողմերից որևէ մեկի, վերջիններիս գործակալների, ներկայացուցիչների կամ իրավաբանների հայտարարությունների վրա՝ Պայմանագրի առարկայի, հիմքերի կամ ազդեցության կամ սույն Պայմանագրով սահմանվածից բացի այլ հարցերի վերաբերյալ:
Section 5.07. <i>Anti-corruption and Sanctions Matters.</i> None of ContourGlobal in its capacity as shareholder in the Buyer, the	Կետ 5.07. <i>Կոռուպցիայի բացառում և պարժամիջոցներ:</i> ՔոնթուրԳլոբալը, որպես Գնորդի միակ բաժնետեր, Գնորդը, Գնորդի

<p>Buyer, any of its officers, directors, employees or agents, or the Buyer's Business, is in violation of any (i) Armenian Law relating to corrupt practices, bribery, kick-backs, or similar business practices or (ii) applicable requirements of (A) any Armenian Law relating to anti-money laundering or (B) any export control, anti-boycott and economic sanctions laws of the Republic of Armenia and other applicable jurisdictions relating to the Buyer's Business, the Project or the Facilities.</p>	<p>ղեկավար անձիք, տնօրենները, աշխատակիցները և գործակալները չեն խախտել (i) Կիրառելի Օրենսդրության այն պահանջները, որոնք արգելում են կաշառք ու ապօրինի միջնորդավճարներ տալը և ստանալը, ինչպես նաև գործարար հարաբերություններում նմանատիպ բոլոր այլ արարքները, կամ (ii) Կիրառելի Օրենսդրության բոլոր այն պահանջները, որոնք վերաբերում են (Ա) փողերի լվացմանը կամ (Բ) արտահանումների նկատմամբ վերահսկողություն սահմանելու և իրականացնելու, տնտեսական բոյկոտներին հակազդելու և պատժամիջոցներ սահմանելու ու կիրառելու վերաբերյալ ՀՀ և կիրառելի այլ երկրների օրենսդրության պահանջները, որոնք վերաբերում են Գնորդի կողմից իրականացվող Գործունեությանը, Նախագծին կամ Սարքավորումներին: Գնորդի կողմից իրականացվող Գործունեության արդյունքում չեն խախտվում նշված օրենսդրական պահանջները:</p>
<p>Section 5.08. <i>Qualification.</i> The Buyer is qualified to obtain any licenses necessary for the operation of the Facilities under applicable laws and regulations. The Buyer has employed or retained a management company or management team having the requisite experience and expertise to own and operate the Facilities in accordance with the Accepted Operating Practices. Buyer and ContourGlobal each separately or together have, and are capable of procuring, sufficient financial resources and expertise to perform under the Project Agreements in accordance with the Accepted Operating Practices.</p>	<p>Կետ 5.08. <i>Լիցենզիաներ ստանալու և շահագործելու իրավասություններ:</i> Գնորդն իրավասու է ստանալ Կիրառվող օրենսդրության համաձայն Սարքավորումներն շահագործելու համար անհրաժեշտ ցանկացած լիցենզիա: Գնորդն ունի Կառավարող ընկերություն կամ Կառավարող թիմ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիքներ Շահագործման Ընդունված Կանոնների համաձայն Սարքավորումները տիրապետելու և շահագործելու համար: Գնորդը և ՔոնթուրԳլոբալը առանձին-առանձին կամ միասին ունեն և կարող են ապահովել բավարար ֆինանսական միջոցներ և փորձ Շահագործման Ընդունված Կանոնների համաձայն Նախագծային պայմանագրերը կատարելու համար:</p>
<p>Section 5.09. <i>Limited Nature of Representations and Warranties.</i> The</p>	<p>Կետ 5.09. <i>Երաշխիքների և հավաստիքների սահմանափակ բնույթը:</i> Սույն Պայմանագրի</p>

<p>representations in this Article 5 constitute the only representations by the Buyer and ContourGlobal in connection with this Agreement. None of the above shall limit the rights of the Seller and the Republic of Armenia to seek equitable remedies and make claims based on willful breach, intentional misrepresentation or fraud.</p>	<p>Հողված 5-ում բերված երաշխիքներն ու հավաստիքները սույն Պայմանագրի կապակցությամբ Գնորդի և ՔոնթուրԳլոբալի կողմից տրվող միակ երաշխիքներն ու հավաստիքներն են: Վերոնշյալները չեն կարող սահմանափակել Վաճառողի և ՀՀ կողմից կատարված դիտավորյալ խախտման, կանխամտածված սխալի կամ խաբեության արդյունքում՝ Գնորդի և ՔոնթուրԳլոբալի՝ իրավունքների պաշտպանության միջոցների դիմելու և պահանջներ ներկայացնել իրավունքը:</p>
<p style="text-align: center;">ARTICLE 6</p> <p style="text-align: center;">COVENANTS OF SELLER AND REPUBLIC OF ARMENIA</p>	<p style="text-align: center;">ՀՈԴՎԱԾ 6</p> <p style="text-align: center;">ՎԱՃԱՌՈՂԻ ԵՎ ՀՀ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<p>Seller and the Republic of Armenia jointly and severally agree that:</p>	<p>Հայաստանի Հանրապետությունը և Վաճառողը միասին և առանձին-առանձին համաձայնում են</p>
<p>Section 6.01. <i>Conduct of the Business.</i> (a) From the date hereof until the Closing Date, Seller shall conduct the Business in the ordinary course consistent with past practice and Applicable Law and use its best efforts to preserve intact the Facilities and Purchased Assets and maintain in effect the Permits.</p>	<p>Կետ 6.01. <i>Գործունեության իրականացումը:</i> (ա) Սույն Պայմանագրի ստորագրման օրվանից հետո մինչև Գործարքի Ավարտման Օրը Վաճառողը Գործունեությունը կիրականացնի այնպես, ինչպես սովորաբար իրականացրել է՝ առանց շեղվելու նախկինում Գործունեությունն իրականացնելու եղանակներից և պահպանելով Կիրառելի Օրենսդրության պահանջները, և կգործադրի իր բոլոր ջանքերը Սարքավորումներն ու Վաճառվող Գույքը վնասից զերծ պահելու, ինչպես նաև Թույլտվությունները վավեր պահելու համար:</p>
<p>(b) Without limiting the generality of the foregoing, except as expressly contemplated by this Agreement, Seller shall not:</p>	<p>(բ) Չսահմանափակելով վերոգրյալ դրույթների ընդհանրական բնույթը՝ բացառությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով, Վաճառող պարտավորվում է</p>
<p>(i) sell, lease or otherwise transfer, or create or incur any Lien on, any Purchased Assets;</p>	<p>(i) չվաճառել, վարձակալության չտրամադրել կամ այլ կերպ չօտարել Վաճառվող Գույքը, դրա նկատմամբ չստեղծել Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքներ, թույլ չտալ, որպեսզի նման իրավունքներ առաջանան,</p>

<p>(ii) terminate or withdraw any transferrable license, authorization, permit, consent or approval;</p>	<p>(ii) Չհրաժարվել կամ ետ չվերցնել այս կամ այն լիցենզիան, թույլտվությունը, համաձայնությունը, հավանությունը կամ հաստատումը, որը հնարավոր է փոխանցել.</p>
<p>(iii) establish or increase any Employee Benefit, other than as required by Applicable Law or in the ordinary course of business consistent with past practice;</p>	<p>(iii) Չսահմանել և չավելացնել Աշխատակիցների Երաշխիքները և Հատուցումները, եթե նման պահանջ սահմանված չէ Կիրառելի Օրենսդրությամբ կամ եթե դա կապված չէ Վաճառողի կողմից Գործունեությունը նախկինի պես բնականոն հունով իրականացման հետ,</p>
<p>(iv) settle, or offer or propose to settle any litigation, arbitration, proceeding or dispute that relates to the transactions contemplated hereby;</p>	<p>(iv) սույն Պայմանագրով նախատեսված գործարքների առնչությամբ դատական, արբիտրաժային կամ այլ վարույթ հարուցված լինելու դեպքում չկնքել հաշտության համաձայնություններ, այդպիսի համաձայնություններ կնքելու առաջարկություններ չանել.</p>
<p>(v) take any action that would make any representation or warranty of Seller hereunder, or omit to take any action necessary to prevent any representation or warranty of Seller hereunder from being, inaccurate in any respect at, or as of any time before, the Closing Date; or</p>	<p>(v) չձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով Վաճառողի կողմից տրված երաշխիքներն ու հավաստիքները կարող են այս կամ այն առումով սխալ լինել Գործարքի Ավարտման Օրվա դրությամբ կամ դրանից առաջ ցանկացած ժամանակ, չթերանալ կատարել բոլոր այն գործողությունները, որոնք եթե կատարված չլինեն, կարող են հանգեցնել Գործարքի Ավարտման Օրվա դրությամբ կամ նախքան այդ օրը նշված երաշխիքների ու հավաստիքների այս կամ այն առումով սխալ լինելուն, կամ</p>
<p>(vi) agree, resolve or commit to do any of the foregoing.</p>	<p>(vi) չհամաձայնել, չվճռել կամ չպարտավորվել կատարել նշված գործողություններից որևէ մեկը:</p>
<p>Section 6.02. <i>Release of Lien.</i> Prior to Closing, Seller and the Republic of Armenia shall obtain the release of any and all Liens over the Purchased Assets (other than the Easements), under no other condition than the occurrence of Closing.</p>	<p>Կետ 6.02. <i>Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքների Դադարեցումը:</i> Վաճառողը և ՀՀ կապահովեն, որպեսզի նախքան Գործարքի Ավարտման Օրը դադարեցվեն Վաճառվող Գույքի նկատմամբ սահմանված Գույքը Ծանրաբեռնող Այլ Անձանց Իրավունքները (բացառությամբ Սերվիտուտների): Նշված իրավունքների դադարեցման համար չպետք է սահմանված լինի որևէ այլ պայման, քան Գործարքի Ավարտը:</p>

<p>Section 6.03. <i>Access to Information; Confidentiality.</i> (a) From the date hereof until the Closing Date, Seller and the Republic of Armenia will (i) give Buyer, ContourGlobal and the Lenders, their counsel, financial advisors, auditors and other authorized representatives full access to the offices, properties, books and records of Seller relating to the Purchased Assets, (ii) furnish to Buyer, ContourGlobal and the Lenders, their counsel, financial advisors, auditors and other authorized representatives such information relating to the Purchased Assets as such Persons may reasonably request and (iii) instruct the employees, counsel and financial advisors of Seller to cooperate to the effect of the foregoing, provided, in each case that (aa) such items are within the control of the Seller and the Republic of Armenia; (bb) disclosure of such items would not be contrary to Applicable Law and/or result in a breach of an obligation owed to a third party, including an obligation of confidentiality.</p>	<p>Կետ 6.03. <i>Տեղեկատվության հասանելիություն, գաղտնիություն:</i> (ա) Սույն Պայմանագրի կնքման օրվանից մինչև Գործարքի Ավարտման Օրը Վաճառողը և ՀՀ (i) Գնորդին, ՔոնթուրԳլոբալին, Փոխատուներին ու նրանց խորհրդատուներին, ֆինանսական խորհրդականներին, ատոլիտորներին և այլ լիազոր ներկայացուցիչներին իրավունք կվերապահեն մուտք գործել Վաճառողի գրասենյակներ, զննել գույքը, ուսումնասիրել Վաճառվող Գույքի վերաբերյալ Վաճառողի գրքերը, գրանցամատյանները և գրառումները, (ii) Գնորդին, ՔոնթուրԳլոբալին, Փոխատուներին, նրանց խորհրդատուներին, ֆինանսական խորհրդականներին, ատոլիտորներին և այլ լիազոր ներկայացուցիչներին կտրամադրեն Վաճառվող Գույքի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, որոնք ողջամտորեն կարող են պահանջվել նրանց կողմից և (iii) կիրահանվեն Վաճառողի աշխատակիցներին, խորհրդատուներին և ֆինանսական խորհրդականներին այդ նպատակով համագործակցել Գնորդի, ՔոնթուրԳլոբալի, Փոխատուների, նրանց խորհրդատուների, ֆինանսական խորհրդականների, ատոլիտորների և այլ լիազոր ներկայացուցիչների հետ, պայմանով, որ յուրաքանչյուր դեպքում (աա) տեղեկությունները կլինեն Վաճառողի և ՀՀ հսկողության տակ, (բբ) տեղեկությունների բացահայտումը չի հակասի Կիրառվող օրենսդրությանը և/կամ հանգեցնի երրորդ անձանց հանդեպ ունեցած պարտականությունների խախտման, ներառյալ գաղտնիությունը պահելու պարտականությունը:</p>
<p>(b) After the Closing, the Republic of Armenia, Seller and their Affiliates will hold in confidence, unless compelled to disclose by Applicable Law, all confidential documents and information concerning the Business or the Purchased Assets (except to the extent that such information is in the public domain through no fault of the Republic of Armenia, Seller and their Affiliates).</p>	<p>(բ) Գործարքի Ավարտից հետո ՀՀ, Վաճառողը և նրանց հետ Փոխկապակցված Անձիք գաղտնի կպահեն Գործունեության կամ Վաճառվող Գույքի վերաբերյալ բոլոր գաղտնի տեղեկությունները և փաստաթղթերը, եթե դրանց բացահայտումը չի պահանջվում Կիրառելի Օրենսդրության համաձայն (և եթե այդ տեղեկությունները երրորդ անձանց հասանելի չեն դարձել առանց ՀՀ, Վաճառողի և նրանց հետ Փոխկապակցված</p>

	Անձանց մեղքի առկայության):
Section 6.04. <i>Notices of Certain Events.</i> (a) Before Closing Seller or the Republic of Armenia shall as soon as reasonably practicable notify Buyer and ContourGlobal of:	Կետ 6.04. <i>Որոշակի դեպքերում ծանուցում տրամադրվում է:</i> (ա) Մինչև Գործարքի ավարտը Վաճառողը կամ ՀՀ Գնորդին և ՔոնթուրԳլոբալին հնարավորինս շուտ տեղյակ կպահեն:
(i) any notice or other communication it receives from any Governmental Authority in connection with the transactions contemplated by this Agreement;	(i) սույն Պայմանագրով նախատեսված գործարքների առնչությամբ Իշխանական Մարմինների կողմից ծանուցում կամ այլ գրություններ ստանալու մասին,
(ii) any actions, suits, claims, investigations or proceedings commenced or, to its knowledge threatened against, relating to or involving any Purchased Asset;	(ii) Վաճառվող Գույքի վերաբերյալ հայցեր հարուցվելու, պահանջներ ներկայացվելու, դատական կամ այլ վարույթներ, հետաքննություններ սկսվելու կամ Վաճառողի ունեցած տեղեկությունների համաձայն դրանց սպասնալիք լինելու մասին,
(iii) the damage or destruction by fire or other casualty of any Purchased Asset or material part thereof;	(iii) Վաճառվող Գույքը կամ դրա էական մասը՝ հրդեհի կամ այլ չնախատեսված հանգամանքների հետևանքով ոչնչանալու կամ վնասվելու մասին,
(iv) any inaccuracy of any representation or warranty contained in this Agreement at any time during the term hereof that could reasonably be expected to cause any condition set forth in Section 11.01 not to be satisfied; and	(iv) եթե սույն Պայմանագրի գործողության ընթացքում սույն Պայմանագրով տրված երաշխիքներից, հավաստիքներից որևէ մեկը սխալ լինելի, որի հետևանքով սույն Պայմանագրի 11.01 Կետով նախատեսված նախապայմաններից որևէ մեկը կարող է բավարարված չլինել, և
(v) any failure of Seller to comply with or satisfy any covenant, condition or agreement to be complied with or satisfied by it hereunder;	(v) սույն Պայմանագրով նախատեսված այն համաձայնությունները, պարտավորությունները կամ պայմանները բավարարված և կատարված չլինելու մասին, որոնք սույն Պայմանագրի համաձայն պետք է կատարվեն կամ բավարարված լինեն Վաճառողի կողմից,
(b) Within 5 Business Day of delivery of any notice mentioned in Section 6.04(a) above, the Buyer or ContourGlobal may notify the Seller or the Republic of Armenia of their intention to terminate this Agreement, failing which the Buyer and ContourGlobal will be deemed to have waived any remedies available thereunder.	(բ) 6.04.(ա) Կետի համաձայն ներկայացված ծանուցում ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում, Գնորդը կամ ՔոնթուրԳլոբալը կարող են Վաճառողին կամ ՀՀ հայտնել սույն Պայմանագիրը լուծելու իրենց մտադրության մասին, հակառակ դեպքում կհամարվի, որ Գնորդը և ՔոնթուրԳլոբալը հրաժարվում են Պայմանագրի համաձայն ունեցած իրավունքների

<p>Section 6.05. <i>Financing.</i> The Seller and the Republic of Armenia shall provide cooperation in connection with the arrangement of the financing from the Lenders and any refinancing that may be considered necessary in relation to the Debt Financing, as may be reasonably requested by Buyer, including by (i) furnishing Buyer and its Lenders with financial and other pertinent information regarding the Business, the Purchased Assets and the regulatory and business environment in Armenia, obtaining comfort letters, legal opinions and surveys and (ii) negotiating, executing and/or acknowledging any Direct Agreement, commitment letters, pledge and security documents, or other requested certificates or documents; provided this will not result in any financial liability for the Republic of Armenia and provided further that, in connection with the negotiation of the Direct Agreement the Seller and the Republic of Armenia shall be entitled to reject any proposed term or condition which they would deem unacceptable.</p>	<p>պաշտպանության միջոցներից.</p> <p>Կետ 6.05. <i>Ֆինանսավորում:</i> Գնորդի կողմից ողջամիտ պահանջ ներկայացվելու դեպքում Վաճառողը և ՀՀ պետք է համագործակցեն Գնորդի հետ Փոխատուներից ֆինանսավորում ստանալու, ինչպես նաև հարկ եղած դեպքում Փոխատու Միջոցների վերաֆինանսավորում իրականացնելու նպատակով, ներառյալ (i) Գնորդին և վերջինիս Փոխատուներին Գործունեության, Վաճառվող Գույքի վերաբերյալ ֆինանսական և այլ պատեհ տվյալներ, Հայաստանում օրենսդրական կարգավորման և բիզնես միջավայրի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու, աջակցության նամակներ, իրավաբանական եզրակացություններ, և ուսումնասիրության հաշվետվություններ տրամադրելու, ինչպես նաև (ii) Նախագծին Մասնակցող Տարբեր Անձանց Միջև Ուղղակի Պայմանագրային Հարաբերություններ Հաստատելու Վերաբերյալ Պայմանագրի, այլ պարտավորագրերի, գրավի և պարտավորությունների կատարման համար ապահովում տրամադրելու վերաբերյալ այլ փաստաթղթերի կամ պահանջվող այլ վկայականների, տեղեկանքների կամ փաստաթղթերի դրույթները և պայմանները քննարկելու, դրանց վերաբերյալ բանակցություններ վարելու, դրանք ստորագրելու և/կամ հաստատելու միջոցով</p> <p>պայմանով, սակայն, որ այն չի առաջացնի ՀՀ որևէ ֆինանսական պարտավորություն և պայմանով, որ Նախագծին Մասնակցող Տարբեր Անձանց Միջև Ուղղակի Պայմանագրային Հարաբերություններ Հաստատելու Վերաբերյալ Պայմանագրի դրույթների քննարկման և բանակցման ժամանակ Վաճառողն ու ՀՀ-ն իրավունք կունենան մերժել ցանկացած առաջարկվող դրույթ կամ պայման, որը նրանց կարծիքով կարող է անընդունելի լինել:</p>
--	---

<p>Section 6.06. <i>Regulatory Approvals.</i> The Republic of Armenia shall, and shall use its best efforts to the extent permitted by Applicable Law to cause any Armenian Authority, to grant all Regulatory Approvals including, for the avoidance of doubt, those set out on Schedule 4.03.</p>	<p>Կետ 6.06. <i>Կարգավորող Մարմինների Կողմից Պահանջվող Թույլտվություններ:</i> Կիրառելի Օրենսդրությանը թույլատրված սահմաններում ՀՀ առավելագույն ջանքեր կգործադրի, որպեսզի ՀՀ Իշխանական Մարմինները տրամադրեն Կարգավորող Մարմինների Կողմից Պահանջվող բոլոր Թույլտվությունները ներառյալ նրանք, որոնք թվարկված են Հավելված 4.03 -- ում:</p>
<p>Section 6.07. <i>Tariffs – Tariff Schedule.</i> (a) The parties acknowledge that the Tariff Schedule sets forth (i) the elements of the Total Payment to be received in any given year by the Buyer in monthly installments for the whole duration of the Power Purchase Agreement and (ii) the events as a result of which the elements of the Total Payment shall be adjusted.</p>	<p>Կետ 6. 07. <i>Սակագներ. Սակագնային Պլան:</i> (ա) Կողմերն ընդունում և համաձայնում են, որ Սակագնային Պլանով սահմանում են (i) Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակաշրջանում տարվա ընթացքում ամսական կտրվածքով Գնորդին վճարման ենթակա Համախառն Վճարի չափը (որը ներառում է հզորության վճարը և էլեկտրական էներգիայի վճարը) և (ii) հաշվարկներ կատարելու համար հիմք ընդունվող բոլոր էական հանգամանքները, որոնց արդյունքում Համախառն վճարի տարրերը վերանայվում են:</p>
<p>(b) To the extent permitted by Applicable Law, the Republic of Armenia shall use its best efforts to cause the Regulator, between the date hereof and the Closing Date and at all times thereafter, to set (annually or otherwise) the base capacity price and base energy price in a manner consistent with (i) the Tariff Schedule (including for the avoidance of doubt any adjustment of the Total Payment in case of a Change of Armenian Law or change in the official exchange rate for converting AMD into USD) and (ii) the tariff setting methodology approved by the Regulator by Resolution 125 on September 16, 2005 to adjust the capacity price and energy price so as to recover any capital expenditure to be incurred by the Buyer as required under this Agreement and the Financing Documents.</p>	<p>(բ) Կիրառելի Օրենսդրությանը թույլատրված սահմաններում ՀՀ առավելագույն ջանքեր կգործադրի, որպեսզի Կարգավորող Մարմինը սույն Պայմանագրի ստորագրման օրվանից հետո մինչև Գործարքի Ավարտման Օրը և դրանից հետո հզորության վճարը և հիմնական էլեկտրական էներգիայի վճարը (տարեկան կամ այլ կտրվածքով) մշտապես սահմանի այնպես, որպեսզի դրանք (i) համահունչ լինեն Սակագնային Պլանի հետ (ներառյալ Համախառն վճարի ցանկացած վերանայում պայմանավորված Հայկական օրենսդրության փոփոխությանը կամ ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի փոխարկման փոխարժեքի պաշտոնական փոփոխությանը) (ii) համահունչ լինեն 2005թ.-ի սեպտեմբերի 16-ին Կարգավորող Մարմնի կողմից ընդունված թիվ 125 որոշմամբ հաստատված սակագները հաշվարկելու մեթոդաբանության հետ այնպես, որ հնարավոր լինի կատարել հզորության վճարի և էլեկտրական էներգիայի վճարի վերահաշվարկ այն հաշվով, որ Գնորդը կարողանա չեզոքացնել սույն Պայմանագրի և Ֆինանսական</p>

	Փաստաթղթերի համաձայն կատարված կապիտալ ծախսերը:
<p>(c) The Republic of Armenia shall exert any right or influence it may have under Applicable Law to cause AEN (or any successor) and all relevant Armenian Authorities, and in particular any settlement center, to comply with each of their payment and other related obligations (including with respect to the Tariff Schedule – as amended from time to time under Applicable Law – or any agreement entered into in connection with this Agreement).</p>	<p>(գ) ՀՀ կգործադրի Կիրառելի Օրենսդրությանը ունեցած իր բոլոր լծակները, որպեսզի ներգործի ՀԷՑ (իրավահաջորդ ընկերությանը), ՀՀ համապատասխան Իշխանական Մարմինների և մասնավորապես վճարահաշվարկային կազմակերպությունների վրա, որպեսզի վերջիններս կատարեն իրենց վճարային և վճարումները կատարելու հետ փոխկապակցված այլ պարտավորությունները (այդ թվում նաև Սակագնային Պլանի (ժամանակ առ ժամանակ Կիրառելի Օրենսդրության կամ սույն Պայմանագրի կապակցությամբ կնքված մեկ այլ պայմանագրի համաձայն դրանում կատարված փոփոխություններով հանդերձ) հետ կապված բոլոր պարտավորությունները):</p>
<p>Section 6.08. <i>Seller Maintained in Good Standing.</i> The Seller and the Republic of Armenia each agree that, for a period of three years after the Closing Date, (i) the Seller shall remain a company duly incorporated as separate legal entity, validly existing and in good standing under the laws of the Republic of Armenia and shall not proceed to any winding up, dissolution, liquidation, or other reorganization without the written prior consent of the Buyer, (ii) in particular, the Republic of Armenia shall cause the Seller not to become insolvent or the subject matter of any action, claim proceedings or judgment with a view to prevent or settle business difficulties.</p>	<p>Կետ 6.08. <i>Վաճառողի կորպորատիվ գոյության պահպանումը:</i> Վաճառողը և ՀՀ առանձին-առանձին համաձայնում և ընդունում են, որ Գործարքի Ավարտման օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում(i) Վաճառողը կշարունակի գոյություն ունենալ որպես ՀՀ օրենքների համաձայն պատշաճ կերպով գրանցված և գործող առանձին իրավաբանական անձ հանդիսացող ընկերությունն առանց Գնորդի նախնական գրավոր համաձայնության չի ձեռնարկի քայլեր լուծարվելու, կամ մեկ այլ ճանապարհով վերակազմակերպվելու համար (կամ թույլ չի տա, որ նշվածը տեղի ունենա կամ հավանական դատնա այլ անձանց կողմից իր դեմ դատարան դիմումներ ներկայացվելու կամ վարույթներ սկսվելու կապակցությամբ), (ii) մասնավորապես, ՀՀ կապահովի, որպեսզի Վաճառողը լինի վճարունակ և չներգրավվի այնպիսի վարույթներում, նրա դեմ չներկայացվեն այնպիսի դիմումներ, հայցեր, չկայացվեն այնպիսի որոշումներ, որոնք նպատակ են հետապնդում կանխել կամ լուծել Վաճառողի տնտեսական դժվարությունները:</p>
<p>Section 6.09. <i>Electro-Mechanical Refurbishment.</i> The Republic of Armenia shall use its reasonable efforts as may be</p>	<p>Կետ 6.09. <i>Էլեկտրամեխանիկական Վերագինում:</i> ՀՀ կգործադրի Կիրառելի օրենսդրության համաձայն թույլատրելի բոլոր</p>

<p>permitted by Applicable Law to grant all applicable authorizations required under Applicable Law for, Buyer to carry out the Electro-Mechanical Refurbishment in an efficient manner in compliance with Accepted Operating Practices, this Agreement and the Financing Documents provided that Buyer qualifies for such authorizations under Applicable Law.</p>	<p>ողջամիտ ջանքերը, որպեսզի համագործակցի և տրամադրի Կիրառելի օրենսդրության համաձայն պահանջվող բոլոր թույլտվությունները, որոնք կարող են անհրաժեշտ լինել Էլեկտրամեխանիկական Վերազինումը Շահագործման Ընդունված Կանոնների, սույն Պայմանագրի և Ֆինանսական Փաստաթղթերի համաձայն արդյունավետ կերպով իրականացնելու համար, պամանով, որ Գնորդն ունի Կիրառելի օրենսդրության համաձայն նման թույլտվություն ստանալու որակավորում:</p>
<p>Section 6.10. <i>Assurances Regarding Power Produced by Facilities.</i> As long as the Buyer or any of its Affiliates owns or controls the Facilities, the Republic of Armenia will ensure that (i) all of the power generated by the Facilities is consumed entirely within Armenia and is not exported to any other country, (ii) none of the Buyer, any of its Affiliates or the Facilities will have any involvement in any electricity or gas sales or exports to, or swaps with third countries, including without limitation through the designation of the Buyer, any of its Affiliates or the Facilities as the source of electricity to be exported to any third country under any swap or other arrangement or through any attribution to the Buyer, any of its Affiliates or the Facilities of any electricity exported outside of Armenia, whether through a <i>pro rata</i> allocation among Armenian power producers or otherwise, and (iii) none of the Buyer, any of its Affiliates or the Facilities will be required to sell, export or otherwise supply or facilitate the sale, export, or supply of, any goods or services to any third country or individual or entity located in or controlled by the government of a third country.</p>	<p>Կետ 6.10. <i>Երաշխիքներ Սարքավորումների և Արտադրական Հզորությունների միջոցով արտադրված էլեկտրաէներգիայի վերաբերյալ:</i> Այնքան ժամանակ, քանի դեռ Գնորդը կամ վերջինիս հետ Փոխկապակցված ցանկացած Անձ շարունակում է հանդիսանալ Սարքավորումների և Արտադրական Հզորությունների սեփականատեր կամ վերահսկել դրանք, ՀՀ-ն կապահովի, որպեսզի. (i) Սարքավորումների և Արտադրական Հզորությունների միջոցով արտադրված ամբողջ էներգիան սպառվի բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում և չարտահանվի այլ երկրներ, (ii) Գնորդը կամ վերջինիս հետ Փոխկապակցված այս կամ այն Անձի կամ Սարքավորումները և Արտադրական Հզորությունները ներգրավված չլինեն երրորդ երկրների հետ էլեկտրաէներգիայի կամ գազի վաճառքի, արտահանման կամ փոխանակման գործարքներում, այդ թվում նաև, սակայն ոչ միայն, Գնորդին կամ վերջինիս հետ Փոխկապակցված այս կամ այն Անձին կամ Սարքավորումները և Արտադրական Հզորությունները որպես այդ փոխանակման ծրագրերի շրջանակներում կամ այլ պայմանավորվածությունների համաձայն դեպի երրորդ երկրներ արտահանվող էլեկտրաէներգիայի տրամադրման աղբյուր սահմանելու կամ ՀՀ սահմաններից դուրս արտահանված կամ արտահանվող էլեկտրաէներգիայի այս կամ այն մասը Գնորդին</p>

	<p>կամ վերջինիս հետ փոխկապակցված այն կամ այն Անձին կամ Սարքավորումներին և Արտադրական Հզորություններին վերագրելու միջոցով, անկախ այն հանգամանքից, թե այդ վերագրումը կատարվում է արտահանվող էլեկտրաէներգիայի բաժինը բոլոր արտադրողների միջև հավասարաչափ բաշխելու միջոցով, թե մեկ այլ կերպ, (iii) պահանջ չառաջադրվի, որպեսզի Գնորդը կամ վերջինիս հետ Փոխկապակցված այս կամ այն Անձը կամ Սարքավորումները և Արտադրական Հզորություններն ապրանքներ կամ ծառայություններ վաճառեն, արտահանեն կամ այլ կերպ մատակարարեն երրորդ երկրներին կամ այնտեղ գտնվող կամ երրորդ երկրների կառավարություններից կողմից վերահսկվող անձանց կամ մարմիններին կամ օժանդակել կամ նպաստել այդ վաճառքների, արտահանումների կամ մատակարարումների իրականացմանը,</p>
<p>Section 6.11. <i>Easements.</i> (a) The Seller and the Republic of Armenia have provided the Buyer with a comprehensive list of existing easements (servitudes) on the Real Property whether registered or unregistered, as set forth on Schedule 6.11. On the date hereof, the Parties assume that the impact of the Easements on the operations of the Facilities (including the Electro-Mechanical Refurbishment) shall remain after the Closing Date materially the same as before Closing, failing which the Buyer shall be entitled to terminate this Agreement (at any time up to, and including, the Long Stop Date), notwithstanding anything to the contrary in this Agreement. In such a case, the Good Faith Deposit shall be returned forthwith to ContourGlobal and/or the Buyer. Furthermore the Buyer and CountourGlobal confirm and acknowledge that no remedial action pertaining to existing Easements identified in Schedule 6.11 shall give rise to any claim against the Seller or the Republic of Armenia after the Closing Date for breach of warranty, without prejudice to the</p>	<p>Կետ 6.11. Սերվիտուտներ: (ա) Վաճառողը և ՀՀ Գնորդին տրամադրել են Անշարժ Գույքի առնչությամբ գոյություն ունեցող սերվիտուտի իրավունքների ամբողջական ցանկը, ՝ գրանցված և չգրանցված՝ ինչպես ներկայացված է Հավելված 6.11-ում: Սույն Պայմանագիրը ստորագրելու ամսաթվի դրությամբ Կողմերը հիմնվում են այն կանխադրույթին, որ Սերվիտուտների ազդեցությունը Սարքավորումների (այդ թվում Էլեկտրամեխանիկական վերագինման) շահագործման վրա Գործարքի Ավարտման օրվանից հետո պետք է մնա նույնը, ինչ մինչև Գործարքի Ավարտը ինչը իրականությանը չհամապատասխանելու դեպքում Գնորդը ցանկացած ժամանակ մինչև վերջնաժամկետը և ներառյալ վերջինս՝ իրավունք կունենա լուծելու սույն Պայմանագիրը, առանց հաշվի առնելու սույն Պայմանագրի որևէ դրույթ, որը այլ բան է նախատեսում: Նման դեպքում Նախավճարը անհապաղ կվերադարձվի ՔոնթուրԳլոբալին և(կամ) Գնորդին: Ընդ որում, Գնորդը և ՔոնթուրԳլոբալը հաստատում և ընդունում են,</p>

<p>provisions of this Section 6.11.</p>	<p>որ թերությունները շտկելու գործողությունների ծրագիրը Հավելված 6.11-ում բերված առկա Սերվիտուտների նկատմամբ չի կարող Գործարքի Ավարտման օրվանից հետո Վաճառողի կամ ՀՀ կողմից երաշխիքները խախտելու համար՝ վերջիններիս պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ: Վերոնշյալը չի հակադրվում և որևէ անդրադարձ չի կարող ունենալ սույն Պայմանագրի 6.11 Կետի նկատմամբ:</p>
<p>(b) The Buyer shall negotiate in good faith with the party currently occupying a parcel of land located at Tunnel, 2 Brnakot street, certificate No. 25042014-09-0023 in order to reclaim full usage and enjoyment of such parcel. However, in the event that such negotiations are not conclusive, the Seller and the Republic of Armenia shall assist, and shall use their best efforts to cause any Armenian Authority to assist, the Buyer in enforcing its legal rights in connection with such parcel.</p>	<p>(բ) Գնորդը պետք է բարեխղճորեն բանակցի [•] տարածքում տեղակայված հողամասը ներկայումս զբաղեցնողի հետ՝ Հորաթունել, Բոնակոթ փողոց 2, 30/1, վկայական հ. 25042014-09-0023, հողամասի լիակատար օգտագործման իրավունք ստանալու համար: Այն դեպքում, երբ բանակցությունները արդյունավետ չեն, Վաճառողը և ՀՀ, պետք է աջակցեն և ջանքեր գործադրեն, որպեսզի ՀՀ Իշխանական Մարմինները աջակցեն Գնորդին՝ նշված հողամասի նկատմամբ իր օրինական իրավունքները ստանալու համար:</p>
<p>(c) The Seller and the Republic of Armenia shall assist, and shall use their best efforts to cause any relevant Armenian Authority to assist, the Buyer in carrying out the registration of any unregistered Easement, as may be requested by the Buyer.</p>	<p>(գ) Գնորդի պահանջով Վաճառողը և ՀՀ պետք է աջակցեն և ջանքեր գործադրեն, որպեսզի ՀՀ Իշխանական Մարմինները աջակցեն Գնորդին չգրանցված Սերվիտուտները գրանցելու հարցում:</p>
<p>Section 6.12. <i>Specific Undertaking of the Republic of Armenia.</i> The Republic of Armenia, in its capacity as sole shareholder of the Seller, shall ensure and guarantee the prompt performance and observance by the Seller of its obligations and liabilities under, pursuant to, arising out of, or in connection with this Agreement, and shall hold the Buyer and ContourGlobal harmless against any breach by the Seller of the terms of this Agreement.</p>	<p>Կետ 6.12. ՀՀ հատուկ պարտավորությունը: ՀՀ-ն, որպես Վաճառողի միակ բաժնետեր, կապահովի և կերաշխավորի, Վաճառողի՝ սույն Պայմանագրով նախատեսված կամ դրանից բխող իր պարտավորությունների և պարտականությունների պատշաճ կատարումը և Գնորդին ու ԲոնթորԳլոբալին զերծ կպահի Վաճառողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու հետևանքով ի հայտ եկած անբարենպաստ հետևանքներից:</p>

<p style="text-align: center;">ARTICLE 7 COVENANTS OF BUYER AND CONTOURGLOBAL</p>	<p style="text-align: center;">ՀՈՒՎԱԾ 7 ԳՆՈՐԴԻ ԵՎ ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p>
<p>Section 7.01. <i>Financing.</i> (a) Buyer and ContourGlobal shall use their commercially reasonable efforts to obtain financing, on or prior to the Closing Date. To this effect, they shall in particular use their commercially reasonable efforts to (x) negotiate Financing Documents with Lenders, (y) execute and deliver all documents and instruments related to the Financing Documents, and (z) satisfy on a timely basis all conditions in the Financing Documents and comply with their obligations thereunder (in each case, that are in their control). They shall keep Seller informed of material developments in respect of such process. Notwithstanding anything to the contrary, the commercially reasonable efforts with respect to this Section 7.01 shall not include any obligation to institute any legal action against a Lender.</p>	<p>Կետ 7.01. <i>Ֆինանսավորում:</i> (ա) Գնորդը և ՔոնթուրԳլոբալը կգործադրեն գործարար շրջանառության մեջ ողջամիտ համարվող բոլոր ջանքերը, որպեսզի Գործարքի Ավարտման Օրը կամ մինչ այդ ստանան ֆինանսավորում: Այդ նպատակով նրանք կգործադրեն գործարար շրջանառության մեջ ողջամիտ համարվող բոլոր ջանքերը, որպեսզի (x) բանակցեն Փոխատուների հետ և նրանց հետ քննարկեն Ֆինանսավորման Փաստաթղթերի դրույթները, (y) ստորագրեն և տրամադրեն Ֆինանսավորման Փաստաթղթերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և (z) ապահովեն, որպեսզի Ֆինանսավորման Փաստաթղթերով սահմանված պայմանները ժամանակին բավարարված լինեն և կատարեն դրանցով սահմանված իրենց պարտավորությունները (բոլոր դեպքերում, եթե ինչ-որ բան գտնվում է նրանց վերահսկողության ներքո): Նրանք Վաճառողին տեղյակ կպահեն այդ գործընթացների կապակցությամբ բոլոր էական զարգացումների վերաբերյալ: Եթե նույնիսկ սույն Պայմանագրով այլ բան նախատեսված լինի, ապա միևնույն է սույն 7.01 Կետի իմաստով գործարար շրջանառության մեջ ողջամիտ համարվող ջանքեր գործադրելը չպետք է ներառի և չի ներառում Փոխատուների դեմ դատական վեճ կամ արբիտրաժային վարույթ սկսելու պարտավորությունը:</p>
<p>(b) Without prejudice to the waiver provided for under Section 2.07 with respect to statutory Liens arising under Armenian law, Buyer and ContourGlobal agree to grant on the Closing Date to the Seller, subject to the agreement of the relevant Lenders, a first priority pledge over the Facilities, shared pari passu with such Lenders, to secure the payment obligations of the Second</p>	<p>(բ) Գնորդը և ՔոնթուրԳլոբալը համաձայնում են Երկրորդ Մասնաբաժնի վճարման պարտավորությունն ապահովելու նպատակով Գործարքի Ավարտման Օրը Վաճառողի օգտին համապատասխան Փոխատուների համաձայնությամբ գրավադրել Սարքավորումները՝ նշված Փոխատուների հետ հավասար մասնաբաժիններով: Նշված գրավի</p>

<p>Installment.</p>	<p>իրավունքը գերակայում է այլ անձանց օգտին սահմանված գրավի իրավունքների և պարտավորություններն ապահովելու նպատակով տրված ապահովման այլ միջոցների նկատմամբ: Վաճառողի օգտին նշված իրավունքի սահմանումը որևիցե կերպ կապված չէ և չի կարող որևիցե անդրադարձ ունենալ սույն Պայմանագրի 2.07 Կետով սահմանված իրավունքից հրաժարվելու վրա:</p>
<p>Section 7.02. <i>Civil Work Upgrade.</i> Buyer shall, within 18 months following the Closing Date conduct a civil works survey and form a remedial action plan in conjunction with the Ministry of Energy and Natural Resources of the Republic of Armenia and the Regulator, to be carried out by Buyer in order to bring the plant into compliance with Accepted Operating Practices.</p>	<p>Կետ 7.02. <i>Ենթակառուցվածքային վերազինում:</i> Գնորդը պարտավոր է Գործարքի Ավարտման Օրվանից հետո 18 ամսվա ընթացքում իրականացնել ենթակառուցվածքի ուսումնասիրություն և ՀՀ Էներգետիկայի և Բնական Պաշարների Նախարարության և Կարգավորող Մարմնի հետ համատեղ կազմել թերությունները շտկելու գործողությունների ծրագիր Գնորդի կողմից արտադրամասերը Շահագործման Ընդունված Կանոնների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:</p>
<p>Section 7.03. <i>Electro-Mechanical Refurbishment.</i></p>	<p>Կետ 7.03. <i>Էլեկտրամեխանիկական Վերազինում:</i></p>
<p>(a) Buyer hereby undertakes to finance and supervise the Electro-Mechanical Refurbishment of the Facilities and shall use its commercially reasonable efforts to carry out such Electro-Mechanical Refurbishment in an efficient manner in compliance with Accepted Operating Practices.</p>	<p>(ա) Գնորդը պարտավորվում է ֆինանսավորել Սարքավորումների Էլեկտրամեխանիկական Վերազինման աշխատանքները և վերահսկողություն իրականացնել դրանց նկատմամբ: Գնորդը պարտավորվում է գործադրել գործարար շրջանառության մեջ ողջամիտ համարվող բոլոր ջանքերը Էլեկտրամեխանիկական Վերազինման աշխատանքները Շահագործման Ընդունված Կանոնների համաձայն արդյունավետ կերպով իրականացնելու համար:</p>
<p>(b) Buyer shall select suppliers of materials and contractors for the Electro-Mechanical Refurbishment based on competitive bidding processes, subject to Section 7.08, in order to complete the Electro-Mechanical Refurbishment by no later than on the seventy-second month (six year) anniversary of the Closing Date (the “EM Refurbishment Scheduled</p>	<p>(բ) Գնորդը պարտավոր է Էլեկտրամեխանիկական Վերազինման աշխատանքներն իրականացնելու համար պահանջվող նյութերը մատակարարող Անձանց և այդ աշխատանքներն իրականացնելու համար պահանջվող կապալառուներին ընտրել տեղեկ հրավիրելու միջոցով՝ 7.08 Կետի հաշվառմամբ այնպես, որպեսզի հնարավոր լինի</p>

<p>Completion Date”), and the detailed scope of and conditions for carrying out the Electro-Mechanical Refurbishment shall be defined in one or more properly documented agreements to be entered into by the Buyer with the selected contractors.</p>	<p>Էլեկտրամեխանիկական Վերագինման աշխատանքներն ավարտել ոչ ուշ, քան Գործարքի Ավարտման Օրվան հաջորդող 72-րդ ամսի նույն օրը (վեցերորդ տարեդարձի օրը) (այսուհետ՝ «ԷՄ Վերագինման Աշխատանքներն Ավարտելու Համար Նախատեսված Օր»), իսկ Էլեկտրամեխանիկական Վերագինման Աշխատանքների ամբողջ ծավալը և բոլոր պայմանները կսահմանվեն ընտրված կապալառուների հետ Գնորդի կողմից պատշաճ կերպով կնքված մեկ կամ մի քանի գրավոր պայմանագրերով:</p>
<p>(c) Buyer shall ensure that representatives of Ministry of Energy and Natural Resources of the Republic of Armenia are afforded reasonable access to the Site and to any plans or drawings relating to the Electro-Mechanical Refurbishment at any time upon giving Buyer reasonable notice. Buyer shall ensure that the Ministry of Energy and Natural Resources of the Republic of Armenia/Regulator are afforded monthly reports describing the status of the works and shall provide them with a copy of the progress reports prepared from time to time for the Lenders.</p>	<p>(գ) Գնորդը կապահովի, որպեսզի ՀՀ Էներգետիկայի և Բնական Պաշարների Նախարարության ներկայացուցիչներին ողջամիտ հնարավորություն տրվի ցանկացած ժամանակ Գնորդին ողջամիտ ժամկետներում ծանուցելուց հետո մուտք գործել Տեղակայման Վայր և ծանոթանալ Էլեկտրամեխանիկական Վերագինման աշխատանքների վերաբերյալ նախագծերի և գծագրերի հետ: Գնորդը կապահովի, որպեսզի ՀՀ Էներգետիկայի և Բնական Պաշարների Նախարարությանը/Կարգավորող Մարմին տրամադրվեն ամսական հաշվետվություններ աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև նրանց կտրամադրի ժամանակ առ ժամանակ Փոխատուների համար պատրաստված աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների օրինակները:</p>
<p>(d) Ministry of Energy and Natural Resources of the Republic of Armenia shall be entitled to witness the commissioning, performance and certification tests of the Electro-Mechanical Refurbishment and to receive a copy of such test results.</p>	<p>(դ) ՀՀ Էներգետիկայի և Բնական Պաշարների Նախարարությունն իրավունք ունի ներկա գտնվել Էլեկտրամեխանիկական Վերագինման աշխատանքների գործարկման, շահագործման և սերտիֆիկացման փորձարկումներին, ինչպես նաև ստանալ այդ փորձարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների օրինակները:</p>
<p>(e) Buyer shall cause the Electro-Mechanical Refurbishment to be achieved substantially in accordance with hereto no later than the EM Refurbishment Scheduled Completion Date.</p>	<p>(ե) Գնորդը կապահովի, որպեսզի Էլեկտրամեխանիկական Վերագինման աշխատանքներն բոլոր էական առումներով իրականացվեն և ավարտվեն ոչ ուշ քան ԷՄ Վերագինման Աշխատանքներն Ավարտելու</p>

	Համար Նախատեսված Օրր:
Section 7.04. <i>Operations of the Facilities.</i>	Կետ 7.04. <i>Սարքավորումների Շահագործումը:</i>
Without prejudice to the provisions of Article 3 above (Repurchase Right), the Buyer shall, at all times after the Closing Date, operate the Facilities in all material respects in compliance with:	Սույն Պայմանագրի 3-րդ Հոդվածի (Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքը) դրույթների հաշվառմամբ Գնորդը պարտավորվում է Գործարքի Ավարտման Օրվանից հետո ցանկացած ժամանակ Սարքավորումները շահագործել էապես՝
(a) Armenian Law (including the lawful requirements of the Regulator or any other Armenian Authority),	(ա) ՀՀ Օրենսդրության (ներառյալ Կարգավորող Մարմնի կամ ՀՀ Իշխանական այլ Մարմինների օրինաչափ պահանջների), և
(b) Accepted Operating Practices, and	(բ) Շահագործման Ընդունված Կանոնների պահանջների համաձայն, և
(c) the Generating License and the Project Agreements,	(գ) Էլեկտրական Էներգիայի (Հզորության) Արտադրության Գործունեության Լիցենզիայի և Նախագծային պայմանագրերի համաձայն,
(d) provided that the Buyer shall have a reasonable period of time, if necessary, following the Closing Date to carry out any changes to the operations of the Facilities or the Facilities in order to cause the Facilities to comply with the foregoing to the extent operations or the Facilities are not currently in compliance with the foregoing standards.	(դ) պայմանով, որ, եթե Սարքավորումները նշված ստանդարտներին չեն համապատասխանում կամ եթե դրանց շահագործումը ներկայումս դրանց համաձայն չի իրականացվում, Գնորդին անհրաժեշտության դեպքում ողջամիտ ժամանակ կտրվի Գործարքի Ավարտման Օրվանից հետո Սարքավորումների կամ Սարքավորումների շահագործման մեջ այնպիսի փոփոխությունների կատարելու կամ մտցնելու նպատակով, որոնք անհրաժեշտ են Սարքավորումները նշված ստանդարտներին համապատասխանեցնելու համար:
Section 7.05. <i>Relief Events.</i> The Buyer shall be relieved of its obligations under Section 7.02 through Section 7.04 to the extent the Facilities, the operations of the Facilities as outlined above in Section 7.04 or the implementation of the Electro-Mechanical Refurbishment of the Facilities as outlined above in Section 7.03 are affected and the Buyer is prevented or delayed from performing such obligations by the following events (a “ Relief Event ”):	Կետ 7.05. <i>Պարբերակային Կարգավորումների կարգավորումից ազատող իրադարձություններ:</i> Գնորդը կազատվի 7.02-7.04 Կետերով նախատեսված պարտավորությունները կատարելուց, այն դեպքում, երբ Սարքավորումները, 7.04 կետով նշված Սարքավորումների շահագործման կամ 7.03 կետով նշված Էլեկտրամեխանիկական Վերազինման աշխատանքների ներդրման աշխատանքները ձախողվել է և այդպիսով խոչընդոտվել կամ հետաձգվել է Գնորդի

	կողմից Պարտավորությունների Կատարումը, հետևյալ հանգամանքները (Պարտավորությունների Կատարումից Ազատող Իրադարձություն)։
(a) an act of God, including lightening, fire, earthquake, flood, storm, tornado or other natural calamity, or epidemic disease or plague;	(ա) ոչ տեխնածին երևույթների, այդ թվում նաև կայծակի, հրդեհի, երկրաշարժի, ջրհեղեղի, փոթորկի, տորնադոյի կամ այլ բնական աղետների կամ էպիդեմիկ հիվանդությունների կամ ժանտախտի տարածման ,
(b) archaeological or paleontological discoveries;	(բ) հնագիտական կամ հնէաբանական հայտնագործությունների,
(c) an Armenian Event not caused by the fault of the Buyer or ContourGlobal;	(գ) ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած Իրադարձության, որը պայմանավորված չէ Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի մեղքով,
(d) a Triggering Event (other than one associated with an Armenian Event) that is not caused by the fault of the Buyer or ContourGlobal;	(դ) ՀՀ Տարածքում Տեղի Ունեցած Իրադարձության հետ կապ չունեցող Ետ Գնելու Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձության հետևանքով, որը պայմանավորված չէ Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի մեղքով:
(e) public disorder or strike;	(ե) հանրային անկարգություններ կամ գործադուլներ,
(f) acts or threats of terrorism, kidnapping or sabotage, acts of war, blockade or embargo; or	(զ) ահաբեկչական ակտեր կամ սպառնալիքներ, առևանգում կամ սաբոտաժ, պատերազմ, շրջափակում և էմբարգոներ, կամ
(g) environmental risk originating from a source in Armenia that is not caused by the fault of the Buyer.	(է) հայկական աղբյուրից ծագող շրջակա միջավայրին սպառնացող վտանգ, որը Գնորդի սխալի արդյունք չէ:
Section 7.06. <i>Specific Undertaking of ContourGlobal.</i> ContourGlobal, as at the date hereof having under its effective control the Buyer, shall ensure and guarantee the prompt performance and observance by the Buyer of its obligations and liabilities under, pursuant to, arising out of, or in connection with this Agreement, and shall hold Seller and Republic of Armenia harmless against any breach by Buyer of the terms of this Agreement. The obligations of ContourGlobal under this Agreement shall remain in force even in the event of a change of shareholding of Buyer. Should Buyer	Կետ 7.06. <i>ՔոնթուրԳլոբալի հատուկ պարտավորությունը:</i> ՔոնթուրԳլոբալը, սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ հանդիսանալով Գնորդի նկատմամբ հսկողություն իրականացնող, կապահովի և կերաշխավորի, որպեսզի Գնորդը կատարի սույն Պայմանագրով նախատեսված կամ դրանից բխող իր պարտավորությունների և պարտականությունների պատշաճ կատարումը և Վաճառողին ու ՀՀ զերծ կպահի Գնորդի կողմից սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու հետևանքով ի հայտ եկած անբարենպաստ

<p>cease to be an Affiliate of ContourGlobal, the termination of ContourGlobal's obligations hereunder shall require the prior written consent of the Republic of Armenia.</p>	<p>հետևանքներից: Սույն Պայմանագրի շրջանակներում ՔոնթուրԳլոբալի կողմից ստանձնած պարտականությունները կշարունակեն ուժի մեջ մնալ նույնիսկ Գնորդ ընկերության բաժնետիրոջ փոփոխության դեպքում: Եթե Գնորդը դադարի հանդիսանալ ՔոնթուրԳլոբալի հետ Փոխկապակցված ԱՆձ, ապա ՔոնթուրԳլոբալի՝ սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների դադարեցման համար կպահանջվի ՀՀ նախնական գրավոր համաձայնությունը:</p>
--	--

<p>Section 7.07. <i>Negative Covenants.</i> (a) No Change of Business. On and after the Closing Date, the Buyer shall not, and ContourGlobal shall not permit the Buyer to, conduct or engage in any business activity other than the Business without the prior written consent of the Regulator.</p>	<p>Կետ 7.07. <i>Որոշակի գործողություններ բացառելու պարտավորություններ</i> <i>(ա) Գործունեության փոփոխության սրգելք.</i> Գործարքի Ավարտման օրվա դրությամբ և դրանից հետո, Գնորդը պարտավորվում է չիրականացնել, իսկ ՔոնթուրԳլոբալը պարտավորվում է Գնորդին չթույլատրել իրականացնել կամ ներգրավվել Գործունեությունից բացի այլ առևտրային գործունեության մեջ՝ առանց Կարգավորող մարմնի նախնական գրավոր համաձայնության:</p>
<p>(b) <i>Dissolution.</i> On and after the Closing Date, ContourGlobal shall not liquidate, wind-up, or dissolve, or institute a voluntary case seeking liquidation of the Buyer under any Applicable Law, including without limitation any bankruptcy law, or permit the Buyer to do any of the foregoing.</p>	<p><i>(բ) Լուծարում.</i> Գործարքի Ավարտման օրվա դրությամբ և դրանից հետո, ՔոնթուրԳլոբալը պարտավորվում է քայլեր չձեռնարկել Գնորդին լուծարելու, այդ թվում՝ Կիրառելի օրենսդրության (ներառյալ, սանց սահմանափակման սնանկության մասին ցանկացած օրենքի) համաձայն կամավոր սնանկության դիմում ներկայացնելու միջոցով, կամ թույլատրի Գնորդին դիմելու վերոնշյալ քայլերի:</p>
<p>(c) <i>Partnerships and Participations.</i> On and after the Closing Date, unless otherwise consented in writing by the Regulator, ContourGlobal shall not cause or permit the Buyer to become a partner in any partnership or any joint venture or create or hold stock or other equity interest in any other Person.</p>	<p><i>(գ) Ընկերակցություններ և Մասնակցություններ.</i> Գործարքի Ավարտման օրվա դրությամբ և դրանից հետո, ՔոնթուրԳլոբալը չպետք է թույլատրի Գնորդին դառնալու որևէ ընկերակցության կամ համատեղ գործունեության մասնակից, ձեռք բերել որևէ Իրավաբանական անձի արժեթղթեր կամ մասնակցություն, բացառությամբ այն դեպքերի, երբ կա Կարգավորող մարմնի գրավոր համաձայնությունը:</p>
<p>(d) <i>Abandonment.</i> On and after the Closing Date, ContourGlobal shall not cause or permit the Buyer to abandon the Business or the Project or fail to continuously conduct the Business or the Project in accordance with the Applicable Law and the Generation License.</p>	<p><i>(դ) Հրաժարում.</i> Գործարքի Ավարտման օրվա դրությամբ և դրանից հետո, ՔոնթուրԳլոբալը չպետք է թույլ տա կամ դրդի Գնորդին հրաժարվելու Գործունեությունն կամ Նախագիծն Կիրառելի Օրենսդրության և Էլեկտրական Էներգիայի (Հզորության) Արտադրության Գործունեության Լիցենզիայի համաձայն իրականացնելուց կամ խախտելու Գործունեությանն ու Նախագծի իրականացման շարունակականությունը:</p>

<p>Section 7.08. <i>Equipment; Services.</i> On and after the Closing Date, ContourGlobal and the Buyer shall ensure that:</p>	<p>Կետ 7.08. <i>Սարքավորումներ, Ծառայություններ:</i> Գործարքի Ավարտման օրվա դրությամբ և դրանից հետո, ՔոնթուրԳլոբալը և Գնորդը պարտավորվում են ապահովել, որ</p>
<p>(a) the Buyer, (i) favors acquisition of equipment manufactured in Armenia, if such equipment is competitive in terms of price, environmental, technical, and operational requirements, and warranties, and so long as the supplier’s creditworthiness is adequate in light of its potential liability under the purchase contract and warranty, (ii) gives preference to persons or entities in Armenia for services and works, if such services are competitive in terms of price, quality and availability; (iii) gives preference to employment to citizens of Armenia for services, staff and work, if competitive;</p>	<p>(ա) Գնորդը (i) նախապատվություն է տալիս Հայաստանում արտադրված սարքավորումներին, եթե այդ սարքավորումները մրցունակ են գնի, շրջակա միջավայրի վրա ազդեցության, տեխնիկական և շահագործման պահանջների և երաշխիքների տեսանկյունից, և քանի դեռ մատակարարի վարկունակությունը համարժեք է առուվաճառքի պայմանագրի և երաշխիքի համաձայն իր ստանձնած պոտենցիալ պարտավորություններին; (ii) նախապատվություն է տալիս ծառայություններ մատուցող և աշխատանքներ կատարող Հայաստանյան ֆիզիկական և իրավաբանական անձանց, եթե վերջիններիս ծառայությունները մրցունակ են գնի, որակի և հասանելիության տեսանկյունից; (iii) նախապատվություն է տալիս ՀՀ քաղաքացիներին, որպես ընկերության աշխատակիցներ աշխատելու, ծառայություններ մատուցելու համար մրցունակ լինելու դեպքում,</p>
<p>(b) all works and services for the Buyer are acquired on a competitive and arm’s length basis, where commercially feasible;</p>	<p>(բ) Գնորդի կողմից բոլոր աշխատանքները ձեռք են բերվում մրցակցային շուկայական պայմաններում, եթե դա կոմերցիոն տեսանկյունից հնարավոր է</p>
<p>(c) all goods and services acquired by the Buyer for the purposes of the Electro-Mechanical Refurbishment comply with import/export restrictions applicable under Armenian Law from time to time (provided that nothing in this paragraph (c) shall be deemed to affect or impair the right of the Buyer and ContourGlobal under Section 3.01 above).</p>	<p>(գ) Գնորդի կողմից Էլեկտրամեխանիկական վերագինման նպատակով ձեռք բերված բոլոր ապրանքները և ծառայությունները պետք է համապատասխանեն ժամանակ առ ժամանակ ՀՀ օրենսդրության համաձայն կիրառվող արտահանման/ ներմուծման սահմանափակումներին (պայմանով, որ սույն (գ) պարբերության պահանջները չեն հակասի կամ ազդի վերոնշյալ 3.01 կետով Գնորդի և ՔոնթուրԳլոբալի իրավունքներին):</p>
<p>Section 7.09. <i>Consideration of the</i></p>	<p>Կետ 7.09. <i>Ինժինեռական դիզայնի</i></p>

<p><i>Engineering Design Report.</i> The Buyer and ContourGlobal have received and reviewed a copy of the engineering design report prepared by Fichtner in November 2012 entitled “Rehabilitation of Vorotan Cascade Hydropower Plants”.</p>	<p><i>հաշվետվության հաշվառումը:</i> Գնորդը և ՔոնթուրԳլոբալը ստացել և ուսումնասիրել են Ֆիչների 2012թ նոյեմբերին կազմված Ինժինեռական դիզայնի հաշվետվություն՝ “Որոտանի Հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնումը” վերտառությամբ:</p>
<p>ARTICLE 8 MUTUAL COVENANTS</p>	<p>ՀՈՒՎԱԾ 8 ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>
<p>Buyer and ContourGlobal jointly and severally, on the one hand, and Seller and the Republic of Armenia jointly and severally, on the other hand, agree that:</p>	<p>Գնորդը և ՔոնթուրԳլոբալը, մի կողմից, և Վաճառողն ու ՀՀ, մյուս կողմից, բոլորը միասին և առանձին-առանձին համաձայնում են հետևյալի վերաբերյալ.</p>
<p>Section 8.01. <i>Best Efforts; Further Assurances.</i> Subject to the terms and conditions of this Agreement, the parties will use their best efforts to take, or cause to be taken, all actions and to do, or cause to be done, all things necessary or desirable under Applicable Laws to consummate the transactions contemplated by this Agreement, including preparing and filing as promptly as practicable with any Governmental Authority or other third party all documentation to effect all necessary filings, notices, registrations, applications and other documents that are necessary, proper or advisable to consummate the transactions contemplated by this Agreement; provided that the parties hereto understand and agree that the best efforts of any party hereto shall not be deemed to include (i) entering into any settlement, undertaking, consent decree, stipulation or agreement with any Governmental Authority in connection with the transactions contemplated hereby or (ii) divesting or otherwise holding separate (including by establishing a trust or otherwise), or taking any other action (or otherwise agreeing to do any of the foregoing) with respect the Purchased Assets or any assets or business of Buyer or any of its Affiliates. Seller and</p>	<p>Կետ 8.01. <i>Առավելագույն ջանքեր, լրացուցիչ հավաստիքներ:</i> Սույն Պայմանագրի այլ դրույթների հաշվառմամբ, Կողմերը կգործադրեն իրենց առավելագույն ջանքերը, որպեսզի կատարեն կամ ապահովեն, որպեսզի կատարված լինեն, բոլոր այն գործողությունները, որոնք Կիրառելի Օրենսդրության համաձայն անհրաժեշտ կամ ցանկալի են սույն Պայմանագրով նախատեսված գործարքները կատարելու համար, այդ թվում որքան հնարավոր է սեղմ ժամկետներում կապտրաստեն և Իշխանական Մարմիններին կամ երրորդ անձանց կներկայացնեն բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են պահանջվող բոլոր գրանցումները կատարելու, պահանջվող բոլոր ծանուցումները և դիմումները տրամադրելու, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերը ձևակերպելու նպատակով, որոնք անհրաժեշտ և նախընտրելի են սույն Պայմանագրով նախատեսված գործարքներն իրականացնելու համար: Կողմերը, սակայն, ընդունում և համաձայնում են, որ առավելագույն ջանքեր գործադրելը չի ենթադրում ոչ մի պարտավորություն (i) սույն Պայմանագրով նախատեսված գործարքների կապակցությամբ Իշխանական Մարմինների հետ արտադատարանական կամ դատարանի</p>

<p>Buyer agree to execute and deliver such other documents, certificates, agreements and other writings and to take such other actions as may be necessary or desirable in order to consummate or implement expeditiously the transactions contemplated by this Agreement and to vest in Buyer good and, in the case of owned Real Property, marketable title to the Purchased Assets.</p>	<p>սանկցիայով և վերահսկողությամբ հաշտության համաձայնագիր կնքելու, այս կամ այն հարցի շուրջ համաձայնության գալու, այս կամ այն պարտավորությունը ստանձնելու կամ այս կամ այն հարցի շուրջ համաձայնություն կայացնելու, կամ (ii) Վաճառվող Գույքը կամ Գնորդի կամ Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց գույքը կամ գործունեությունն վաճառելու կամ մասնատելու (այդ թվում թրասթ հիմնելու միջոցով կամ այլ կերպ) կամ այդ կապակցությամբ այս կամ այն գործողությունը կատարելու (կամ այդ կապակցությամբ վերոգրյալ գործողություններից որևէ մեկը կատարելու վերաբերյալ համաձայնություն տալու) վերաբերյալ: Վաճառողը և Գնորդը համաձայնում են կնքել և տրամադրել այնպիսի լրացուցիչ փաստաթղթեր, վկայականներ, համաձայնագրեր և այլ փաստաթղթեր և ձեռնարկել այնպիսի լրացուցիչ քայլեր, որոնք կարող են անհրաժեշտ կամ ցանկալի լինել սույն Պայմանագրով նախատեսված գործարքները սեղմ ժամկետներում իրականացնելու և Վաճառվող Գույքի նկատմամբ Գնորդին անվիճարկելի ու այլ Անձանց հավակնություններից զերծ սեփականության իրավունք տրամադրելու համար:</p>
<p>Section 8.02. <i>Public Announcements.</i> The parties agree to consult with each other before issuing any press release or making any public statement with respect to this Agreement or the transactions contemplated hereby and, except for any press releases and public statements the making of which may be required by Applicable Law or any listing agreement with any national securities exchange, will not issue any such press release or make any such public statement prior to such consultation.</p>	<p>Կետ 8.02. <i>Հրապարակային Հայտարարություններ:</i> Կողմերը համաձայնում են սույն Պայմանագրի կամ սույն Պայմանագրով նախատեսված գործարքների վերաբերյալ մամուլում կամ այլ կերպ հրապարակային հայտարարություններ կատարելուց առաջ խորհրդակցել միմյանց հետ և առանց նման խորհրդակցության այդպիսի հայտարարություններ չկատարել: Սույն պարտավորությունը կիրառելի չէ այն դեպքում, երբ մամուլում կամ այլ կերպ հրապարակային հայտարարություններ կատարելը պահանջվում է Կիրառելի Օրենսդրության կամ արժեթղթերի ազգային շուկաներում արժեթղթերի վաճառք կազմակերպելու վերաբերյալ պայմանագրերի համաձայն:</p>

Section 8.03. <i>Environmental Law.</i>	Կետ 8.03. <i>Բնապահպանական օրենսդրություն</i>
<p>(a) At ContourGlobal’s or the Buyer’s cost, within ninety (90) days after the Closing Date, the Seller and the Buyer shall each designate one representative who shall in consultation with the Ministry of Natural Protection of the Republic of Armenia, review the status of the Facilities and determine whether any Hazardous Substances exist and if so, what remedial actions should be taken to bring the Facilities into compliance with Environmental Laws, and the cost and timetable for execution of such remedial actions. The findings and recommendations of the representatives should be considered by the Buyer in submitting proposals to the Regulator for short and long-term investments pursuant to the License, it being contemplated that any remedial action would be required to be completed within a period of not more than ten (10) years. Such investments shall be compensated by an increase in the Total Payment in accordance with the Tariff Schedule.</p>	<p>(ա) Գործարքի Ավարտման օրվանից ինսուն (90) օրվա ընթացքում Վաճառողը և Գնորդը (Բոնորոգիտրալի կամ Գնորդի միջոցների հաշվին) պետք է նշանակեն մեկական ներկայացուցիչ, ովքեր ՀՀ Բնապահպանության նախարարության հետ խորհրդակցելով կուսումնասիրեն Սարքավորումների վիճակը՝ պարզելու համար արդյոք սակա են Վտանգավոր Նյութեր և դրանց առկայության դեպքում մշակել թերությունները շտկելու գործողությունների ծրագիրը, որի միջոցով հնարավոր կլինի Սարքավորումները համապատասխանեցնել Բնապահպանական օրենսդրության պահանջներին: Պետք է ներկայացվեն նաև թերությունները շտկելու գործողությունների համար պահանջվող ծախսերը և ժամանակահատվածը: Ներկայացուցիչների հայտնաբերած տեղեկությունները և առաջարկությունները հիման վրա կազմված Գնորդի առաջարկությունները պետք է ներկայացվեն Կարգավորող մամնին՝ Լիցենզիայի համաձայն կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումները հաստատելու համար՝ հաշվի առնելով, որ թերությունները շտկելու գործողությունների ծրագրի ժամկետը չպետք է գերազանցի տաս (10) տարին: Այս ներդրումները պետք է փոխհատուցվեն Սակագնային պլանի համաձայն Համախառն Վճարի բարձրացման միջոցով:</p>
<p>(b) The parties agree that the Buyer shall not be liable for any violations of Environmental Laws arising from the condition or use of the Facilities prior to the Closing Date, and the Seller shall indemnify and hold the Buyer harmless should the Buyer be prosecuted by Armenian Authorities for breaches of Environmental Law in respect of such pre-Closing violations; provided, however, that nothing herein shall be deemed to absolve the Buyer from liability for any violations or alleged</p>	<p>(բ) Կողմերը համաձայնում են, որ Գնորդը պատասխանատվություն չի կրում մինչև Գործարքի Ավարտման օրը Սարքավորումների օգտագործման արդյունքում Բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման համար և Վաճառողը պետք է Գնորդին հատուցի և նրան գերծ պահի ՀՀ Իշխանական մարմինների կողմից՝ մինչ Գործարքի ավարտը թույլ տրված խախտումների համար պատասխանատվությունից, պայմանով,</p>

<p>violations of Environmental Laws by the Buyer after the Closing Date, with the exception of continuing violations due to the condition of the Facilities on the Closing Date, which under the Energy Law of Armenia are not violations of the Buyer until such time as the Facilities in question were to be rehabilitated and replaced and/or the environmental damage remedied pursuant to the staged remedial plan therefore approved by the Regulator.</p>	<p>սակայն, որ վերոնշյալը չի ազատում Գնորդին Գործարքի Ավարտման օրվանից հետո թույլ տրված Բնապահպանական օրենսդրության խախտումների համար պատասխանատվությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ Գործարքի Ավարտման օրվանից հետո որոշ ժամանակ՝ Սարքավորումների վիճակով պայմանավորված խախտումները շարունակվում են, որոնք Էներգետիկայի մասին ՀՀ օրենքի համաձայն Գնորդի կողմից թույլ տրված խախտումներ չեն այնքան ժամանակ, քանի դեռ Սարքավորումները չեն վերազինվել և փոխարինվել և/կամ բնապահպանական ռիսկերը վերացվել են Կարգավորող մարմնի կողմից հաստատված թերությունները շտկելու գործողությունների ծրագրին համապատասխան:</p>
---	--

Section 8.04. <i>Safety Regulations.</i>	Կետ 8.04. <i>Անվտանգության ապահովման մասին կանոնակարգեր:</i>
<p>(a) At the Buyer’s cost, within ninety (90) days after the Closing Date, the Seller and the Buyer shall each designate one representative who shall in consultation with the Ministry of Energy of the Republic of Armenia, review the status of the Facilities and determine whether any violations of safety regulations exist and if so, what remedial action should be taken to bring the Buyer and the Facilities into compliance with such regulations, and the cost and timetable for execution of such remedial actions. The findings and recommendations of the representatives should be considered by the Buyer in submitting proposals to the Regulator for short and long-term investments pursuant to the License, it being contemplated that any remedial action would be required to be completed within a period of not more than 10 years. Such investments shall be compensated by an increase in the Total Payment in accordance with the Tariff Schedule.</p>	<p>(ա) Գործարքի Ավարտման օրվանից իննսուն (90) օրվա ընթացքում Վաճառողը և Գնորդը (Քոնսորցիումի կամ Գնորդի միջոցների հաշվին) պետք է նշանակեն մեկական ներկայացուցիչ, ովքեր ՀՀ Բնապահպանության նախարարության հետ խորհրդակցելով կուսումնասիրեն Սարքավորումների վիճակը՝ պարզելու համար արդյոք առկա են Վտանգավոր Նյութեր և դրանց առկայության դեպքում մշակել թերությունները շտկելու գործողությունների ծրագիրը, որի միջոցով հնարավոր կլինի Սարքավորումները համապատասխանեցնել Անվտանգության ապահովման կանոնակարգերին: Պետք է ներկայացվեն նաև թերությունները շտկելու գործողությունների համար պահանջվող ծախսերը և ժամանակահատվածը: Ներկայացուցիչների հայտնաբերած տեղեկությունների և առաջարկությունների հիման վրա կազմված Գնորդի առաջարկությունները պետք է ներկայացվեն Կարգավորող մամնին՝ Լիցենզիայի համաձայն կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումները հաստատելու համար՝ հաշվի առնելով, որ թերությունները շտկելու գործողությունների ծրագրի ժամկետը չպետք է գերազանցի տաս (10) տարին: Այս ներդրումները պետք է փոխհատուցվեն Սակագնային պլանի համաձայն Համախառն Վճարի բարձրացման միջոցով:</p>
<p>(b) The parties agree that the Buyer shall not be liable for any violations of safety regulations arising from the condition or use of the Facilities prior to the Closing Date, and the Seller shall indemnify and hold the Buyer harmless should the Buyer be prosecuted by Armenian Authorities for breaches of safety regulations in respect of such pre-Closing violations; provided, however, that nothing herein shall be deemed to absolve the Buyer from liability for any violations or alleged violations of</p>	<p>(բ) Կողմերը համաձայնում են, որ Գնորդը պատասխանատվություն չի կրում մինչև Գործարքի Ավարտման օրը Սարքավորումների օգտագործման արդյունքում Անվտանգության ապահովման կանոնակարգերի պահանջների խախտման համար և Վաճառողը պետք է Գնորդին հատուցի և նրան գերծ պահի ՀՀ Իշխանական մարմինների կողմից՝ մինչ Գործարքի ավարտը թույլ տրված խախտումների համար պատասխանատվությունից, պայմանով,</p>

<p>safety regulations by the Buyer after the Closing Date, with the exception of continuing violations due to the condition of the Facilities on the Closing Date, which under the Energy Law of Armenia are not violations of the Buyer until such time as the assets and properties in question were to be rehabilitated and replaced and/or the environmental damage cleared up pursuant to the staged remedial plan therefore approved by the Regulator.</p>	<p>սակայն, որ վերոնշյալը չի ազատում Գնորդին Գործարքի Ավարտման օրվանից հետո թույլ տրված Անվտանգության ապահովման կանոնակարգերի խախտումների համար պատասխանատվությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ Գործարքի Ավարտման օրվանից հետո որոշ ժամանակ՝ Սարքավորումների վիճակով պայմանավորված խախտումները շարունակվում են, որոնք Էներգետիկայի մասին ՀՀ օրենքի համաձայն Գնորդի կողմից թույլ տրված խախտումներ չեն այնքան ժամանակ, քանի դեռ Սարքավորումները չեն վերազինվել և փոխարինվել և/կամ բնապահպանական ռիսկերը վերացվել են Կարգավորող մարմնի կողմից հաստատված թերությունները շտկելու գործողությունների ծրագրին համապատասխան:</p>
<p style="text-align: center;">ARTICLE 9 TAX MATTERS</p>	<p style="text-align: center;">ՀՈՒՎԱԾ 9 ՀԱՐԿԵՐ</p>
<p>Section 9.01. <i>Tax Cooperation; Allocation of Taxes.</i> (a) Buyer and Seller agree to furnish or cause to be furnished to each other, upon request, as promptly as practicable, such information and assistance relating to the Purchased Assets (including access to books and records) as is reasonably necessary for the filing of all Tax returns, the making of any election relating to Taxes, the preparation for any audit by any taxing authority, and the prosecution or defense of any claim, suit or proceeding relating to any Tax. Buyer and Seller shall retain all books and records with respect to Taxes pertaining to the Purchased Assets for a period of at least six years following the Closing Date unless a longer term is required under Armenian Applicable Law. On or after the end of such period, each party shall provide the other with at least 10 days prior written notice before destroying any such books and records, during which period the party receiving such notice can elect to take possession, at its own expense, of such</p>	<p>Կետ 9.01. <i>Համագործակցություն հարկային հարցերի շուրջ, հարկային պարտավորությունների բաշխումը:</i> (ա) Գնորդը և Վաճառողը համաձայնում են պահանջ ստանալուն պես որքան հնարավոր է սեղմ ժամկետներում Վաճառվող Գույքի վերաբերյալ միմյանց տրամադրել և ապահովել, որպեսզի պահանջ ստանալուն պես որքան հնարավոր է սեղմ ժամկետներում միմյանց տրամադրվեն այնպիսի տեղեկություններ և աջակցություն, որոնք ողջամտորեն կարող են անհրաժեշտ լինել Հարկային հաշվետվություններ ներկայացնելու, այդ հաշվետվությունները ներկայացնելու կապակցությամբ թույլատրելի ռեժիմի ընտրություն կատարելու, հարկային մարմինների կողմից ստուգումներ իրականացնելու համար պատրաստվելու, Հարկերի առնչությամբ ներկայացված այս կամ այն հայցի, պահանջի հիմքով սկսված վարույթում գործը վարելու կամ դրա պաշտպանությունն իրականացնելու համար: Գնորդը և Վաճառողը պարտավոր են</p>

<p>books and records. Seller and Buyer shall cooperate with each other in the conduct of any audit or other proceeding relating to Taxes involving the Purchased Assets.</p>	<p>Գործարքի Ավարտման Օրվանից հետո առնվազն վեց տարվա ընթացքում պահել Վաճառվող Գույքի նկատմամբ հաշվարկվող Հարկերի վերաբերյալ գրքերն ու գրառումները, եթե ավելի երկար ժամանակ սահմանված չէ ՀՀ Կիրառելի Օրենսդրությամբ: Նշված ժամկետն ավարտվելիս կամ դրանից հետո Կողմերից յուրաքանչյուրը մյուսին առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցում կտրամադրի այդ գրքերն ու գրառումները ոչնչացնելու իր մտադրության վերաբերյալ: Ծանուցում ստացած կողմը նշված տասնօրյա ժամկետում կարող է որոշում կայացնել այդ գրքերը և գրառումներն իր հաշվին վերցնելու և իր մոտ պահելու վերաբերյալ: Գնորդը և Վաճառողը կհամագործակցեն միմյանց հետ Վաճառվող Գույքի նկատմամբ հաշվարկվող Հարկերի կապակցությամբ ստուգումների կամ այլ վարույթներ իրականացվելու դեպքում:</p>
<p>(b) All real property taxes, Moveable Property taxes and similar ad valorem obligations levied with respect to the Purchased Assets for a taxable period which includes (but does not end on) the Closing Date (collectively, the “Apportioned Obligations”) shall be apportioned between Seller and Buyer based on the number of days of such taxable period included in the Pre-Closing Tax Period and the number of days of such taxable period after the Closing Date (such portion of such taxable period, the “Post-Closing Tax Period”). Seller shall be liable for the proportionate amount of such taxes that is attributable to the Pre-Closing Tax Period, and Buyer shall be liable for the proportionate amount of such taxes that is attributable to the Post-Closing Tax Period.</p>	<p>(բ) Վաճառվող Գույքի նկատմամբ հաշվարկվող բոլոր Շարժական և անշարժ գույքի համար գանձվող հարկերը, ինչպես նաև գույքի արժեքից գանձվող նմանատիպ հարկերը, որոնք ենթակա են վճարման մի հարկատու ժամանակաշրջանի համար, որն ընդգրկում է Գործարքի Ավարտման Օրը (բայց չի ավարտվում այդ օրը), պետք է բաշխվեն Գնորդի և Վաճառողի միջև (այսուհետ՝ «Կողմերի Միջև Բաշխված Հարկային Պարտավորություններ»)՝ ելնելով մինչև Գործարքի Ավարտման Օրը և դրանից հետո (այսուհետ՝ «Գործարքի Ավարտման Օրվան Հաջորդող Հարկատու Ժամանակաշրջան») այդ ժամանակաշրջանում եղած օրերի քանակից: Վաճառողը պետք է վճարի այդ հարկերի այն մասը, որը վերագրվում է Գործարքի Ավարտման Օրվան Նախորդող Հարկատու Ժամանակաշրջանին, իսկ Գնորդը՝ Գործարքի Ավարտման Օրվան Հաջորդող Հարկատու Ժամանակաշրջանին վերագրվող մասը:</p>
<p>(c) Except as provided in Section 2.03 regarding VAT, all other sales, value added,</p>	<p>(գ) Բացառությամբ սույն Պայմանագրի 2.03 Կետով սահմանված ԱԱՀ վճարելու</p>

<p>registration, stamp, recording, documentary, conveyancing, transfer, gains and similar Taxes, levies, charges and fees incurred in connection with the transactions contemplated by this Agreement shall be borne by Seller.</p>	<p>պարտավորության, Վաճառողը պետք է վճարի սույն Պայմանագրով նախատեսված գործարքների կապակցությամբ գանձվող գույքի վաճառքի, փոխանցման համար գանձվող, ավելացված արժեքի, գրանցման, փաստաթղթերի ձևակերպման համար, ինչպես նաև գույքի ձեռքբերման և վաճառքի գների տարբերության նկատմամբ հաշվարկվող և գանձվող ու նմանատիպ բոլոր այլ Հարկերը, տուրքերը և վճարները:</p>
<p>(d) Apportioned Obligations and Taxes described in this Section 9.01 shall be timely paid, and all applicable filings, reports and returns shall be filed, as provided by Applicable Law. The paying party shall be entitled to reimbursement from the non-paying party in accordance with paragraph (b) above. Upon payment of any such Apportioned Obligation or Tax, the paying party shall present a statement to the non-paying party setting forth the amount of reimbursement to which the paying party is entitled under paragraph (b) above together with such supporting evidence as is reasonably necessary to calculate the amount to be reimbursed. The non-paying party shall make such reimbursement promptly but in no event later than 10 days after the presentation of such statement. Any payment not made within such time shall bear interest at the rate of 6% per annum for each day until paid.</p>	<p>(դ) 9.01-ով նշված Հարկերը և Կողմերի Միջև Բաշխված Հարկային Պարտավորությունները պետք է վճարվեն և կատարվեն Կիրառելի Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, այդ կապակցությամբ պետք է ներկայացվեն Կիրառելի Օրենսդրությամբ պահանջվող բոլոր հաշվարկները և հաշվետվությունները: Դրանք վճարած կողմն իրավունք ունի վերոնշյալ (բ) պարբերության համաձայն փոխհատուցում ստանալ վճարում չկատարած կողմից: Դրանք վճարելիս վճարող կողմը պարտավոր է վճարում չկատարած կողմին ներկայացնել գրություն՝ նշելով գումարը, որը վճարումն իրականացրած կողմն իրավունք ունի ստանալ վերոնշյալ (բ) պարբերության համաձայն կցելով այնպիսի փաստաթղթեր ու ապացույցներ, որոնք կարող են ողջամտորեն անհրաժեշտ լինել փոխհատուցման ենթակա գումարը հաշվարկելու համար: Վճարումը չկատարած կողմն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գրությունը ներկայացվելուց հետո 10 օրվա ընթացքում, կվճարի որպես փոխհատուցում պահանջվող գումարը: Նշված ժամկետն ավարտվելուց հետո չվճարված գումարների նկատմամբ մինչև վճարումը կատարելու օրը ուշացման յուրաքանչյուր օրվա համար կհաշվարկվեն տոկոսագումարներ՝ հաշվակրված տարեկան 6 տոկոս դրույքաչափով:</p>

<p style="text-align: center;">ARTICLE 10 EMPLOYEES</p>	<p style="text-align: center;">ՀՈՒՎԱԾ 10 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ</p>
<p>Section 10.01. <i>Employees and Offers of Employment.</i></p>	<p>Կետ 10.01. <i>Աշխատակիցները և աշխատանքի առաջարկները:</i></p>
<p>(a) Between the date hereof and the Closing Date, the Buyer shall offer or arrange employment to all employees of the Seller, provided that (i) such offers, if made, shall only come into effect as of Closing Date and subject to completion of the transaction contemplated under this Agreement, (ii) such offers, if made, shall be at the same salary and equivalent Employee Benefit levels and on equivalent terms and conditions as are currently in force, and (iii) the Buyer shall have discretion, following interviews or otherwise, not to make any offer to personnel of the Seller currently employed in a management or a senior position.</p>	<p>(ա) Սույն Պայմանագրի կնքման օրվանից մինչև Գործարքի Ավարտման Օրը Գնորդը պարտավոր է աշխատանք առաջարկել կամ աշխատատեղեր ստեղծել Վաճառողի բոլոր աշխատակիցների համար, պայմանով, որ (i) նրանք, ում աշխատանքի հրավեր է ներկայացվել, Գնորդի մոտ աշխատանքի կանցնեն, և աշխատանքը կսկսեն միայն Գործարքի Ավարտման Օրվանից և պայմանով, որ իրականացված լինի սույն Պայմանագրով նախատեսված գործարքը, (ii) Առաջարկ ստացած աշխատակիցներին պետք է առաջարկվի ներկայումս գործող չափով աշխատավարձ, ներկայումս գործող Աշխատակիցների Երաշխիքներին և Հատուցումներին համարժեք երաշխիքներ ու հատուցումներ, ինչպես նաև՝ ներկայումս նրանց հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորող պայմաններին համարժեք պայմաններ, և (iii) Գնորդը կարող է հարցազրույցներ անց կացնելուց հետո կամ այլ կերպ իր հայեցողությամբ աշխատանքի առաջարկ չանել Վաճառողի այն աշխատակիցներին, որոնք ներկայումս զբաղեցնում են ղեկավար կամ ավելի բարձր պաշտոններ:</p>
<p>(b) In order to enable the Buyer to formulate the offers contemplated in the preceding paragraph, Seller has disclosed to it the terms of all existing Employee Benefits and all employment terms and conditions as are currently in force. Seller shall further facilitate the steps contemplated in the preceding paragraph, including by waiving any applicable notice period otherwise applicable to the termination of their employment by employees willing to accept</p>	<p>(բ) Նախորդ ենթակետով նախատեսված աշխատանքի առաջարկները կազմելու և ներկայացնելու նպատակով Վաճառողը Գնորդին է ներկայացրել ներկայումս գործող Աշխատակիցների Երաշխիքների և Հատուցումների, նրանց հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորող ներկայումս գործող պայմանագրերով և այլ փաստաթղթերով սահմանված պայմանների վերաբերյալ սպառիչ տեղեկություններ:</p>

<p>an offer from Buyer.</p>	<p>Վաճառողը պետք է անհրաժեշտ աջակցություն ցուցաբերի նախորդ ենթակետով նախատեսված Գնորդի պարտավորությունների կատարման նպատակով այդ թվում նաև հրաժարվելով իր այն իրավունքից, որը նրան հնարավորություն է տալիս աշխատանքի առաջարկ ստացած և դրանք ընդունելու ցանկություն ունեցող աշխատակիցներից պահանջել աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու վերաբերյալ պահանջվող ծանուցումները ներկայացնել սահմանված ժամկետներում:</p>
<p>(c) Buyer shall not assume responsibility for any employee until such employee commences employment with Buyer and, in accordance with Section 2.02 above, Seller shall retain all obligations and liabilities under any Employee Benefit, and otherwise, in respect of all employees to the extent such obligations and liabilities relate to the period on or prior to the Closing Date.</p>	<p>(գ) Գնորդը որևիցե աշխատակցի առջև որևէ պատասխանատվություն չի կրի նախքան այդ աշխատակցի կողմից Գնորդի մոտ աշխատանքի անցնելու պահը, իսկ Գործարքի Ավարտման Օրվան նախորդող ժամանակաշրջանին վերաբերող բոլոր պարտավորությունները, որոնք կապված են Աշխատակիցների Երաշխիքների և Հատուցումների կամ ընդհանրապես աշխատակիցների հետ, սույն Պայմանագրի 2.02. Կետի համաձայն կշարունակեն մնալ և կհանդիսանան Վաճառողի պարտավորությունները:</p>
<p>(d) Buyer further undertakes not to terminate any employment agreement of any employee currently employed by the Seller for any reason other than for breach of such employment contract or Applicable law by the employee for a 12-month period as from the Closing Date.</p>	<p>(դ) Գնորդը պարտավորվում է Գործարքի Ավարտման Օրվանից հետո 12 ամսվա ընթացքում չլուծել ներկայումս Վաճառողի աշխատակից հանդիսացող աշխատակիցների հետ Գնորդի կողմից կնքված աշխատանքային պայմանագրերը, պայմանով, եթե այդ աշխատակիցները թույլ չտան աշխատանքային պայմանագրի կամ Կիրառելի Օրենսդրության պահանջների խախտումներ:</p>
<p>Section 10.02. <i>No Third Party Beneficiaries.</i> No provision of this Agreement shall create any third party beneficiary or other rights in any employee or a former employee (including any beneficiary or dependent thereof) of Seller.</p>	<p>Կետ 10.02. <i>Երրորդ անձանց իրավունքների բացառում:</i> Սույն Հոդվածով Վաճառողի որևիցե աշխատակցի կամ նախկին աշխատակցի (ներառյալ նրանց շահառուներին և նրանցից կախյալ Անձանց) երրորդ անձ շահառուների վերապահվող կամ ցանկացած մեկ այլ իրավունք չի վերապահվում:</p>

<p style="text-align: center;">ARTICLE 11 CONDITIONS TO CLOSING</p>	<p style="text-align: center;">ՀՈՒՎԱԾ 11 ԳՈՐԾԱՐՔԻ ԱՎԱՐՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԱԽԱՊԱՅԱՄՆՆԵՐԸ</p>
<p>Section 11.01. <i>Conditions to Obligation of Buyer.</i> The obligation of Buyer to consummate the Closing is subject to the satisfaction of the following further conditions:</p>	<p>Կետ 11.01. <i>Պայմաններ, որոնց բավարարված լինելու դեպքում Գնորդը պարտավորված կլինի ավարտել Գործարքը:</i> Գործարքն ավարտելու Գնորդի պարտավորությունը կախված է նաև հետևյալ լրացուցիչ պայմանները բավարարված լինելու հանգամանքից:</p>
<p>(a) <i>No Injunctions or Other Legal Restraints.</i> No injunction or other legal restraint or prohibition enacted, entered, promulgated, enforced or issued by any Governmental Authority preventing the consummation of the Closing shall have come into effect.</p>	<p>(ա) <i>Արգելանք և այլ իրավական սահմանափակումներ:</i> Պետք է բացակայեն Իշխանական Մարմինների կողմից հրապարակված, ընդունված, գործողության մեջ դրված կամ ի կատար ավարտված բոլոր արգելանքները, իրավական սահմանափակումները կամ արգելքները, որոնք կարող են խոչընդոտ կամ արգելք հանդիսանալ Գործարքն ավարտելու համար:</p>
<p>(b) <i>Compliance with Agreements and Covenants.</i> Seller and the Republic of Armenia shall have performed and complied in all material respects with their covenants and obligations contained in this Agreement to be performed by it at or prior to the Closing Date.</p>	<p>(բ) <i>Պայմանագրերը և սրանձնած պարտավորությունները կատարելը:</i> Սույն Պայմանագրով Վաճառողի և ՀՀ ստանձնած պարտավորությունները, որոնք ենթակա են կատարման նախքան Գործարքի Ավարտման Օրը կամ հենց այդ օրը, պետք է բոլոր էական առումներով կատարված լինեն:</p>
<p>(c) <i>Representations and Warranties True.</i> The representations and warranties of Seller and the Republic of Armenia contained in this Agreement and in any certificate or other writing delivered by them pursuant hereto (i) that are qualified by materiality or Material Adverse Effect shall be true at and as of the Closing Date as if made at and as of such date, and (ii) that are not qualified by materiality or Material Adverse Effect shall be true in all material respects at and as of the Closing Date as if made at and as of such time, and (iii) Buyer and ContourGlobal shall have received a certificate signed by the Seller and the Republic of Armenia to the foregoing effect.</p>	<p>(գ) <i>Երաշխիքների և հավաստիքների ճիշտ և հավաստի լինելը:</i> Վաճառողի և ՀՀ կողմից սույն Պայմանագրի կամ սույն Պայմանագրով համաձայն տրամադրված տեղեկանքների, վկայականների կամ մեկ այլ գրության միջոցով տրված երաշխիքները և հավաստիքները, (i) որոնց կապակցությամբ որպես պայման է առաջադրվել էական լինելը կամ Անցանկալի Էական Ազդեցություն ունենալու հանգամանքը, պետք է ճիշտ և հավաստի լինեն Գործարքի Ավարտման Օրը և այդ օրվա դրությամբ, այնպես կարծես, եթե տրված լինեին այդ օրը և այդ օրվա դրությամբ, իսկ (ii) նրանք, որոնց կապակցությամբ նման պայման չի առաջադրվել, պետք է բոլոր էական առումներով ճիշտ և հավաստի լինեն Գործարքի Ավարտման Օրը և այդ օրվա դրությամբ,</p>

	<p>այնպես կարծես, եթե տրված լինեին այդ օրը և այդ օրվա դրությամբ, իսկ (iii) Գնորդը և Քոնթրոլ Գրուբայը պետք է ստանան վերոգրյալը հավաստող վկայական՝ ստորագրված Վաճառողի և ՀՀ կողմից:</p>
<p>(d) <i>No Threatened Action.</i> There shall not be threatened, instituted or pending any action or proceeding by any Person before any Governmental Authority, (i) seeking to restrain, prohibit or otherwise interfere with the rights of any Person as shareholder or Lender of Buyer or the ownership or operation by Buyer or any of its Affiliates of all or any material portion of the Purchased Assets or the business or assets of Buyer or any of its Affiliates or to compel Buyer or any of its Affiliates to dispose of all or any material portion of the Purchased Assets or (ii) seeking to require divestiture by Buyer or any of its Affiliates of any Purchased Assets or any business or assets of Buyer or any of its Affiliates.</p>	<p>(դ) <i>Որոշակի գործողություններ սպազայում կատարվելու հավանականության բացակայությունը:</i> Պետք է բացակայի Իշխանական Մարմիններում այս կամ այն Անձանց կողմից այս կամ այն գործողությունը կատարելու կամ վարույթը սկսելու հավանականությունը կամ սպառնալիքը, ինչպես նաև պետք է բացակայեն Իշխանական Մարմիններում այս կամ այն Անձանց կողմից կատարված այնպիսի գործողությունները կամ սկսված այնպիսի վարույթները, (i) որոնք նպատակ են հետապնդում սահմանափակել Գնորդի բաժնետեր կամ Փոխառու հանդիսացող Անձանց իրավունքները կամ արգելել կամ միջամտել այդ իրավունքների իրականացմանը, կամ որոնք նպատակ են հետապնդում արգելել կամ սահմանափակել Վաճառվող Գույքի, Գնորդի կամ Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց գործունեության կամ ակտիվների կամ դրանց նշանակալից մասի նկատմամբ սեփականության իրավունքները, դրանք շահագործելու կամ իրականացնելու իրավունքները կամ էլ նպատակ են հետապնդում միջամտել այդ իրավունքների իրականացմանը կամ Գնորդին կամ Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց հարկադրել օտարել Վաճառվող Գույքը կամ դրա նշանակալից մասը, կամ (ii) որոնք նպատակ են հետապնդում Գնորդին կամ Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց հարկադրել օտարել Վաճառվող Գույքի կազմում ներառված այս կամ այն գույքը կամ Գնորդի կամ Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց այս կամ այն գույքն ընդհանրապես կամ այս կամ այն գործունեությունը:</p>
<p>(e) <i>Triggering Event/Material Adverse Event.</i> Since the date of this Agreement, no Triggering Event and no event having a</p>	<p>(ե) <i>Երբ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձություն/Անցանկալի Էական</i></p>

<p>Material Adverse Effect shall have occurred.</p>	<p><i>Ազդեցություն Ունեցող Իրադարձություն:</i> Սույն Պայմանագրի կնքման օրվանից հետո պետք է բացակայի ցանկացած այնպիսի իրադարձություն, որը կարող է ունենալ Անցանկալի Էական Ազդեցություն, և պետք է տեղի ունեցած չլինի Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունք Վերապահող Իրադարձություն:</p>
<p>(f) <i>Regulatory Approvals.</i> Seller and/or Buyer, as applicable, shall have received all Regulatory Approvals listed in Schedule 4.03, with no condition or other constraint attached to such Regulatory Approvals, except as may be accepted by Buyer acting reasonably and no such consent, authorization or approval shall have been revoked.</p>	<p>(գ) <i>Կարգավորող Մարմինների Կողմից Պահանջվող Թույլտվություններ:</i> Վաճառողը և/կամ, կախված հանգամանքներից, Գնորդը պետք է ստացած լինեն 4.03 Հավելվածով նախատեսված Կարգավորող Մարմինների Կողմից Պահանջվող բոլոր Թույլտվությունները: Դրանց տրամադրման կամ վավերականության համար չպետք է սահմանված լինի որևիցե նախապայման, դրանցով չպետք է նախատեսված լինեն որևիցե սահմանափակումներ, բացառությամբ այն սահմանափակումների և նախապայմանների, որոնք կարող են ողջամտորեն ընդունվել Գնորդի կողմից: Նշված թույլտվությունները, համաձայնությունները, հաստատումները չպետք է վերացված լինեն:</p>
<p>(g) <i>Transaction documents.</i> The Power Purchase Agreement to be entered into with AEN becoming effective (subject only to the consummation of this Agreement) and having been registered as required under Applicable Law.</p>	<p>(ե) <i>Գործարքի իրականացման համար պահանջվող փաստաթղթերը:</i> ՀԷՑ հետ կնքման ենթակա Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագիրն ուժի մեջ մտնելու համար պետք է բացակայի միայն սույն Պայմանագրով նախատեսված գործարքների իրականացման նախապայմանի բավարարված լինելը, ՀԷՑ հետ կնքման ենթակա Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագիրը պետք է Կիրառելի Օրենսդրության համաձայն գրանցում ստացած լինի:</p>

<p>(h) <i>Employees.</i> A minimum of 201 employees dedicated to the operations of the Facilities shall have accepted Buyer's employment offers made pursuant to the provision of Section 10.01.</p>	<p>(ը) <i>Աշխատակիցներ:</i> Սարքավորումների շահագործումն ապահովելու նպատակով թվով առնվազն 201 աշխատակիցներ պետք է ընդունած լինեն աշխատանքի ընդունելու կապակցությամբ Գնորդի կողմից սույն Պայմանագրի 10.01 Կետի համաձայն արված առաջարկները:</p>
<p>(i) <i>AEN Security Arrangements.</i> The Seller and the Republic of Armenia shall have procured that (i) security arrangements are established (effective no later than the Closing Date) in connection with the Power Purchase Agreement in order to secure the payments owed to the Buyer by AEN, on terms at least as favorable to the Buyer as those established in favor of other electricity producers in Armenia and (ii) the latter is required to sign any ratification or accession deeds to enable the Buyer to benefit from those same arrangements.</p>	<p>(i) <i>ՀԷՑ կողմից Գնորդի նկատմամբ վճարային պարտավորությունների կատարումն ապահովող պայմանավորվածություններ:</i> Վաճառողը և ՀՀ պետք է ապահովեն, որ (i) ապահովման միջոցներ տրամադրվեն Գնորդի նկատմամբ Էլեկտրաէներգիայի Առուվաճառքի Պայմանագրի կապակցությամբ ՀԷՑ-ի ունեցած վճարային պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Այդպիսի ապահովման միջոցները պետք է առնվազն լինեն նույնպիսիք, ինչպիսիք սահմանված են ՀՀ տարածքում այլ էներգիա արտադրողների օգտին տրամադրվածները, և (ii) վերջինս պարտավորվում է ստորագրել ցանկացած փաստաթուղթ, որը Գնորդին թույլ կտա օգտվել ձեռք բերված պայմանավորվածություններից:</p>
<p>Section 11.02. <i>Conditions to Obligation of Seller.</i> The obligation of Seller to consummate the Closing is subject to the satisfaction of the following further conditions:</p>	<p>Կետ 11.02. <i>Պայմաններ, որոնց բավարարված լինելու դեպքում Վաճառողը պարտավորված կլինի ավարտել Գործարքը:</i> Գործարքն ավարտելու Վաճառողի պարտավորությունը կախված է նաև հետևյալ լրացուցիչ պայմանները բավարարված լինելու հանգամանքից:</p>
<p>(a) <i>Compliance with Agreements and Covenants.</i> Buyer and ContourGlobal shall have performed and complied in all material respects with its covenants and obligations contained in this Agreement to be performed by it at or prior to the Closing Date.</p>	<p>(ա) <i>Պայմանագրերի և Պարտավորությունների Կատարումը:</i> Սույն Պայմանագրով Գնորդի և ՔոնթուրԳլոբալի ստանձնած պարտավորությունները, որոնք ենթակա են կատարման նախքան Գործարքի Ավարտման Օրը կամ հենց այդ օրը, պետք է բոլոր էական առումներով կատարված լինեն:</p>
<p>(b) <i>Representations and Warranties True.</i> The representations and warranties of Buyer</p>	<p>(բ) <i>Երաշխիքների և հավաստիքների ճիշտ և հավաստի լինելը:</i> Գնորդի և ՔոնթուրԳլոբալի</p>

<p>and ContourGlobal contained in this Agreement and in any certificate or other writing delivered by them pursuant hereto shall be true in all material respects at and as of the Closing Date as if made at and as of such time, and the Seller and the Republic of Armenia shall have received a certificate signed by Buyer and ContourGlobal to the foregoing effect.</p>	<p>կողմից սույն Պայմանագրի կամ սույն Պայմանագրի համաձայն տրամադրված տեղեկանքների, վկայականների կամ մեկ այլ գրության միջոցով տրված երաշխիքները և հավաստիքները պետք է բոլոր էական առումներով ճիշտ և հավաստի լինեն Գործարքի Ավարտման Օրը և այդ օրվա դրությամբ, այնպես կարծես, եթե տրված լինեին այդ օրվա դրությամբ և այդ օրը: Վաճառողը և ՀՀ պետք է ստանան վերոգրյալը հավաստող վկայական՝ ստորագրված Գնորդի և ԿոնտուրԳլոբալի կողմից:</p>
<p>(c) <i>Employees.</i> Offers of employment shall have been made to all of the employees of the Seller pursuant to the provisions of Section 10.01.</p>	<p>(գ) <i>Աշխատակիցներ:</i> Գնորդը պետք է սույն Պայմանագրի 10.01 Կետի համաձայն աշխատանքի ընդունելու առաջարկ արած լինի Վաճառողի բոլոր աշխատակիցներին:</p>
<p>(d) <i>Security over the Facilities.</i> A first priority pledge over the Facilities shall have been granted to the Seller in accordance with Section 7.01(b).</p>	<p>(դ) <i>Սարքավորումների նկատմամբ Վաճառողի գրավի իրավունքը:</i> Սարքավորումները պետք է սույն Պայմանագրի 7.01 (բ) Կետի համաձայն գրավադրված լինեն Վաճառողի օգտին: Նշված գրավի իրավունքը պետք է գերակայի մնացած բոլոր այլ պարտատերերին տրամադրված գրավի իրավունքների և պարտավորությունների ապահովման այլ միջոցների նկատմամբ:</p>

<p style="text-align: center;">ARTICLE 12 SURVIVAL; INDEMNIFICATION</p>	<p style="text-align: center;">ՀՈԴՎԱԾ 12 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ</p>
<p>Section 12.01. <i>Survival.</i> (a) The representations and warranties of the parties hereto contained in this Agreement or in any certificate or other writing delivered pursuant hereto or in connection herewith shall survive the Closing until the third anniversary of the Closing Date; provided that:</p> <p style="padding-left: 40px;">(i) the representations and warranties in Sections 4.01, 4.02, 4.03, 4.04, 4.09(a) and 4.09(c) shall survive until the 25th anniversary of the Closing;</p> <p style="padding-left: 40px;">(ii) the representations and warranties in Section 4.09(f) shall survive 18 months after the Closing;</p> <p style="padding-left: 40px;">(b) The covenants and agreements of the parties hereto contained in this Agreement or in any certificate or other writing delivered pursuant hereto or in connection herewith shall survive until the 25th anniversary of the Closing or for the shorter period explicitly specified therein.</p> <p>(c) Notwithstanding the preceding sentences, any breach of covenant, agreement, representation or warranty in respect of which indemnity may be sought under this Agreement shall survive the time at which it would otherwise terminate</p>	<p>Կետ 12.01. <i>Պայմանագրի որոշ դրույթների գործողությունն ապագայում:</i> (ա) Սույն Պայմանագրի կամ սույն Պայմանագրի համաձայն տրամադրված տեղեկանքների, վկայականների կամ մեկ այլ գրության միջոցով Կողմերի տրված երաշխիքներն ու հավաստիքները կշարունակեն գործել Գործարքն Ավարտից հետո մինչև Գործարքի Ավարտման Օրվան հաջորդող երրորդ տարեդարձի օրը, պայմանով, սակայն, որ</p> <p style="padding-left: 40px;">(i) 4.01, 4.02, 4.03, 4.04, 4.09(ա) և 4.09(գ) Կետերով սահմանված երաշխիքներն ու հավաստիքները կգործեն Գործարքի Ավարտից հետո 25 տարվա ընթացքում:</p> <p style="padding-left: 40px;">(ii) 4.09(գ) Կետով սահմանված երաշխիքներն ու հավաստիքները կգործեն Գործարքի Ավարտից հետո 18 ամսվա ընթացքում:</p> <p style="padding-left: 40px;">(բ) Սույն Պայմանագրում կամ սույն Պայմանագրի համաձայն կամ սույն Պայմանագրի առնչությամբ տրված վկայականներում, տեղեկանքներում կամ մեկ այլ գրության մեջ ամրագրված Կողմերի պարտավորությունները և համաձայնությունները կշարունակեն գործել Գործարքի Ավարտից հետո 25 տարվա ընթացքում:</p> <p style="padding-left: 40px;">(գ) Չնայած վերոգրյալին, բոլոր այն իրավունքները, որոնք բխում են այնպիսի պարտավորությունների, համաձայնությունների կամ երաշխիքների ու հավաստիքների խախտումներից, որոնք սույն Պայմանագրի համաձայն փոխհատուցում ստանալու իրավունք են վերապահում, կշարունակեն գործել նաև այն ժամկետը լրանալուց հետո, երբ դրանք պետք է վերոգրյալ դրույթի համաձայն</p>

<p>pursuant to the preceding sentences, if notice of the inaccuracy thereof giving rise to such right of indemnity shall have been given to the party against whom such indemnity may be sought prior to such time.</p>	<p>դադարած լինելին, պայմանով, սակայն, եթե փոխհատուցում պահանջող կողմը մյուս կողմին, ումից ցանկանում է ստանալ փոխհատուցում, նախքան այդ ժամկետի լրանալը ծանուցել է փոխհատուցում պահանջելու իրավունք վերապահող այդ անճշտության մասին:</p>
<p>Section 12.02. <i>Indemnification.</i> (a) Effective at and after the Closing and without prejudice to the right of Buyer and ContourGlobal to request Seller to repurchase the Purchased Assets as per Article 3, Seller and the Republic of Armenia jointly and severally agree and undertake to indemnify Buyer, its Affiliates and their respective successors and assignees against and agrees to hold each of them harmless from any and all damage, loss, liability and expense (including reasonable expenses of investigation and reasonable attorneys’ fees and expenses in connection with any action, suit or proceeding whether involving a Third Party Claim or a claim solely between the parties hereto but excluding any incidental, indirect or consequential damages, losses, liabilities or expenses, and any lost profits or diminution in value) (“Damages”) incurred or suffered by Buyer or ContourGlobal, any of their Affiliates or any of their respective successors and assignees arising out of any misrepresentation or breach of warranty (determined without regard to any qualification or exception contained therein relating to materiality or Material Adverse Effect or any similar qualification or standard) (each such misrepresentation and breach of warranty a “Warranty Breach”) or breach of covenant or agreement made or to be performed by Seller or the Republic of Armenia pursuant to this Agreement;</p>	<p>Կետ 12.02. <i>Փոխհատուցում:</i> (ա) Վաճառողը և ՀՀ առանձին-առանձին և միասին համաձայնում են փոխհատուցել Գնորդին, Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց, նրանց իրավահաջորդներին ու նրանցից իրավունքները գիջելու ճանապարհով իրավունքներ ստացած Անձանց, ինչպես նաև համաձայնում են նրանց գերծ պահել ստորև թվարկված հանգամանքներից որևիցե մեկի կապակցությամբ նրանց համար ծագած կամ նրանց կողմից կրած բոլոր վնասներից, կորուստներից, պատասխանատվությունից և ծախսերից (ներառյալ հետաքննություն անց կացնելու կապակցությամբ պահանջվող ողջամիտ ծախսերից, փաստաբանական ծառայության համար վճարման ենթակա ողջամտորեն հաշվարկված գումարներից, ինչպես նաև հայցեր, պահանջներ ներկայացնելու, վարույթ սկսելու առնչությամբ պահանջվող բոլոր ծախսերից, անկախ այն հանգամանքից, թե երրորդ անձիք ներգրավված են, թե՛ ոչ, թե դրանք բխում են Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողություններից, թե՛ ոչ, թե ընթանում են բացառապես Կողմերի միջև, կողմնակի, անուղղակի բոլոր վնասներից, կորուստներից, պատասխանատվությունից ու ծախսերից, բաց թողնված օգուտից, գույքի արժեքի նվազած մասից բխող վնասներից) (այսուհետ՝ «Վնասներ»): Այդ հանգամանքներն են. Սույն Պայմանագրի համաձայն սխալ երաշխիքներ ու հավաստիքներ տրամադրելը կամ այդ երաշխիքներն ու հավաստիքները խախտելը ((այսուհետ՝ «Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտում») դա պարզելու համար պետք է հաշվի չառնել բոլոր այն</p>

	<p>բացառությունները կամ վերապահումները, որոնք կարող են արված լինել էական լինելու կամ Անցանկալի էական Ազդեցություն ունենալու հանգամանքի կապակցությամբ, ինչպես նաև նմանատիպ բոլոր այլ վերապահումները, բացառություններն ու չափորոշիչները), սույն Պայմանագրի համաձայն Վաճառողի կամ ՀՀ կողմից ստանձնած և Վաճառողի կամ ՀՀ կողմից կատարման ենթակա պարտավորությունները կամ համաձայնությունները չկատարելը կամ խախտելը</p>
<p><i>provided</i> that with respect to indemnification for such Warranty Breaches (other than with respect to a breach of Sections 4.01, 4.02, 4.03, 4.04, 4.09 and 4.13), (i) Seller and the Republic of Armenia shall not be liable unless the aggregate amount of Damages with respect to Warranty Breaches exceeds AMD 238,370,000, equivalent of USD 500,000 and (ii) Seller's and the Republic of Armenia's maximum aggregate liability for all such Warranty Breaches shall not exceed AMD 3,337,180,000, equivalent of USD 7 million, and</p>	<p>պայմանով, սակայն, որ Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտման համար (բացառությամբ [4.01, 4.02, 4.03, 4.04, 4.09 և 4.13 Կետերի խախտման համար]) փոխհատուցում վճարելու պարագայում՝ (i) Վաճառողի և ՀՀ պատասխանատվությունը կբացակայի, եթե Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտման հետևանքով առաջացած Վնասների ընդհանուր գումարը չգերազանցի 238,370,000 ՀՀ դրամը, որը համարժեք է 500 000 ԱՄՆ Դոլարին, իսկ (ii)՝ Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտման կապակցությամբ Վաճառողի ու ՀՀ պատասխանատվության առավելագույն ընդհանուր չափը չի գերազանցի 3,337,180,000 ՀՀ դրամը, որը համարժեք է 7 միլիոն ԱՄՆ Դոլարին, և</p>
<p><i>provided further</i> that the threshold and liability caps in AMD set forth in the paragraph above shall be indexed from time to time pursuant to the USD/AMD exchange rate set out in Section 2.03(c), <i>provided further</i> that any such indexation shall not result in the threshold and liability caps being below the amount previously calculated as due and payable pursuant to, and at the time of such calculation, compliant with, this Section 12.02(a).</p>	<p>պայմանով, որ ՀՀ դրամով արտահայտված նշված սահմանային գումարները պետք է ժամանակ առ ժամանակ ինդեքսավորվեն՝ կիրառելով 2.03 (գ) ենթակետով նախատեսված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը, և պայմանով, որ ինդեքսավորման արդյունքում ստացված գումարը չպետք է պակաս լինի սույն Պայմանագրի 12.02 (ա) ենթակետի համաձայն նախկինում հաշվարկված և վճարման ենթակա գումարից:</p> <p>Սույն Կետով նախատեսված իրավունքները և պարտականությունները ծագում են Գործարքի Ավարտման Օրը և շարունակում են գործել դրանից հետո ու չեն բացառում Գնորդի և</p>

	<p>ՔոնթուրԳլոբալի կողմից սույն Պայմանագրի 3 Հոդվածի համաձայն Ետ Գնման Պահանջ Ներկայացնելու Իրավունքն իրականացնելու հնարավորությունը:</p>
<p>(b) Effective at and after the Closing, Buyer and ContourGlobal jointly and severally agree and undertake to indemnify the Republic of Armenia and Seller, its Affiliates and their respective successors and assignees against and agree to hold each of them harmless from any and all Damages incurred or suffered by the Republic of Armenia or Seller, any of its Affiliates or any of their respective successors and assignees arising out of any Warranty Breach or breach of covenant or agreement made or to be performed by Buyer or ContourGlobal pursuant to this Agreement;</p>	<p>(բ) Գնորդը և ՔոնթուրԳլոբալը միասին և առանձին-առանձին համաձայնում և պարտավորվում են փոխհատուցել ՀՀ և Վաճառողին, Վաճառողի հետ Փոխկապակցված Անձանց, նրանց իրավահաջորդներին ու նրանցից իրավունքների զիջման ճանապարհով իրավունքներ ստացած Անձանց, ինչպես նաև համաձայնում և պարտավորվում են գերծ պահել նրանց բոլոր այն Վնասներից, որոնք կարող են նրանց համար ծագել կամ որոնք նրանք կարող են կրել Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտման, սույն Պայմանագրի համաձայն Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի կողմից ստանձնած և Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի կողմից կատարման ենթակա պարտավորությունները կամ համաձայնությունները չկատարելու կամ լախստելու հետևանքով,</p>
<p><i>provided</i> that with respect to indemnification for such Warranty Breaches, (i) Buyer and ContourGlobal shall not be liable unless the aggregate amount of Damages with respect to such Warranty Breaches exceeds AMD 238,370,000, equivalent of USD 500,000 and (ii) Buyer’s and ContourGlobal’s maximum aggregate liability for all such Warranty Breaches shall not exceed AMD 3,337,180,000, equivalent of USD 7 million.</p>	<p>պայմանով, որ, սակայն, Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտման համար փոխհատուցում վճարելու դեպքում (i) Գնորդի և ՔոնթուրԳլոբալի պատասխանատվությունը կրացակայի, եթե Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտման հետևանքով առաջացած Վնասների ընդհանուր գումարը չգերազանցի 238,370,000 ՀՀ դրամը, որը համարժեք է 500 000 ԱՄՆ Դոլարին, իսկ (ii) Տրված Երաշխիքների ու Հավաստիքների Խախտման համար Գնորդի և ՔոնթուրԳլոբալի պատասխանատվության առավելագույն ընդհանուր չափը չի գերազանցի 3,337,180,000 ՀՀ դրամը, որը համարժեք է 7 միլիոն ԱՄՆ Դոլարին:</p>
<p><i>provided further</i> that the threshold and liability caps in AMD set forth in the paragraph above shall be indexed from time to time pursuant to the USD/AMD exchange rate set out in Section 2.03(c), <i>provided</i></p>	<p>և պայմանով, որ ՀՀ դրամով արտահայտված նշված սահմանային գումարները պետք է ժամանակ առ ժամանակ ինդեքսավորվեն՝ կիրառելով 2.03(գ) ենթակետով նախատեսված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը, և</p>

<p><i>further</i> that any such indexation shall not result in the threshold and liability caps being below the amount previously calculated as due and payable pursuant to, and at the time of such calculation, compliant with, this Section 12.02(b).</p>	<p>պայմանով, որ ինդեքսավորման արդյունքում ստացված գումարը չպետք է պակաս լինի սույն Պայմանագրի 12.02 (բ) ենթակետի համաձայն հաշվարկված և վճարման ենթակա գումարից: Սույն Կետով նախատեսված իրավունքները և պարտականությունները ծագում են Գործարքի Ավարտման Օրը և շարունակում են գործել դրանից հետո:</p>
<p>Section 12.03. <i>Third Party Claim Procedures.</i> (a) The party seeking indemnification under Section 12.02 (the “Indemnified Party”) agrees to give prompt notice in writing to the party against whom indemnity is to be sought (the “Indemnifying Party”) of the assertion of any claim or the commencement of any suit, action or proceeding by any third party (“Third Party Claim”) in respect of which indemnity may be sought under such Section. Such notice shall set forth in reasonable detail such Third Party Claim and the basis for indemnification (taking into account the information then available to the Indemnified Party). The failure to so notify the Indemnifying Party shall not relieve the Indemnifying Party of its obligations hereunder, except to the extent such failure shall have prejudiced the Indemnifying Party.</p>	<p>Կետ 12.03. <i>Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողությունների ղեկարմ փոխհատուցում ստանալու կարգը:</i> (ա) 12.02 Կետի համաձայն փոխհատուցում պահանջելու իրավունք ունեցող կողմը (այսուհետ՝ «Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմ») համաձայնում է գրավոր կերպով անհապաղ ծանուցել այն կողմին, ումից ցանկանում է փոխհատուցում ստանալ (այսուհետ՝ «Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմ»), երրորդ անձանց կողմից այնպիսի հայցեր, պահանջներ կերկայացվելու կամ երրորդ անձանց կողմից այնպիսի վարույթներ սկսելու մասին (այսուհետ՝ «Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողություններ»), որոնց ղեկարմ Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմն իրավունք ունի փոխհատուցում վճարելու պահանջ ներկայացնել: Այդ ծանուցման մեջ պետք է ողջամիտ մանրամասնությամբ շարադրված լինեն Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողությունների բնույթը և փոխհատուցում պահանջելու հիմքերը (հաշվի առնելով տվյալ պահին Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմին հայտնի տեղեկությունների բնույթն ու ծավալը): Նշված ծանուցումը չներկայացվելու դեպքում Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմն ազատվում է իր ստանձնած պարտավորություններից այնքանով, որքանով վերջինս կարող է վնաս կրած լինել նշված ծանուցումը չներկայացվելու հետևանքով:</p>
<p>(b) The Indemnified Party shall be entitled to assume and maintain control of, and the</p>	<p>(բ) Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմն իրավունք ունի ստանձնել և</p>

<p>Indemnifying Party shall be entitled to participate in, and be consulted in connection with, the defense of any Third Party Claim. Each party shall cooperate, and cause their respective affiliates to cooperate, in the defense or prosecution of any Third Party Claim and shall furnish or cause to be furnished such records, information and testimony, and attend such conferences, discovery proceedings, hearings, trials or appeals, as may be reasonably requested in connection therewith.</p>	<p>վերահսկողություն իրականացնել Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողությունների հիմքով սկսված գործերի պաշտպանության նկատմամբ: Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմն իրավունք ունի մասնակցել այդ գործերի պաշտպանության իրականացմանը: Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմը պարտավոր է նշված գործերի պաշտպանությունն իրականացնելու կապակցությամբ խորհրդակցել Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմի հետ:</p> <p>Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողությունների հիմքով գործեր լինելու դեպքում Կողմերը պարտավոր են համագործակցել միմյանց հետ և պարտավոր են ապահովել, որպեսզի իրենց հետ Փոխկապակցված Անձիք նույնպես ցուցաբերեն պահանջվող համագործակցությունը այդ գործերի պաշտպանությունն իրականացնելու կամ այդ գործերի առնչությամբ իրենց իրավունքներն ու պահանջները ներկայացնելու կապակցությամբ: Կողմերը պարտավոր են նաև միմյանց տրամադրել և ապահովել, որպեսզի տրամադրվեն այդ կապակցությամբ ողջամտորեն անհրաժեշտ համարվող բոլոր տեղեկությունները, գրառումները, վկայությունները, մասնակցել այդ կապակցությամբ ողջամտորեն անհրաժեշտ համարվող բոլոր խորհրդակցություններին, նախնական նիստերին, լսումներին, դատական կամ բողոքարկման այլ գործերին:</p>
<p>(c) The Indemnifying Party shall not be liable for any Damage to the extent it arises or increases as a result of a fault or negligence of the Indemnified Party in the conduct of a Third Party Claim (having regard in particular to any opinion or advice expressed by the Indemnifying Party pursuant to the consultation process envisaged under paragraph (b) above).</p>	<p>(ը) Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմն պատասխանատու չէ այն Վնասների համար, որոնք առաջացել կամ ավելացել են Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմի՝ Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողությունների առնչությամբ պաշտպանության իրականացման ընթացքում թույլ տված սխալի կամ անփութության արդյունքում (հաշվի առնելով Փոխհատուցում</p>

	<p>Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմի վերոնշյալ (բ) կետի համաձայն տված ցանկացած կարծիք և խորհուրդ):</p>
<p>Section 12.04. <i>Direct Claim Procedures.</i> In the event an Indemnified Party has a claim for indemnity under Section 12.02 against an Indemnifying Party that does not involve a Third Party Claim, the Indemnified Party agrees to give prompt notice in writing of such claim to the Indemnifying Party. Such notice shall set forth in reasonable detail such claim and the basis for indemnification (taking into account the information then available to the Indemnified Party). The failure to so notify the Indemnifying Party shall not relieve the Indemnifying Party of its obligations hereunder, except to the extent such failure shall have materially and adversely prejudiced the Indemnifying Party. If the Indemnifying Party does not notify the Indemnified Party within 30 days following the receipt of a notice with respect to any such claim that the Indemnifying Party disputes its indemnity obligation to the Indemnified Party for any Damages with respect to such claim, such Damages shall be conclusively deemed a liability of the Indemnifying Party and the Indemnifying Party shall promptly pay to the Indemnified Party any and all Damages arising out of such claim. If the Indemnifying Party has timely disputed its indemnity obligation for any Damages with respect to such claim, the parties shall proceed in good faith to negotiate a resolution of such dispute and, if not resolved through negotiations, such dispute shall be resolved in accordance with Section 14.07.</p>	<p>Կետ 12.04. <i>Ուղղակի պահանջների հիմքով փոխհատուցում ստանալու կարգը:</i> Եթե Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմը Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմից սույն Պայմանագրի 12.02 Կետի համաձայն Երրորդ Անձանց Կողմից Ձեռնարկված Գործողություններից չբխող հիմքերով փոխհատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունի, ապա Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմը պարտավոր է այդ մասին գրավոր կերպով անհապաղ տեղյակ պահել Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմին: Այդ ծանուցման մեջ ողջամիտ մանրամասնությամբ պետք է շարադրված լինեն պահանջի բնույթը և փոխհատուցում պահանջելու հիմքերը (հաշվի առնելով տվյալ պահին Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմին հայտնի տեղեկությունների բնույթն ու ծավալը): Նշված ծանուցումը չներկայացվելու դեպքում Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմն ազատվում է իր ստանձնած պարտավորություններից այնքանով, որքանով վերջինս կարող է էական և անցանկալի վնաս կրած լինել նշված ծանուցումը չներկայացվելու հետևանքով: Եթե Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմը նշված ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում չի ծանուցում Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմին, որ վիճարկում է այդ վնասները հատուցելու վերաբերյալ ներկայացված պահանջը, ապա այդ պարտավորությունը կհամարվի մեկընդմիջտ և վերջնականապես ընդունված Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմի կողմից: Այդ պարագայում Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմը պարտավոր է անհապաղ</p>

	<p>փոխհատուցել պահանջվող Վնասները, իսկ եթե Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմը ժամանակին վիճարկել է Փոխհատուցում Պահանջելու Իրավունք Ունեցող Կողմի կողմից Վնասները փոխհատուցելու վերաբերյալ ներկայացված պահանջը, ապա Կողմերը բարեխղճորեն կրանակցեն վեճը լուծելու համար, իսկ բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում, վեճերը կքննվեն և կլուծվեն սույն Պայմանագրի 14.07 Կետով սահմանված կարգի համաձայն:</p>
<p>ARTICLE 13 TERMINATION</p>	<p>ՀՈԴՎԱԾ 13 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ</p>
<p>Section 13.01. <i>Grounds for Termination.</i> This Agreement may be terminated at any time prior to the Closing:</p>	<p>Կետ 13.01. <i>Պայմանագրի լուծման հիմքերը:</i> Նախքան Գործարքի Ավարտը սույն Պայմանագիրը ցանկացած ժամանակ կարող է լուծվել</p>
<p>(a) by mutual written agreement of Seller and Buyer;</p>	<p>(ա) Վաճառողի և Գնորդի փոխադարձ գրավոր համաձայնությամբ,</p>
<p>(b) by either Seller or Buyer if the Closing shall not have been consummated on or before the seventy-fifth (75) calendar day from the date hereof (the “Long Stop Date”); or</p>	<p>(բ) Վաճառողի կամ Գնորդի կողմից, եթե Գործարքի Ավարտը տեղի ունեցած չլինի ստորագրման օրվանից հետո յոթանասունհինգ (75) օրացուցային օրվա ընթացքում կամ այդ օրը (այսուհետ՝ «Վերջնաժամկետ»), կամ</p>
<p>(c) by either Seller or Buyer if there shall be any Applicable Law that makes consummation of the transactions contemplated hereby illegal or otherwise prohibited or if consummation of the transactions contemplated hereby would violate any final and non-appealable decision by a court or arbitral tribunal or any similar decision not susceptible of being stayed or suspended, any decree or order of any Governmental Authority having competent jurisdiction.</p>	<p>(գ) Վաճառողի կամ Գնորդի կողմից, եթե սույն Պայմանագրով նախատեսված գործարքների իրականացումը կարող է հակասօրինական կամ այլ կերպ արգելված լինել Կիրառելի Օրենսդրության համաձայն, կամ եթե սույն Պայմանագրով նախատեսված գործարքների կատարման արդյունքում կարող են խախտվել դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված վերջնական որոշումները, որոնք ենթակա չեն բողոքարկման, կամ նմանատիպ այլ որոշումներ, որոնց գործողությունը չի կարող կասեցվել, կամ իրավասու Իշխանական Մարմինների որոշումները, վճիռները կամ հրամանները:</p>
<p>The party desiring to terminate this</p>	<p>Սույն Պայմանագրի 13.01(բ) կամ 13.01(գ)</p>

<p>Agreement pursuant to Section 13.01(b) or Section 13.01(c) shall give notice of such termination to the other party.</p>	<p>ենթակետերի համաձայն Պայմանագիրը լուծել ցանկացող կողմը պարտավոր է այդ մասին ծանուցել մյուս կողմին:</p>
<p>Section 13.02. <i>Effect of Termination.</i> If this Agreement is terminated as permitted by Section 6.04, Section 6.11 or Section 13.01, such termination shall be without liability of either party (or any stockholder, director, officer, employee, agent, consultant or representative of such party) to the other party to this Agreement. The provisions of Section 14.07 shall survive any termination hereof.</p>	<p>Կետ 13.02. <i>Պայմանագիրը լուծելու հետևանքները:</i> Սույն Պայմանագիրը 6.04 Կետի, 6.11 Կետի կամ 13.01 Կետի համաձայն լուծվելու դեպքում, Կողմերը (կողմերի բաժնետերերը, տնօրենները, ղեկավար անձիք, աշխատակիցները, գործակալները, խորհրդատուները և ներկայացուցիչները) պատասխանատվության չեն ենթարկվի: Սույն Պայմանագրի 14.07 Կետը կշարունակի գործել նաև սույն Պայմանագիրը լուծված լինելուց հետո:</p>
<p style="text-align: center;">ARTICLE 14 MISCELLANEOUS</p>	<p style="text-align: center;">ՀՈԴՎԱԾ 14 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ</p>
<p>Section 14.01. <i>Notices.</i> All notices, requests and other communications to any party hereunder shall be in writing, including via email (with a copy via email, which shall not constitute notice) and shall be given,</p>	<p>Կետ 14.01. <i>Ծանուցումներ:</i> Սույն Պայմանագրի շրջանակներում տրամադրվող բոլոր ծանուցումները, գրությունները և հարցումները պետք է լինեն գրավոր ներառյալ էլ. փոստային հաղորդագրության տեսքով (էլ. փոստային հաղորդագրությանը պատճենն ուղարկելով, ինչը չի դիտվում որպես ծանուցում) և ուղարկվեն</p>
<p>if to Buyer, to:</p>	<p>Գնորդի դեպքում</p>
<p>ContourGlobal Hydro Cascade 9, G. Lusavorich Str. Yerevan 0015, Armenia</p> <p>Attention: Garry Levesley,</p> <p>Director E-mail: garry.levesley@contourglobal.com</p>	<p>ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015</p> <p>Ում Գարի Լևեսլի Տնօրեն Էլ.փոստ garry.levesley@contourglobal.com</p>
<p>with a copy to:</p>	<p>Կրկնօրինակն ուղարկելով</p>
<p>Ameria 9, G. Lusavorich Str. Yerevan 0015 Armenia Attention: Head of Legal Practice</p>	<p>Ամերիա Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015 Հայաստան Ում Իրավական ծառայությունների ղեկավարին</p>

E-mail: legal@ameria.am	Էլ. փոստ legal@ameria.am
if to ContourGlobal, to:	ՔոնթուրԳլոբալի դեպարտմ
ContourGlobal Terra Holdings SARL 33, rue du Puits Romain L-8070 Bertrange Luxembourg Attention: [●] E-mail: [●]	«ՔոնթուրԳլոբալ Տերրա Հոլդինգս Էս-Ա-Էր-Էլ Պյուի Ղոմեն փող., 33 L-8070 Բերտրան Լյուքսեմբուրգ Ում [●] Էլ. Փոստ՝ [●]
And	և
ContourGlobal Hydro Cascade 9, G. Lusavorich Str. Yerevan 0015, Armenia Attention: Garry Levesley, Director E-mail: garry.levesley@contourglobal.com	ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015 Ում Գարի Լևեսլի, Տնօրեն Էլ.փոստ garry.levesley@contourglobal.com
with a copy to:	Կրկնօրինակն ուղարկելով
Davis Polk & Wardwell LLP 450 Lexington Avenue New York, NY 10017 United States of America Attention: Joseph P. Hadley E-mail: joseph.hadley@davispolk.com	Դեյվիս Փոլք ընդ Վարդվել Էլ-Էլ-փի 450 Լեքսինգտոն Ավենյու Նյու Յորք, NY 10017 Ամերիկայի Միացյալ Նահանգներ Ում Ջոզեֆ Հեդլի Էլ. փոստ joseph.hadley@davispolk.com
And	և
Davis Polk & Wardwell LLP 121, avenue des Champs- Elysées 75008 Paris France Attention: Arnaud Pérès	Դեյվիս Փոլք ընդ Վարդվել Էլ-Էլ-փի 121, Ավրնյու Շանզ-Էլիզե, 75008, Փարիզ, Ֆրանսիա Ում Առնո Պերես Էլ. Փոստ

E-mail: arnaud.peres@davispolk.com	arnaud.peres@davispolk.com
And	և
Ameria 9, G. Lusavorich Str. Yerevan 0015 Armenia Attention: Head of Legal Practice E-mail: legal@ameria.am	Ամերիա Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան 0015 Հայաստան Ում Իրավական ծառայությունների ղեկավարին Էլ. փոստ legal@ameria.am
if to Seller, to:	Վաճառողի դեպքում
Vorotan Complex of Hydro Power Plants 2 G.Tatevatsi str., Goris 3201, Syunig Armenia Attention: Chief Executive Officer E-mail: vorotanges@rambler.ru	Որոտան Հիդրոէլեկտրակայանների Համալիր Գ. Տաթևացի 2, Գորիս 3201, Սյունիքի մարզ, ՀՀ Ում Գլխավոր գործադիր տնօրեն Էլ. փոստ vorotanges@rambler.ru
with a copy to:	Կրկնօրինակն ուղարկելով
[•] Attention: [•] E-mail: [•]	[•] Ում [•] Էլ. փոստ. [•]
if to the Republic of Armenia, to:	ՀՀ դեպքում
Ministry of Energy of the Republic of Armenia Government House 2, Republic Square, 375010, Yerevan Armenia Attention: Minister of Energy E-mail: minenergy@minenergy.am	ՀՀ Էներգետիկայի Նախարարություն Կառավարական տուն 2, Հանրապետության Հրապարակ, 375010, Երևան, Հայաստան Ում Էներգետիկայի նախարար Էլ. փոստ minenergy@minenergy.am
Ministry of Justice of the Republic of Armenia 41a Halabyan str. 0079 Yerevan Armenia	ՀՀ Արդարադատության Նախարարություն Հալաբյան 41ա, 0079 Երևան Հայաստան Ում Արդարադատության նախարար

Attention: Minister of Justice	
with a copy to:	Կրկնօրինակն ուղարկելով
[•] Attention: [•] E-mail: [•]	[•] Ում [•] Էլ. փոստ. [•]
or such other address or email address as such party may hereafter specify for the purpose by notice to the other parties hereto. All such notices, requests and other communications shall be deemed received on the date of receipt by the recipient thereof if received prior to 5:00 p.m. in the place of receipt and such day is a Business Day in the place of receipt. Otherwise, any such notice, request or communication shall be deemed not to have been received until the next succeeding Business Day in the place of receipt.	կամ Կողմերից մեկի կողմից մյուս Կողմերին ծանուցմամբ տրված մեկ այլ հասցեով կամ էլ. փոստի հասցեով: Ծանուցումները, գրությունները և հարցումները համարվում են ստացված ստացող կողմի կողմից դրանք ստանալու օրը, եթե ստացվել են ստացման վայրի ժամանակով նախքան ժամը 17:00-ը, և եթե այդ օրը ստացման վայրում հանդիսանում է Աշխատանքային Օր: Հակառակ պարագայում, դրանք համարվում են ստացված ստացման վայրում Աշխատանքային Օր համարվող հաջորդ օրը:
Section 14.02. <i>Amendments and Waivers.</i> (a) Any provision of this Agreement may be amended or waived if, but only if, such amendment or waiver is in writing and is signed, in the case of an amendment, by each party to this Agreement, or in the case of a waiver, by the party against whom the waiver is to be effective.	Կետ 14.02. <i>Պայմանագրի մեջ փոփոխություններ կարարելու և դրանով վերապահված իրավունքներից հրաժարվելու կարգը:</i> (ա) Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել, դրանով վերապահված իրավունքներից հնարավոր է հրաժարվել, փոփոխությունների դեպքում կողմերի կողմից ստորագրված, իսկ իրավունքներից հրաժարվելու դեպքում, հրաժարվող կողմի կողմից ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով:
(b) No failure or delay by any party in exercising any right, power or privilege hereunder shall operate as a waiver thereof nor shall any single or partial exercise thereof preclude any other or further exercise thereof or the exercise of any other right, power or privilege. The rights and remedies herein provided shall be cumulative and not exclusive of any rights or remedies provided by law.	(բ) Սույն Պայմանագրով վերապահված իրավունքները կողմերից մեկի կողմից չիրականացնելը կամ ուշացմամբ իրականացնելը, սույն Պայմանագրով նախատեսված լիազորություններից ու արտոնություններից չօգտվելը կամ ուշացմամբ օգտվելը չի կարող դիտվել որպես հրաժարում այդ իրավունքներից, լիազորություններից կամ արտոնություններից: Այդ իրավունքների միանգամյա կամ մասնակի իրականացումը,

	<p>այդ լիազորություններից կամ արտոնություններից միանգամյա կամ մասնակի օգտվելը չի կարող բացառել հետագայում այդ կամ այլ իրավունքներն իրականացնելու կամ այդ կամ այլ լիազորություններից ու արտոնություններից օգտվելու հնարավորությունը: Սույն Պայմանագրով վերապահվող իրավունքները և իրավական պաշտպանության միջոցները լրացնում են օրենքով վերապահված իրավունքների ու իրավական պաշտպանության միջոցներին և չեն բացառում դրանց գոյությունը:</p>
<p>Section 14.03. <i>Expenses.</i> All costs and expenses incurred in connection with the negotiation, execution, registration and notarization of this Agreement or any other similar expenses shall be paid by the party incurring such cost or expense, without prejudice to the provisions of Article 9 (Tax Matters). Notwithstanding the above, the Buyer shall reimburse costs and expenses reasonably incurred by Seller and/or the Republic of Armenia in connection with the transaction contemplated by this Agreement up to a total amount of USD 100,000, provided that appropriate documentation supporting such costs is provided to Buyer.</p>	<p>Կետ 14.03. <i>Ծախսեր:</i> Սույն Պայմանագիրը քննարկելու, կնքելու, գրանցելու և նոտարական վավերացում կատարելու կապակցությամբ կրած և նմանատիպ բոլոր այլ ծախսերը պետք է վճարվեն դրանք կրած Կողմի կողմից: Նշված դրույթը չի հակադրվում և որևէ անդրադարձ չի կարող ունենալ սույն Պայմանագրի 9 Հոդվածի (Հարկեր) դրույթների վրա: Չնայած վերոգրյալին, Գնորդը պարտավորվում է մինչև 100 000 ԱՄՆ դոլարի սահմաններում փոխհատուցել Վաճառողի և/կամ ՀՀ կողմից կրած բոլոր ողջամիտ ծախսերը, պայմանով, որ վերջիններս Գնորդին ներկայացնեն այդ ծախսերը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:</p>

<p>Section 14.04. <i>Successors and Assigns. Third Parties.</i> The provisions of this Agreement shall be binding upon and inure to the benefit of the parties hereto and their respective successors and assigns; provided that no party may assign, delegate or otherwise transfer any of its rights or obligations under this Agreement without the consent of each other party hereto; except that without prejudice to the terms of any Direct Agreement as may be entered into pursuant to Section 6.05, (a) prior to the Closing, Buyer may assign its rights under this Agreement to one or more Affiliates or designees of Buyer, subject to receipt of the prior written consent of the Republic of Armenia (not to be unreasonably withheld) and (b) Buyer may grant a security interest under UCC Article 9 in or otherwise assign its rights to this Agreement to any Lender or any other party providing Debt Financing to Buyer or its Affiliates provided that no such transfer or assignment will relieve Buyer or its successors of its obligations hereunder or enlarge, alter or change any obligation of any other party hereto or due to Buyer. For the avoidance of doubt, the provisions of this Agreement applicable to the Indemnifying Party shall survive any sale, divestiture or other disposition of the Purchased Assets by the Buyer including any change of control and/or ownership of Buyer, only where and if the Indemnifying Party expressly consents to such survival upon such sale, divestiture or other disposition.</p>	<p>Կետ 14.04. <i>Իրավահաջորդներ, Իրավունքները զիջելու ճանապարհով իրավունքներ սրացած Անձիք: Երրորդ Անձիք:</i> Սույն Պայմանագիրը պարտադիր է կատարման և իրավունքներ է ստեղծում միայն Կողմերի, նրանց իրավահաջորդների և բոլոր այն Անձանց համար, ում կարող են իրավունքների զիջման ճանապարհով փոխանցվել Կողմերի իրավունքները, պայմանով, սակայն, որ Կողմերից ոչ ոք իրավունք չունի առանց մյուս Կողմերի համաձայնության այլ Անձանց զիջել կամ փոխանցել սույն Պայմանագրով իրեն վերապահված իրավունքները կամ սույնով Պայմանագրով իր կողմից ստանձնած պարտավորությունները: Չնայած Նախագծին Մասնակցող Տարբեր Անձանց Միջև Ողղակի Պայմանագրային Հարաբերություններ Հաստատելու Վերաբերյալ Պայմանագրին, որը կարող է կնքվել սույն Պայմանագրի 6.05 կետի համաձայն, և որպես բացառություն վերոգրյալ կանոնից (ա) նախքան Գործարքի Ավարտը Գնորդը կարող է սույն Պայմանագրով իրեն վերապահված իրավունքները փոխանցել իր հետ Փոխկապակցված մեկ կամ մի քանի այլ Անձանց կամ իր կողմից նշանակված մեկ կամ մի քանի Անձանց՝ ՀՀ նախնական գրավոր համաձայնությամբ (չի կարող անհիմն մերժվել) և (բ) Միասնական Առևտրային Օրենսգրքի 9-րդ Հոդվածի համաձայն Գնորդին կամ Գնորդի հետ Փոխկապակցված Անձանց Փոխառու Միջոցներ տրամադրած ցանկացած Փոխառուի կամ ցանկացած մեկ այլ Անձի օգտին գրավադրել կամ այլ կերպ նրանց զիջել սույն Պայմանագրից բխող իր իրավունքները պայմանով, որ բոլոր դեպքերում Գնորդը կամ նրա իրավահաջորդները չեն ազատվի սույն Պայմանագրով իր ստանձնած պարտավորություններից, և պայմանով, որ չեն ընդլայնվի կամ փոփոխվի սույն Պայմանագրի կողմ հանդիսացող այլ Անձանց պարտավորությունները, ինչպես նաև բոլոր այն պարտավորությունները, որոնց մասով Գնորդը հանդես է գալիս որպես պարտատեր:</p>
---	--

<p>Nothing expressed or implied in this Agreement is intended or shall be construed to confer upon or give any Person, other than the parties hereto, any right or remedies under or by reason of this Agreement, without prejudice to the rights and remedies conferred to the parties' respective successors and assigns in accordance with Section 14.04 above.</p>	<p>Տարակարծություններից խուսափելու նպատակով միանշանակ հստակեցվում է, որ Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմի նկատմամբ կիրառվող սույն պայմանագրի դրույթները կշարունակեն մնալ ուժի մեջ Գնորդի կողմից Վաճառվող Գույքը վաճառվելու կամ այլ կերպ օտարվելու, ինչպես նաև Գնորդ ընկերության վերահսկողություն ունեցող բաժնետիրոջ և/կամ Գնորդ ընկերության բաժնետերերի փոփոխության դեպքում՝ միայն եթե Փոխհատուցում Վճարելու Պարտավորություն Ունեցող Կողմը ուղղակիորեն տալիս է իր համաձայնությունը Գույքը վաճառվելու կամ այլ կերպ օտարվելու դեպքում՝ այդ դրույթների ուժի պահպանմանը:</p> <p>Սույն Պայմանագրում ուղղակիորեն կամ անուղղակիորեն նշված որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել, որպես սույն Պայմանագրի Կողմերից բացի այլ անձանց սույն Պայմանագրից կամ դրա արդյունքում ծագող՝ իրավունքների և իրավունքների պաշտպանության միջոցների տրամադրում: Նշված դրույթը չի հակադրվում և որևէ անդրադարձ չի կարող ունենալ Կողմերի Իրավահաջորդներին և Իրավունքները զիջելու ճանապարհով իրավունքներ ստացած Անձանց սույն Պայմանագրի 14.04 կետի համաձայն ներկայացված իրավունքների և իրավունքների պաշտպանության միջոցների վրա:</p>
<p>Section 14.05. <i>Governing Law.</i> This Agreement including any non-contractual obligations arising out of or in connection with this Agreement shall be governed by and construed in accordance with the laws of England.</p>	<p>Կետ 14.05. <i>Պայմանագրային հարաբերությունների նկատմամբ կիրառվող օրենքը:</i> Սույն Պայմանագիրը, ինչպես նաև դրանից ծագող կամ դրա հետ կապված ոչ պայմանագրային պարտականությունները ղեկավարվում և մեկնաբանվում է Անգլիայի իրավունքի համաձայն:</p>
<p>Section 14.06. <i>Waiver of Sovereign Immunity.</i> The Republic of Armenia, Seller, Buyer and ContourGlobal each unconditionally and irrevocably agrees that the execution, delivery and performance by each of them of this Agreement constitute private and commercial acts. The Republic</p>	<p>Կետ 14.06. <i>Հրաժարում սուվերեն իմունիտետից:</i> ՀՀ, Վաճառողը, Գնորդը և ԲոնթուրԳլոբալն առանց նախապայմանների և մեկընդմիջտ համաձայնում և ընդունում են, որ իրենց կողմից սույն Պայմանագրի կնքելը և կատարելը մասնավոր, առևտրային գործարքներ են: ՀՀ,</p>

<p>of Armenia, Seller, Buyer and ContourGlobal each hereby irrevocably and unconditionally agrees that (a) should any proceedings be brought against the Republic of Armenia, Seller, Buyer or ContourGlobal or the assets of any one of them if such proceedings are instituted by Buyer, ContourGlobal, the Republic of Armenia or the Seller in any jurisdiction of the Republic of Armenia, United States of America, Canada, Australia, Russian Federation, UK or a member-state of the European Union (a “Qualified Jurisdiction”) in connection with this Agreement, no claim of immunity from such proceedings will be made by or on behalf of either the Republic of Armenia or Seller or Buyer or ContourGlobal or in respect of any of the assets of any one of them; (b) each waives, to the fullest possible extent by Applicable Law, any right of immunity which it or any of its assets now has or may in the future have in any Qualified Jurisdiction in connection with any such proceedings; and (c) each consents generally in respect of the enforcement of any judgment or award against it or any of its assets in any such proceeding in any Qualified Jurisdiction and to the giving of any relief or the issue of any process in connection with such proceedings (including without limitations the making, enforcement or execution against or in respect of any of its assets).</p>	<p>Վաճառողը, Գնորդը և ՔոնթուրԳլոբալն առանց նախապայմանների և մեկընդմիջտ (ա) համաձայնում և ընդունում են, որ սույն Պայմանագրի կապակցությամբ ՀՀ, Վաճառողի, Գնորդի կամ ՔոնթուրԳլոբալի կամ նրանցից յուրաքանչյուրի գույքի դեմ՝ Գնորդի, ՔոնթուրԳլոբալի, ՀՀ կամ Վաճառողի կողմից՝ ՀՀ, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Ավստրալիայի, Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Թագավորության կամ Եվրամիության անդամ որևէ երկրի օրենսդրության («Թույլատրելի իրավագործություն») համաձայն հարուցված հայց կամ պահանջ ներկայացվելու, վարույթ սկսվելու դեպքում, իրենց կամ իրենց գույքի կապակցությամբ ինունիստետ չեն վկայակոչի և չեն պահանջի, ներառյալ այլ Անձանց միջոցով, (բ) Կիրառելի Օրենսդրությամբ թույլատրելի առավելագույն սահմաններում հրաժարվում են նշված հայցերի, պահանջների և վարույթների կապակցությամբ ներկայումս կամ ապագայում Թույլատրելի իրավագործություն ունեցող երկրում իրենց և իրենց գույքի մասով ունեցած ինունիստետի իրավունքից, և (գ) համաձայնում են, որպեսզի այդպիսի հայցեր կամ պահանջներ բերվելու հիմքով կամ այդպիսի վարույթներում իրենցից յուրաքանչյուրի կամ իրենցից յուրաքանչյուրի գույքի դեմ կայացված դատարանների կամ արբիտրաժային տրիբունալի վճիռները կատարվեն Թույլատրելի իրավագործություն ունեցող երկրներում, որպեսզի դատարանները կամ արբիտրաժային տրիբունալներն իրենց կամ իրենց գույքի դեմ մյուս կողմ(եր)ի պահանջով կարողանան կիրառել որոշակի միջոցներ, որպեսզի դատարանները կամ արբիտրաժային տրիբունալները կարողանան վարույթ ընդունել և ընթացք տալ իրենց դեմ ներկայացված հայցադիմումների և պահանջներին (այդ թվում նաև, որպեսզի դատարանները կամ արբիտրաժային տրիբունալները կարողանան որոշումներ ընդունել և ի կատար ածել տալ իրենցից յուրաքանչյուրի գույք մասով):</p>
--	---

Section 14.07. *Arbitration.* All disputes, controversy or claims arising out of, or in connection with this Agreement (including the breach, termination or invalidity thereof) shall be finally settled under the rules of arbitration of the International Chamber of Commerce (ICC) as in force from time to time (the “**Rules of Arbitration**”) by an arbitral tribunal composed of three (3) arbitrators appointed in accordance with such Rules of Arbitration. The seat of the arbitration shall be Paris, France. The arbitral proceedings shall be conducted in English. All information, documents and testimony offered into evidence during the arbitration shall be offered in the English language and, if necessary, shall be translated into English at the expense of the party offering such information, documents or testimony (without prejudice to the final arbitral decision regarding the allocation of costs). Unless the parties expressly agree in writing to the contrary, the parties shall keep confidential all awards, orders, deliberations, submissions, hearing transcripts as well as all materials submitted by the other parties in the framework of the arbitral proceedings not otherwise in the public domain, save and to the extent that a disclosure may be required of a party by a legal duty, to protect or pursue a legal right or to enforce or challenge an award in legal proceedings before a judicial authority. This undertaking also applies to the arbitrators, the tribunal-appointed experts, the secretary of the arbitral tribunal and the International Court of Arbitration of the ICC.

Կետ 14.07. *Արբիտրաժային Վերապահում:* Սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված բոլոր վեճերը (ներառյալ դրա խախտման, լուծման կամ անվավերության հիմքերից բխող բոլոր վեճերը) պետք է վերջնականապես լուծվեն Առևտրի Միջազգային Պալատի (այսուհետ՝ «ԱՄՊ») արբիտրաժային դատարանի կանոնակարգի համաձայն, (բոլոր այն փոփոխություններով հանդերձ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ կատարվել այդ կանոնակարգում (այսուհետ՝ «Կանոնակարգ»)), Կանոնակարգի համաձայն նշանակված երեք արբիտրների կազմով գործող արբիտրաժային տրիբունալի կողմից: Արբիտրաժի վայրն է ք. Փարիզը՝ Ֆրանսիա: Արբիտրաժային վարույթի լեզուն է անգլերենը: Արբիտրաժային վարույթի ընթացքում որպես ապացույց ներկայացվող բոլոր տեղեկությունները, փաստաթղթերը և վկայությունները պետք է ներկայացվեն և տրամադրվեն անգլերեն լեզվով, իսկ անհրաժեշտության դեպքում դրանք ներկայացրած կամ տրամադրած կողմի հաշվին թարգմանվեն անգլերեն (առանց հաշվի առնելու արբիտրաժային դատարանի վերջնական որոշմամբ սահմանված ծախսերը բաշխելու վերաբերյալ կարգը): Եթե այլ բան գրավոր կերպով նախատեսված չլինի Կողմերի համաձայնությամբ, ապա Կողմերը գաղտնի կպահեն արբիտրաժային տրիբունալի վճիռները, որոշումները, քննարկումները, վարույթի ընթացքում ներկայացված փաստաթղթերը, լսումների արձանագրությունները, ինչպես նաև մյուս Կողմերի կողմից արբիտրաժային վարույթի ընթացքում ներկայացված մյուս բոլոր նյութերը, որոնք հանրությանն այլ կերպ հասանելի չեն, բացառությամբ բոլոր այն դեպքերի, երբ տեղեկությունների հրապարակումը պահանջվում է այս կամ այն Կողմի՝ օրենքով ունեցած պարտավորության համաձայն, կամ երբ բացահայտումը պահանջվում է այս կամ այն Կողմի կողմից դատական կարգով իր

<p>The parties shall negotiate in good faith for a period of thirty (30) days after one party has notified the other of the existence of a dispute before instituting arbitration proceedings.</p> <p>For the avoidance of doubt, dispute resolution under the License (or otherwise pertaining to matters of public administration in Armenia) shall be governed by Armenian Law, and any disputes arising from and in connection with the License (or matters of public administration in Armenia) shall be adjudicated exclusively in Armenian courts and not be subject to arbitration hereunder.</p>	<p>իրավունքների պաշտպանությունն իրականացնելու կամ արբիտրաժային տրիբունալի վճիռը դատական կարգով բողոքարկելու կամ ի կատար ածելու կապակցությամբ: Սույն գաղտնիության դրույթը կիրառելի է նաև արբիտրների, արբիտրաժային տրիբունալի կողմից նշանակված փորձագետների, արբիտրաժային դատարանի քարտուղարի, ԱՄՊ Միջազգային Արբիտրաժային Դատարանի նկատմամբ:</p> <p>Արբիտրաժային Դատարան դիմելու մտադրություն ունեցող կողմը 30 օր առաջ այդ մասին ծանուցում է մյուս կողմին՝ ծանուցման ժամանակահատվածում վեճը փորձելով լուծել բանակցությունների միջոցով:</p> <p>Երկիմաստությունից խուսափելու համար, Լիցենզիայի (կամ այլ կերպ Հայաստանի հանրային կառավարման հարցերի հետ առնչվող) հիման վրա լուծվող վեճը պետք է կարգավորվի Հայկական օրենսդրությամբ, և Լիցենզիայից առաջացող կամ դրա առնչությամբ առաջացող (կամ Հայաստանի հանրային կառավարման հարց) ցանկացած վեճ պետք է լուծվի բացառապես հայկական դատարաններում և չի կարող Արբիտրաժային կարգավորման առարկա լինել:</p>
<p>Section 14.08. <i>Counterparts; Effectiveness; Third Party Beneficiaries.</i> This Agreement may be signed in any number of counterparts, each of which shall be an original, with the same effect as if the signatures thereto and hereto were upon the same instrument. This Agreement shall become effective when each party hereto shall have received a counterpart hereof signed by all of the other parties hereto. Until and unless each party has received a counterpart hereof signed by the other parties hereto, this Agreement shall have no effect and no party shall have any right or obligation hereunder (whether by virtue of any other oral or written agreement or other communication). A Person who is not a</p>	<p>Կետ 14.08. <i>Պայմանագրի օրինակները, ուժի մեջ մտնելը, երրորդ անձ շահառուներ:</i> Սույն Պայմանագիրը կարող է կնքվել ցանկացած քանակությամբ օրինակներով, որոնցից յուրաքանչյուրը բնօրինակ է, այնպես կարծես, եթե դրանց և սույն օրինակի վրա դրված ստորագրությունները դրված լինեին նույն փաստաթղթի վրա: Սույն Պայմանագիրն ուժի մեջ է կմտնի այն օրը, երբ կողմերից յուրաքանչյուրը մյուս բոլոր կողմերից ստացած կլինի Պայմանագրի ստորագրված օրինակները: Մինչ այդ սույն Պայմանագիրն ուժի մեջ մտած չի համարվի, իսկ կողմերից ոչ մեկը Պայմանագրով սահմանված իրավունք կամ պարտականություն չի ունենա (անկախ այն հանգամանքից, թե դրանք բխում են մեկ այլ</p>

<p>party to this Agreement has no right under the English Contracts (Rights of Third Parties) Act 1999, to enforce any term of this Agreement.</p>	<p>բանավոր կամ գրավոր համաձայնությունից, թե մեկ այլ պայմանավորվածությունից): Սույն Պայմանագրի կողմ չհանդիսացող Անձը, Անգլիայի Պայմանագրերի Մասին Օրենքի (Երրորդ անձանց իրավունքները, 1999) համաձայն Պայմանագրի շրջանակներում իրավունքներ ձեռք չի բերում:</p>
<p>Section 14.09. <i>Entire Agreement.</i> This Agreement constitutes the entire agreement between the parties with respect to the subject matter of this Agreement and supersedes all prior agreements and understandings, both oral and written, between the parties with respect to the subject matter of this Agreement. No other term, express or implied, forms part of this Agreement. No usage, custom or course of dealing forms part of or affects this Agreement. The only claim, right or remedy available to a party for a representation expressly set out in this Agreement shall be damages for breach of contract. Each party waives all claims, rights and remedies for all representations made to it by any person before entering this Agreement and not set out in this Agreement. Each party acknowledges that, in deciding to enter this Agreement, it has not relied on any such representation. This Section does not exclude or restrict liability for fraudulent misrepresentation or fraudulent concealment.</p>	<p>Կետ 14.09. <i>Պայմանավորվածությունների ամբողջականությունը:</i> Սույն Պայմանագիրն իրենից ներկայացնում է կողմերի միջև Պայմանագրի խնդրո առարկայի շուրջ ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունների ամբողջականությունը և գերակայում է նույն հարցի շուրջ կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր համաձայնությունների ու պայմանավորվածությունների նկատմամբ (լինեն դրանք գրավոր, թե՛ բանավոր): Այս կապակցությամբ ենթադրվող կամ գրավոր ամրագրված ոչ մի այլ պայման չի կարող սույն Պայմանագրի մաս հանդիսանալ: Ոչ մի ընդունված պրակտիկա կամ գործարար շրջանառության սովորույթ չեն հանդիսանում սույն Պայմանագրի մասը և չեն ազդում դրա վրա: Միակ պահանջը, իրավունքը և իրավունքների պաշտպանության միջոցը, որը սույն Պայմանագրի հավաստիքների համաձայն մի կողմը կարող է մյուսին ներկայացնել պայմանագիրը խախտելու համար վնասների հատուցումն է: Կողմերից յուրաքանչյուրը հրաժարվում է մինչև սույն Պայմանագրի կնքումը կատարված և սույն Պայմանագրում չներկայացված իր հանդեպ որևէ երրորդ անձի ներկայացված պահանջից, իրավունքներից և իրավունքների պաշտպանության միջոցներից: Կողմերից յուրաքանչյուրն ընդունում է, որ սույն Պայմանագիրը կնքելիս չի հիմնվել որևէ նման հավաստիքների վրա: Սույն կետը չի բացառում և չի սահմանափակում պատասխանատվությունը խարդախության նպատակներով կատարված սխալի և քողարկման համար:</p>
<p>Section 14.10. <i>Severability.</i> If any term, provision, covenant or restriction of this</p>	<p>Կետ 14.10. <i>Պայմանագրի դրույթների գործողությունն առանձին-առանձին:</i> Եթե սույն</p>

<p>Agreement is held by a court of competent jurisdiction or other authority to be invalid, void or unenforceable, the remainder of the terms, provisions, covenants and restrictions of this Agreement shall remain in full force and effect and shall in no way be affected, impaired or invalidated so long as the economic or legal substance of the transactions contemplated hereby is not affected in any manner materially adverse to any party. Upon such a determination, the parties shall try to modify this Agreement so as to effect the original intent of the parties as closely as possible in an acceptable manner in order that the transactions contemplated hereby be consummated as originally contemplated to the fullest extent possible.</p>	<p>Պայմանագրի այս կամ այն դրույթը, դրանով նախատեսված այս կամ այն պայմանը, պարտավորությունը, սահմանափակումը իրավասու դատարանի կամ մեկ այլ մարմնի որոշմամբ անվավեր, առոչինչ կամ կատարման համար ոչ պարտադիր ճանաչվի, ապա սույն Պայմանագրի մյուս դրույթները, դրանով սահմանված մյուս պայմանները, պարտավորությունները և սահմանափակումները կշարունակեն մնալ ուժի մեջ, իսկ դրանց նշանակությունն ու ուժը՝ անփոփոխ, քանի դեռ սույն Պայմանագրով նախատեսված գործարքների տնտեսական և իրավական նշանակությունը կողմերից մեկի համար անշահավետորեն չի փոխվել այդ դրույթները, պայմանները, պարտավորությունները կամ սահմանափակումներն անվավեր, առոչինչ կամ կատարման համար ոչ պարտադիր ճանաչվելու հետևանքով: Նման որոշում կայացվելու դեպքում, կողմերը կփորձեն սույն Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք առավել ճշգրտորեն և ընդունելի տեսքով կարտահայտեն կողմերի սկզբնական նպատակները, այնպես որպեսզի հնարավոր լինի սույն Պայմանագրով նախատեսված գործարքները առավելագույնս հնարավորին չափով կյանքի կոչել կողմերի կողմից ի սկզբանե մտահաղացված տեսքով և ձևով:</p>
<p>Section 14.11. <i>Language.</i> This Agreement has been translated into Armenian for convenience purposes, in order to produce a bilingual English and Armenian version. If there is any discrepancy between the English and Armenian versions, the English language version of this Agreement shall prevail.</p>	<p>Կետ 14.11. <i>Պայմանագրի լեզուն:</i> Սույն պայմանագրի հայերեն տարբերակը ստեղծվել է նպատակահարմարության նկատառումներից ելնելով՝ սույն պայմանագիրը երկլեզու տարբերակով՝ անգլերեն և հայերեն, կնքելու համար: Սույն պայմանագրի հայերեն և անգլերեն տեքստերի միջև տարբերություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերենը:</p>
<p>IN WITNESS WHEREOF, the parties hereto have caused this Agreement to be duly executed by their respective authorized officers as of the day and year first above</p>	<p>Ի հավաստումն վերոգրայի, կողմերն իրենց լիազոր ներկայացուցիչների միջոցով կնքեցին սույն Պայմանագիրը սույն Պայմանագրի սկզբնամասում նշված օրը և թվականին:</p>

written.	
----------	--

VOROTAN COMPLEX OF HYDRO POWER
PLANTS CJSC

**ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱԼԻՐ**

By, ի
դեմս՝

Name, անուն՝
Title, պաշտոն՝

THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

By, ի
դեմս՝

Name, անուն՝
Title, պաշտոն՝

CONTOURGLOBAL HYDRO CASCADE CJSC

**ՔՈՆԹՈՒՐԳԼՈՒԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ
ՓԲԸ**

By, ի
դեմս՝

Name, անուն՝
Title, պաշտոն՝

CONTOURGLOBAL TERRA HOLDINGS
SARL

ՔՈՆՏՈՒՐԳԼՈՒԲԱԼ ՏԵՐՐԱ

By, ի
դեմս՝

Name, անուն՝

Title, պաշտոն՝

CG SOLUTIONS GLOBAL HOLDING
COMPANY LLC

**ՍԻ-ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ ԳԼՈՒԲԱԼ ՀՈԼԴԻՆԳ
ԲԱՍՓՆԻ**

By, ի
դեմս՝

Name, անուն՝

Title, պաշտոն՝